

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

891-39

7-

Կ Ի Կ Ո Ս Ը

ՎԻՊԱԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

ՍՈՒՆՆ ԶԵՐԵՎԱՆՈՒՄ

№ 1111 Պատվ. № 1121

000

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մաթ. Դարբինյանի «Կիկոսն» այն գրքերից ե, վորոնք կարիք չունեն վոյ մի հանձնարարականի: Մեր հետհոկտեմբերյան արձակագրության մեջ մենք չգիտենք վոյ մի այլ գիրք, վոր այնքան պարզ, այնքան աշխուժ գրված լինի, վորքան «Կիկոսն» ե: Մական գրքի խոշորագոյն առավելությունն այն ե, վոր նրա մեջ իր պարզ արտացոլումն ե գտել Հայաստանի գուղը քաղաքացիական կռիւիների շրջանում:


Հեղինակը կարողացել ե գեղարվեստական պրիոմների զարմանալի պարզությամբ տալ սոցիալական շերտավորման այն պատկերը, վոր գոյութիւն ունեն չափաստանի գյուղում նոյեմբերյան որերին: Վիպակի թաշուժ սյուժեն յեւ հեղինակի առողջ հումորը գիրքը դարձնում են հետաքրքիր յեւ հեշտ ընթերցանելի:

Մենք ամբողջ սրտով հանձնարարում ենք այս գիրքն աշխատավորական ամենալայն մասսաներին, համոզված, վոր նա կարող ե զարդարանք լինել յուրաքանչիւր բանվորի ու գյուղացու գրադարանի, վոր դժբախտաբար դեռ այնքան ել հարուստ չե մեր քաղաքացիական կռիւիների շրջանից վերցրած պարզ, դյուրամատչելի յեւ գեղարվեստական գրվածքներով:

Յեղիսե Զարեց

23 հուլիսի 1928 թ.

Յերևան



Կ Ի Կ Ո Ս Ը

Վ Ի Պ Ա Կ

I

Անունը Կիրակոս եր. գլուղացիք կրճատել, Կիկոս հյին
կանչում:

Սուսուփուս իրեն գործին մարդ եր. ուրիշի վոչ խերին
եր խառնվում, վոչ շառին: Իր կյանքում գլուղի վոչ մի գործին
չեր մասնակցել, վոչ մի բանի մասին ձեն-ծպտուն չեր հանել:
Գլուղը թեկուզ տակնուվրա լիներ, աշխարհն իրար դար, Կիկոսի
հոգը չեր. իրեն ինչ... Ի՛նչ ուզում ե թող լինի: Յեթե վորեւե մե-
կը նրա մոտ բորբոքված պատմեր ու բողոքեր մի անարդար բա-
նի դեմ, Կիկոսը կամաց զրադ կքաշվեր, վոր իսկի չլի չել, թե
ինչի մասին ե խոսքը: Իսկ յեթե ստիպեյին, վոր կարծիք հայտ-
նի, նա գլուխը տմբոմբացնելով կասեր.

— Աշխարհիս ծուռ բանը հո յմա չեմ դրստելու...

Կիկոսն ամեն բանից ել ուներ. լծկան, կթան, ձի, վոչխար,
մի խոսքով՝ այն ամենը, ինչ պետք ե մի միջակ գլուղացու: Տու-
նը կառավարելու հոգսը կինն եր քաշում, խարջ ու պարտքի հա-
շիվը նրա ձեռին եր. Կիկոսը միայն դրսի աշխատանքին եր: Տանն
ել ինչ ուզում ելին անեն—առնեն, ծախեն, դեն ածեն, թե տուն
կրեն, միևնույն եր նրա համար, ձեն չեր հանի, վոչ խեր կխո-
սեր, վոչ շառ: Միայն թե իրեն մի կտոր հաց տային ուտելու,
պատուվածը կարկատեյին ու մաշված տրեխը նորոգեյին:

Ինքն եր ու եղը: Յերկուսն ել համբերատար, յերկուսն ել
լուռ,—իրար նման, իրարից անբաժան: Միմյանցից տարբերվում
ելին միայն արտաքին տեսքով: Են վոր եղն եր, սիրուն եր, ինչ-
քան եղը սիրուն կլինի. են վոր Կիկոսն եր, տգեղ եր, ինչքան
մարդ տգեղ կլինի: Կիկոսի գլուխը յերկհարկանի չեր ու քա-
ռակուսի, վոնց վոր յերկու դղում տաշած, իրար վրա դրած: Ծա-
կատը տափակ եր—յեզան ճակատի պես, քիթը մեջքից կոտրած

ու պինչը վեր ցցված խողի դնչի պես, քթածակերը լայն, վոնց վոր գուռնի ծայրը, իսկ աչքերն ենքան ծուռ, շղիկ հյին, վոր հետը խոսելիս չեյր իմանում՝ քեզ ե նալում թե իր կոտրած քթի արմատին։ Բայց Կիկոսի տղեղ լինելը բնավ նրան չեւ անհաստացնում։ Նա միայն մի անգամ տղեղութեան դառնութեանը ճաշակեց, և դա են որն եր, յերբ խոսք բաց արին նրան պըսակելու մասին, ու պարզվեց, վոր գյուղում վոչ մի մարդ նրան չի ուզում աղջիկ տալ։ Բայց եղ ել ճարվեց։ Ծաղկից մի աչքը հատ ընկած՝ Թագագյուղին միջնորդով ուղեցին, և հարս ու փեսա իրար յերես տեսան հարսանիքը վերջանալուց հետո միայն։

Կիկոսն արդեն քառասունն անց մարդ եր, բայց դեռ վոչ վոք չեւ տեսել նրան մի անգամ կամ բարկացած, կամ կռվելիս կամ հայհոյելիս։ Նա չեւ բարկանում մինչև անգամ իր հշի վրա, վորը յերբեմն համառում եր, ճամպի մեջտեղը կանգնում ու չեւ ուզում վոտը փոխի։ Կիկոսը մի յերկու անգամ «թոշ, թոշ» եւ անում ու նկատելով, վոր եղ տեղից չի շարժվում, մոտը նստում եր, մինչև իշի «կամքը թամամ ըլի»։ Համբերութեամբ դերազանցելով իր իշին անգամ, նա ամեն բանի հաղթում եր, դրա հահար հլ գլխին մի ճերմակ մաղ անգամ չունեւ։

Կիկոսն իր կյանքում լաց չեւ յեղել։ Թե հարազատներից մեռնող եր լինում, նա ասում եր.

— Մեռնողի հետ հո չենք մեռնելու. աստված տվեց, աստված ել տարավ...

Իսկ յերբ իր սիրելի եղը սատկեց, նա մի որ միայն տխրեց, մինչև վոր իրեկունը մի նորն առավ ու սող զիշերը պատիւ տրավ նրան, հետը զրուցելով իր հին իշի կյանքից։ Կինը հազիվ գոմից տուն տարավ Կիկոսին, նախատելով, վոր Կիկոսն իշին ավելի չե ուշք դարձնում, քան իրեն։

— Կնիկն իրան տեղը, եշն իրան տեղը, կնիկ. մի չարանա առանց իշի մի որս չըլի...— հանգիստ պատասխանեց Կիկոսն ու իշի մեջքը թիմարեց, աչքերը տրորեց։

Կիկոսն իր կյանքում վոտը գյուղից դուրս չեւ դրել։ Նա, ինչպես ասում են, «վազգալ չեւ տեսել», ռոգեաւոր մուլոց չեւ լսել։ Ենքան մարդ զինվոր տարան, ենքան պատերազմներ յեղան, բայց Կիկոսին հարցնող չկար։ Եդ տեսակ բանի համար նա անպետք եր։

Կիկոսը գիտեր միայն, վոր աշխարհն աստված ե ստեղծել, վոր ինքը տարեկան յերկու մատաղ պիտի մորթի ժամի դռանը.

իր գործերի հաջողութեան ու իր մեռելների հոգու փրկութեան համար: Եսքանն — ասածուն:

Գիտեմ, վոր կա թագավոր, վորի հրամանով պետք է շարժ-վի ամեն մարդ, վոր եւ թագավորի ծառաներն են ամենքը, և, ինչպես ինքն եր բնորոշում,

— Մարդիկ թագավորի եղն են. յերբ վոր ուզի, կքշի ջա-ղաց, յերբ ուզի, անտառ կտանի փայտի, յերբ ուզի, բեռան տակ տնջացնելով սարը կուղարկի... Մի խոսքով՝ ինչ ուզի, են ել կա-նի: Վերեւ, յերկնքում — աստված է, ներքեւ, գետնի վրա՝ թագա-վորը: Սրանք են աշխարհի տերերը:

Դրա համար ել Կիկոսը լուռ ու խոնարհութեամբ կատարում եր այն բոլոր հրամանները, ինչ վոր գալիս եր աստծուց — տեր-տերի միջոցով, և թագավորից — քրտիվի միջոցով: Կատարում եր առանց տրտնջալու, առանց բողոքելու, թեկուզ այդ հրաման-ներն ու պահանջները լինեին անիրավ, անարդար: Յեւ ինչպես ամենաբանն եր հրամայում — «աստծունը տալիս եր աստծուն և թագաւորինը — թագավորին»:

Կոս եր լինում — Կիկոսը մեջն եր, մորեկ կոտորելու համար մարդ եր պետք — Կիկոսն հնտեղ եր, քրտիվի արտը հնձել եր պետք — Կիկոսը հնձվոր եր, մի հրաման պետք է ուղարկել յին ու-րիշ գոտւղ — Կիկոսն եր տանում, ղուլլուղչուն ձի յեւ պետք — Կի-կոսի ձին տանում ելին, իրեն ել վոտով ճամպա դցում, վոր գնա ու լետ բերի: Իրեն հերթն է, թե չե, միենուցն է, Կիկոսը պետք է լինեւ: Իսկ թե պատահում եր, վոր ուրիշ գյուղացիք ելին նրա տեղը բողոքում, Կիկոսը հանգիստ պատասխանում եր.

— Բա ել վճի որվա ոհաթն հնք, վոր ես ել չանենք: Են կոտին ինչ ասեմ, վոր Կիկոսը մեջը չըլի...

II

Յերբ հեղափոխութուն լեղավ, Կիկոսը հանդուժեմ եր: Իրի-կունը եղն առաջն արած վոր գյուղը մտալ, տեսալ՝ վողջ գոտւղը աղմուկ-աղաղակ, իրարանցում, գոռգոռում ելին, հայհոյում ելին քրտիվին, գզրին, պրիստավին ու մինչև անգամ թագավորին:

Պատերազմից վերադարձած միքանի զինվոր հրամայում ելին սրան-նրան, կարգադրութուններ անում, իոկ աղա ու քեթ-խուդա մարդիկ մի կողմ քաշված սմքել, թաղ ելին արել ու խը-ռոված լերեխաների պես քիթները կախել:

Տուն հասնելուն պես՝ կիներ դիմացը չեւաժ ու սկսեց հանդիմանել.

— Կիկոս, դու խո մեռնի, ինչ ես իշի անդաճումը քննի. գնա յե՛, գնա գեղամեջ, տես ինչ խաբար ա, թագավորին թախտիցը գցել են, քոխովին ու սուղչին բռնել ծակուռն են կոխել. գնա մի ղուլլուղ ել դու վեկալ, քանի ըտհենց յեսիր ու խեղճ մնաս:

— Ասում ես՝ թագավորին թախտից գցել են...— շշմած հարցրեց Կիկոսը...

— Հապա՞... աչքն ել չեն հանել...

— Դե, գցել են, գցել, բալքի լալիւ եդ ամ... յես ել մըր եմ գնում գեղամեջ. ինձ հո թագավոր չեն շինելու:

— Ա՛ հողագլուխ, թագավոր չես դառնալ, գեղի տեր կդառնաս, դու կկառավարես:

— Բան ու գործդ կտրել ամ, ան կնիկ. յես ղոռով եմ գլուխս պահում, գեղի հետ ինչ դավի ունեմ: Առանց ինձ ել կկառավարեն. արի քոմագ արա իշի բեռը վրիցը վեր ունենք, արի:

Կիկոսի կիներ բարկացավ, մարդուն անիծեց, նամուսը ցեխը գցեց, վառնատակ արեց. բայց ինչ ողուտ. Կիկոսն իսկի այնուամիս ել չգցեց: «Կնիկ ա, կասի-կասի, տազ կանի»—վճռեց նա ու իշի համար գոմի կտերը մոխիր շաղ տվեց, վոր թավիլ տա, մեջքը դնջացնի:

Մի շաբաթ եր՝ գլուղն իրարանցման մեջ երւ. Ժողովներ եյին անում, ճառեր ասում, նոր մարդ եյին ջոկում, վոր գլուղը կառավարի, իսկ Կիկոսն իր իշի պոչից կպած՝ առավոտը հանդ եր գնում, իրիկունը տուն գալի: Մեկ-մեկ միայն նա միտք եր անում, թե առանց թագավորի յերկիրը վճնց կկառավարվի: Նա իր քառակուսի գլխի ամեն քունջ ու պուճախը ման եկավ, պտրտեց ու տեսավ, վոր գլուխն եդ անսովոր աշխատանքից, մտածելուց ցավում ե, թարգը տվեց:

Ճիշտ ե, թագավորը չկար, ասենք նրա չեղած ժամանակն ել Կիկոսը նրան չեր տեսել, միայն լսել եր,—բայց աշխարհն ելի են եր մնացել: Գլխովի տեղակ հիմի գլուղացիներից մեկն եր կառավարում, վորին «նախագահ» եյին ասում, իսկ զգրի անունն ել «սուրհանդակ» եյին դրել: Ելի տերտերը ժամ եր ասում. կընշանակե—գեռ աստվածը կար, նրա «թախտը հաստատ եր». ելի հարուստները բրթբրթացնում եյին, նրանց քեֆին կաշող չկար, ու ելի Կիկոսին եյին կոռ ուղարկում, նրան եյին բանեցնում:

Գլուղն ելի են հին գլուղն եր, իր հին աղաթով, Կիկոսն ել՝ են Կիկոսը—իր եղով ու քառակուսի գլխով։ Մենակ մի բան լավ չեր, վոր հիմի հարկեբն ավելի ելին շատացել, կաշառք ուտողները—լցվել, ու շուտ-շուտ կոխներ ելին պատահում։

Գլուղի ճամբաները կապվել եյին. ապրուստը դժվարացավ, նավթն ու շաքարը կարվեց, դրսից ճոթ ու կտոր չեր ստացվում։ Գլուղը խավարի ու կարիքի մեջ տանջվում եր։ Բայց Կիկոսն ելի առաջվա պես լուռ ու հանգիստ իր բանին եր։ «Բալքի լափն ես ան»—մտածում եր նա։

Գլուղը բաժանվել եր չերկու մասի։ Մարդիկ դադարել եյին։ Սոփն ու կարիքը ինչե՛ր ասես չեն անիլ...

Են վոր տերտերն ու գլուղի առաջվա մեծամեծներն եյին, նրանք թագավոր ելին ուզում, են վոր կռից չեկսծ զինվորներն եյին, նրանք հալոցում եյին թագավորին, վորովհետև մեծ կռիւն խառնվել եր ու ենքան ջահելներին—վորին կոտորել տվել, վորին ել աշխատանքի համար անպետք շինել, վոտը կամ ձեռը կռվում կորցնել տալով. են վոր ֆնացած գլուղացիք ելին, նրանք ել մի գլուխ են ելին ասում—«ով կուզի թող լինի, մենակ թե մեր ճամպեքը բաց անի, մենք մուսեթից հաց, ճոթ, նավթ ու շաքար ստանանք»։

Կնանիք ել, վոր մինչև եդ ժամանակ գլուղամիջից ամաչելով ելին անցուդարձ անում, բերանները կապած, վոչ մի մարդու հետ չեյին խոսում, հիմի նրանք ել ելին լեղու բաց արել ու համարձակ խոսելով, վորն իր սպանված տղին եր յետ պահանջում, վորն իր կորած ամուսինը։ Գլուղն ենպես եր խառնվել իրար, վոր մեծ ու փոքր չեր ճանաչվում. ով վոր առավոտը վաղ եր վեր կենում ու գլուղամիջում բարձր գոռգոռում, են որը նա յեր գլուղի կառավարիչը։

Ամեն որ գլուղում մարդ եր թակվում։ Մեղավոր ու անմեղ չեր շոկվում. ով զոռ ուներ, իրենից թուլի գլուխը կտրում եր։ Մենակ Կիկոսն եր, վոր, ինչպես ասում են, «գլուխը փեշումը դրած»՝ իրեն բանին եր։ Նրա հետ անկարելի յեր կռվել. նա լավ եր պահում իր գլուխը. ինչ վոր ասում եյին, անում եր, ինչ խոսում ելին—համաձայնվում եր կամ սուսուկուս քաշվում մի կողմ։ Իսկ չեթե բան ու գործից զցում ելին, ժողովի կանչում, լուռ նստում եր ու քնում։ Տանն ել կնիկը թե վոր վրեն ճղճղար, թե Կիկոսը գլուղի վոչ մի բանին չի խառնվում, նա հանգիստ պատասխանում եր։

— Վորտեղից բարակ ա, ենտեղից ել կկտրվի, կնիկ. Կիկոսը վոր ենքան զոչադ ըլի, իրան գլուխը պինդ պահի, թակել չտա, եդ ել մեծ հունար ա...

III

Ամեն բանի խառնված ժամանակն եր: Գյուղացիք ստեղծված դրությունից դուրս գալու համար վոչ մի ճար, վոչ մի հընար չեյին գտնում, չերբ մի որ ել գլուղում լուր տարածվեց, թե հայոց թագավորութունն ե ստեղծվել: Ամենքն ուրախացան: Մանավանդ գյուղի մեծամեծները:

Ժամում պատարագ արին, քարոզ խոսեցին, ժամից դուրս մաղթանք ու թափոր կազմեցին, որ ու կյանք մաղթելով հայոց թագավորին ու թագավորությանը:

Լուրն ստանալու յերկրորդ որբ մի մարդ յեկավ, ճառ ասեց, գովեց հայոց անկախությունը ու չերբ ճառը վերջացրեց, հարց ու փորձ արավ: Թե գյուղացիք ինչ ցավեր ունեն:

Դիտւղը մի բերան են եր խնդրում, վոր ճանապարհները բաց անեն:

— Լավ,—ասեց ճառախոսը.—կկատարեք կառավարութեան հրամանները, ճառպանները կրացվեն:

— Ինչ վոր հրամայեք, կանենք, թեկուզ մաղով ջուր կրել տաք, միայն թե մեզ աղատեք խավարից ու տելլորությունից:

Ճառախոսը գնաց. իսկ գյուղացիք սպասում եյին անհամբեր, յերբ մի շաբաթից հետո հրաման եկավ, թե գլուղում ում վոտը բռնում ե, 7 տարեկանից մինչև 70-ը, պետք ե կովի դուրս գա, վոր թուրքերին կոտորելով ճանապարհ բաց անի դեպի չերկաթուղու կայարան ու քաղաք:

Առ քեզ նոր տրաքոց... Ինչ եյինք սպասում—ինչ դուրս եկավ: Դիտւղը նորից տակնուվրա յեղավ: Կռիվ չեյին ուզում: Բայց թնչ կարող եյին անել, յերբ հրամանի հետ զինված խմբիւր ու խմբապետներ թափվեցին գլուղն ու սրան-նրան բռնելով զոռով կռիվ քշեցին: Դիտւղում տրաք-տրաքոցն սկսվեց:

Կիկոսը, վոր հանգիստ եշն առաջ արած ջրաղաց եր գնում, նրան ել բռնեցին ու տարան խմբապետի մոտ. դուռը բանալով ներս հրեցին ու վրան փակեցին:

— Դու գեղեթրտիւր ես, հմ...—գոռաց Կիկոսի վրա խմբապետը:

— Չե, աղա, չես Կիկոսն եմ, Թովալանց Կիկոսը:

— Ինչո՞ւ չես կոխվ գնացել:

— Ինձ բան ասող չի ըլիլ. վոր հրամայես, կգնամ, ինչ պետք
ա ասեմ:

— Դե հրամայում եմ, գնա:

— Գլխիս վրա.— խոնարհ գլուխ տալով դուրս եկավ Կիկոսը,
վորին դուրսը «բերդանի» մի հին, ժանդոտած հրացան տվին:

Կիկոսը շվարած կանգնել եր—«բերդանկան» ձեռքին պինդ
բռնած ու չեր իմանում ինչ անի: «Փճոք աստծու, Կիկոսը թվանք
եկ տեսավ»—կամաց փնթփնթաց քթի տակ: «Ասենք ամեն բանի
կող տեսել եմ, համա կովի կողը չեյի իմացել»—միտք էր անում
Կիկոսը: Նա, վոր իր կշանքում վառող ել չեր փշտացրել, հիմի
հրացանը ձեռին կռիվ պիտի գնար: Ի՞նչ պիտի աներ, մեր պիտի
գնար, վճից պիտի կռվեր, փամփուշտը վճի կողմից պիտի հրա-
ցանի մեջ գներ—չգիտեր: Եսպես դմբոված կանգնել եր դյուղա-
միջում, յերբ խմբապետը դուրս գալով, հրամայեց, վոր Կիկոսի
եջը տանեն «աբողի» համար, իսկ իրեն քշեն դիրքերը:

— Ի՛նձ ել տարեք իշխս հետ, աղա.— կմկմալով ասեց Կիկոսը.—
ինչ վոր իմ եջը կանի, չես ել հն. ես թվանքիցը խելքս բան չի
կտրում:

— Ա՛յ դու ազգի դավաճան,—գոչեց խմբապետը.— ուրեմն դու
չե՞ս ուղում վրեժխնդիր լինել. միթե քո յերակնեղում չի հոսում
թորգոմջան արյունը:

— Ա՛ղա ջան, եդ ինչ վոր հրամայում ես, բան չեմ հաս-
կանում. Թորգոմջն թվ ա. չես վոր կամ, Թովալանց Կիկոսն եմ.
ես սաղ գեղը գիտի, վոր իմ որում չես թվանքի ծակովը մտիկ
տված չեմ. թե եշս թվանք կրակ տվող ա, չես ել նրա պես. ախր
խթ չես ինձ անպատիվ անում. յես թվանքի մարդ եմ...—գլուխը
կախ պատասխանեց Կիկոսը:

— Խմբապետը զայրացավ, կատաղեց, ջղախնացավ, չետ ու
առաջ ման եկավ ու. են ե՛քիչ եր մնում մտրակը պիտի իջեցներ
Կիկոսի գլխին, յերբ գլուղի քահանան վրա հասավ ու միջամտեց.

— Պարոն խմբապետ, սա մի աստծու չեղը մարդ ե, խեղճ
ու կրակ. իր որում մեկին մի վատ խոսք ասած, հակառակ բան
արած չկա. սա իր կշանքում ճանճ ել չի սպանել. ներեցեք, թո-
ղեք՝ իր բանին գնա. թե ուրիշ դուլլուղ ունեք, ասեք անի, թե
չե սրա աչքերը...—քահանան կանգ առավ, զգալով, վոր կարող ե
ավելորդ բան ասել:

— Անկարելի չե, — պայթեց խմբապետը, — սա իր բռնած դիրքով կարող է վատ որինակ դառնալ ուրիշների համար. ամենքը վոգելորված գիմում են կովի դաշտ, իսկ սա թիկունքը քայքայում, անբարոյականացնում է: Յեթե մինչև այժմ ճանճ ել չի ըստպանել, ավելի վատ իրեն համար, այժմ պետք է մարդու արյուն խմի: Վաղը դուք ես պետք է մասնակցեք պատերազմին, ուր մենաց թե սա: Կոիջե որհասական է և պայքարը վճռական, հասկանում եք...

Խմբապետը թամամ փրփրած եր:

Կիկոսը, վոր շվարած կանգնելու բան չեր հասկանում խմբապետի ասածներից, զգալով, վոր բանը կարող է վատ վերջանալ, հրացանը բարձրացնելով կոթովն իշին բզեց ասելով.

— Գնում եմ, աղա ջան, թո՛ղ, թո՛ղ, գնում եմ, գնում եմ: Վե՛յ են կովին, վոր Կիկոսով պտի գլուխ գա... — Ու եշն առաջն արած ճամպա ընկավ, ինքն ել չիմտնալով դեպի ուր:

Խմբապետը գոհ սրտով բեղերը վոլորեց ու կանչելով իր քարտուղարին՝ հրամայեց, վոր կառավարութեանը մի հեռագիր ուղարկի, թե՛ «ժողովրդի վոգելութունը մեծ է այնչափ, վոր իր կյանքում հրացանի յերես չտեսած մարդն ել ցնծութեամբ գիմում է դեպի դիրքերը»:

Խմբապետը սենյակը մտնելով հրամայեց, վոր իբրև պատիժ Կիկոսի հանդգնութեան, նրա կովը բերեն մորթեն տղերանց համար, վորոնք խմբապետի հետ եյին չեկել ու, դիրքերը գնալու տեղ, գլուղն ընկած՝ սրա-նրա տանը քեֆեր եյին անում:

Ու յերբ Կիկոսի կովը գլուղամիջում մորթում ելին, Կիկոսը թմբի քամակն անցած՝ իշի հետ զրույց եր անում.

— Գնանք, իշուկ ջան, գնանք. գլուխներս լավ ապատեցինք ես անգամ. գնանք հալոց աղզի թաղավորի համար կոիվ անենք, ահաթուրին ա... բալքի լաջե ես ա...

IV

Կիկոսն ետպես գլուխը կախ դցած, համարյա իշի կոկոզին դրած — խորը մտածմունքների մեջ գնում եր մի ճամպով, վոր նրա հաշվով տանում եր դեպի դիրքերը, յերբ դիմացի սարի յետևից չերեք զինված մարդ ձիերը քշելով գլուրս եկան ու առաջը կարեցին: Սրանք Կիկոսենց. գլուղի յերթասարդներն ելին, վորոնք դիրքերից լուր եյին բերում խմբապետին: Նրանցից մեկը ծիծաղելով Կիկոսի վրա՝ հարցրեց.

— Կիկոս, հրեղենդ առաջդ արած եղ ռւր ես գնում...

— Հրամայել են, վոր կռիվ գնամ:

— Հմ-մ...—վրա բերեց մեկելը.—բա խի՞ վոտով ես գնում, մարդ եղպես հրեղեն—քյորոզլու ղոսթ ունենա, վոտով կռիվ գնամ...

— Թվանքդ վոնց ա, Թվանքդ, կարում եմ ծտի աչքին դիպցնես, — ծաղրեց յերորդը:

— Դուք ինձ են ասեք, ճամպեն շատ ա հեռիւ. ծտի հետ ինչ դավի ունեմ յես. հրաման ա, կոռ ա, քաշում եմ, թողեք դրնամ իմ բանին.—հանգիստ պատասխանեց Կիկոսն ու բզեց իշի պոչի տրմատին, վոր առաջ շարժվի:

— Արի, արի յետ դառ, այ խեղճ վողորմելի. դու ինչ կրռիվ անող ես, — հորդորեց առաջինը:

— Յետ դառ, յետ, տուն գնանք, կովում կտան կսպանեն, խալխն ել հենց կիմանա, թե մարդ են սպանել, — մեջ ընկավ ստրածնիկ Սաքին ու մտրակն իջեցրեց Կիկոսի իշի գլխին:

Խեղճ հայվանը գլուխը թափահարեց անսպասելի հարվածից ու վիզը ծռելով ուզեց դուրս պրծնել ձիերի ողակից, լերք յերկրորդ հարվածն իջավ նրա գավակին:

«Ո՛ֆ» արեց Կիկոսը, կարծես հարվածն իրեն եր կպել, ու ձեռքը դրեց իշի կողոզին, վորը ճկուել եր ցավից ու յետևի վատները չռել:

— Յանի ասենք ինձ մարդատեղ չեք դնում, ես խեղճ իջին ինչ ես ասում, ստրածնիկ Սաքի, վոր միսը քրքրում ես. սա քեզ ինչ ա արել. թող արեք գնամ իմ ցավը քաշեմ, խի՞ չեք խեղճ հայվանիս բեղամաղ անում.. Զանն ազիդ բան ա. յես կարալ չեմ յետ դառնամ են աղա-խումբապետի երեսը, գլուխս կթակի, եսքան տարվա պահած գլուխս...

— Տո, սարսաղ գլխիդ ձյուն գա, ջանն ազիդ վոր ասում ես, են ա լավը, վոր տանդ վեր ընկնես, թե գնաս թուրքի գյուլլիցը շանսատակ ըլես: Ի՞նչ անենք, թե խմբապետը մի-յերկու գլխիդ կտա...

Ես խոսակցությունն ընդհատեց մի ուրիշ ձիավոր, վորը ձիու ականջը մտած քշելով հասավ ու գոռաց.

— Ձեր տունը քանդվի վոչ, փախեք, վոր թուրքի ղոշունը կրակ դառած գալիս ա: Ներքի բաղբեր վառեցին, հրեն ալավը յերկինք ա հասել, աստծու վոտները խանձում ա...

Սա ծվծվան Ալեքն եր, վոր գլուղում հայտնի յեր իր «ծափ

սրտով» ու «ծտի խասլաթով»: Ինչքան ծիտն է աներես ու վախ-
կոտ, հնքան ել Ալեքը, և ինչպես ծիտն է սաղ որը ճտճտում ու
սրա-նրա դռանը փռած աղունից հատիկներ թոցնում, ենպես ել
Ալեքը թեթև ձեռնագող եր. մանր-մունր բաներ կը թոցնում՝
բաղչից վարունկ, հավանոցից ձու, այգուց տանձ ու խաղող և
այլն:

— Կաց, կաց, ձիուդ ջլավը (սանձը) քաշի, դերքերից գալ-
ներս ես ա, ամեն բան հանգիստ եր.— խոժոռեց վրան ստրաժնիկ
Սաքին:

Ալեքը՝ վերավորված, վոր իրեն չեն ուզում հալատալ, ձին
սպաւնդակեց ու առաջ անցավ:

— Կաց տսում են քեզ, թե չե հրես ծվծվանդ կկտրեմ... — ու
մինչև Ալեքը ձիու բերանը հհավաքեր, Սաքինի հրացանն ողում
պալթեց:

Ալեքը ձիուց ընկավ ցած: Սաքին ու իր ընկերները ծիծա-
ղում ելին, իսկ Կիկոսի թուքը ցամաքել եր:

— Կիկոս, արեդ տափը դնեմ, — գոռաց ստրաժնիկ Սաքին, —
թուրքը գլխիցդ կտրեց, եկար եդ խեղճ Ալեքին սպանեցի՞ր...
Դե հիմի գնա ու լեշն իշիդ վրա դի, տուն հասցրու. — հռհռալով
ավելացրեց ստրաժնիկ Սաքին, վորի հռհռոցին միացան և մյուս
յերկուսն ու ձիերը խաղացնելով յետ դարձան ստուգելու Ալեքի
բերած լուրը: Բայց դեռ նրանք չեյին ծածկվել բլուրի լեռներ,
յերբ մի 5—6 զինված «խումբի տղա» ձիավորված դուրս եկան
գլուղի կողմից իմանալու, թե ինչ հրացանի պալթյուն եր:

Կիկոսն ես ամեն անցուդարձից շշմած, կանգնել եր ճամպի
մեջտեղը, չերբ խաչաձև փամփուշտակալներով, մեծ փափախնե-
րով, խանչալ-ատրճանակները կապած «խումբեք»*) կանգ-
նեցին նրա առաջ: Նրանք դեռ չեյին նկատել Ալեքին, վորի ձին
փախել եր, իսկ ինքը կուչ եր յեկել մի քարայրի տակ ու վա-
խից աչքերը ճպգացնում եր, ստուգելով մարմնի բոլոր մասերը,
իմանալու, թե գնդակը վճր անդին ե կպել:

«Պումբերը» շրջապատելով Կիկոսին՝ մի լավ զննեցին նը-
րան, իրենց լեզվով ինչ-վոր խոսեցին, վորից Կիկոսը բան չհաս-
կացավ, վորովհետև, ճիշտ ե, «խումբերը» հայ եյին, բայց նրանց
լեզուն բոլորովին ուրիշ եր և անհասկանալի:

*) Գյուլագիք զաշնակցական խմբերի բոլոր տղաներին «խումբ» եյին
ասում: Մ. Դ.

Դժվար և նկարագրել, թե ինչ տանջանքներ կրեց Կիկոսը «խումբերի» ձեռին, վորոնց տված հարցերից ու խոսածից վո-
չինչ չեւ հասկանում նա, և վորոնք չկարողացան իմանալ, թե
հրացան արձակողը Կիկոսը չի յիշել, մինչև վոր նրանցից մեկը
չհոտոտեց հրացանի խողովակը և ձեռք չքաշեց նրանից։ Ո՞վ եւ
հապա այդքան մոտիկ հրացան արձակողը, չիր միակ հրացա-
նավորը միայն Կիկոսն եւ, վորին խուզարկելուց պարզվեց, վոր
նա իսկի փամփուշտ ել չունի մոտը։

— Ծո՛ւ, քեզի պես խալու...— Երարկացավ նրանցից մեկը Կի-
կոսի վրա և խանչալը հանեց ու նորից դրեց տեղը՝ զսպելով
իրեն։

— Ծո՛ւ, ի՞նչ կընայիր հոս, իշու ձագ... առա՛ջ անցիր։

Կիկոսը շարժվեց տեղից, մոտեցավ իշին, վոր քշի դեպի
դիրքերը, չիր «խումբերից» մեկը նրա առաջը կտրեց ու պատվի-
րեց, վոր դեպի չետ, գլուղը դառնա, կատաղած հայհուլելով նրան։

— Ծո՛ւ հըր կերթաս, հալվան ողլու հալվան...

Կիկոսը գլխի ընկնելով, վոր «խումբերը» չեն թողնում նը-
բան դիրքերը գնալու, լեզուն հազիվ շարժելով ասաց։

— Խմբապետ աղեն հրամայել ա, վոր կռիվ գնամ, յես ել
գնում եմ...

Ձիավորները քրքջացին։

— Վայ խայրուս գլխուն, վոր ձեղի պես եշերը պիտի պաշտ-
պանեն ազգը...— գլուխը շարժելով ասաց նրանցից մեկն ու կար-
գադրեց, վոր Կիկոսին իր իշով առաջ անեն դեպի գլուղ։

Բայց դեռ հազիվ մի տասը քայլ եյին արել, չիր նրան-
ցից մեկը նկատեց, վոր ճամպի կողքին ընկած մեծ քարի տակ
մի մարդ և շարժվում, հրացանը ձեռին փորսող տալով։

— Տղերք, թշնամին դիրք ե մտել,— գոռաց Կիկոսի վրա
խանչալ հանողը, ու Կիկոսին թողնելով իր իշի հետ ճամպի մեջ
տեղը կանգնած, նրանք ցած թռան ձիերից ու շրջապատելով
քարը, իրենք ևս դիրք մտան։ Ապա նրանցից մեկը, չենթադրե-
լով, թե քարի տակ պահվածը թուրք ե, թուրքերեն լեզվով գո-
ռաց։—

— Բի՛մ սլան, թիվանգլընի վեր, չըլս դիշերի։ (Ո՞վ ես, հը-
րացանդ տո՛ւր, դուրս չեկ)։

Ծվծվան Ալեքը բան չհասկացավ. նախ, վոր նա թուրքերեն
լավ չգիտեր, յերկրորդ՝ խոսողի թուրքերենն ել նման չեւ իր
գիտեցածին։ Խոսողն ուսման վիճակում եւ կանչում։

«Սոււմբերը», տեսնելով՝ «Թշնամին» չի պատասխանում, հրացաններն ուղղեցին դեպի նա և հենց են հ' պիտի կրակելին, յերբ Ալեքը վախից բարձր ճչաց.

— Կիկոս, քե մատաղ, քոմագ արա, ինձ սպանեցին...

Կիկոսը զարմանքից քար եր կտրել. նա հենց գիտեր, թե Ալեքը մեռած է, ու ստրամոնիկ Սաքին ել վոր իրեն շառով տըվեց, քոխովին կհամոզեր, թե Կիկոսն եսպանել, ու իրան Սիբիր կքշելին... Բայց հիմի իր բախտից—Ալեքը սաղ եր. նա դեռ խելքը գլուխն եր հավաքում, թե հարցնի Ալեքի հալը, յերբ մի «խումբ» թուրքերեն գոռաց.

— Ձա'նդ, լիրբ անամոթ, հիմի յեւ հաչերեն կխոսի, վոր մեզ խարի:

Ալեքը նորից հուսահատ ճչաց.

— Կիկոս ջան, քոմագ արա, ինձ սպանեցին:

— Արա Ալեք, եդ դու լեւս...—ծոր տվեց Կիկոսը:

— Հա, քե մատաղ Կիկոս ջան. դրանց սասա, վոր թուրք չեմ:

— Արա Ալեք, մեռած չեւ...

— Ձե, սաղ եմ, սաղ եմ, քե մատաղ, բա մեռելը կխոսամ...

— Ա'րա, գլուխն դիբավ վճչ...

— Ձանդ կտրե, շուն շանորդի, թ'նչ կխոսիս թուրքին հետ: Կճանչնամ ինձի, կտոր-կտոր կընեմ քեզի...—գոռաց խանչալ հանողը ու, դառնալով Ալեքին, վրա պրծավ այժմ արդեն հաչերեն լեզվով.

— Հրացանդ ցքե:

Ալեքը, վոր գլուղի «սուրհանդակն» եր, միքիչ հասկանում եր «խումբերի» լեզուն: Նա հրացանը շարտեց, վորից հետո «խումբերը» մոտեցան սփրթնած Ալեքին:

— Յեւ,—գոչեց մեկն ու հրացանի կոթով ամուր հրեց Ալեքի կողքին:

Ալեքը դողդողալով վեր կացավ ու կապտած շրթունքները հազիվ իրար տալով ծվաց.

— Ղուրբան եմ ձեզ, ինձ սպանիլ մի, Հազրո ջան, բա ճնանչում չէք ինձ. Ալեքն եմ, Ալեքը, սուրհանդակ Ալեքը...

«Սոււմբերը» հայհուցանքի տարափ թափեցին Ալեքի գլխին ու կառաղած նրա ու Կիկոսի վրա, առաջ արին լերկուսին եւ դեպի գլուղը, վոր խմբապետը հարցաքննի, թե ինչից է առաջացել և վորտեղից—հրացանի պաթյունը:

Գլուղը, վոր հանգիստ վիճակում եր, մին ել են տեսավ, իրիկ-

Նաղեւմին 5-6 ձիավոր «խումբ» շրջապատած մի եշ, մի Կիկոս, մինն էլ մի ծվծվան Ալեք, ներս մտան գլուղի ներքի ծալրից: Գլուղում մի շահաճող ու յերեխանց աղմուկ-շաժաթա բարձրացավ: Առաջին նկատողն այս հանդիսավոր «հաղթական» մուտքի, բարձր ու չերկար ձայնով աղբարարեց.

— Խումբերն երկու թուրք, մի եշ հն բռնել, յերկու թուրք մի եշ...

Վոնց վոր թեժ կրակին քլթքլթացող ջուրը պղնձի չորս կողմից գեպի ներս ե մղում լեռացող ջրագնդերը, ենպես էլ գլուղի բոլոր ծայրերից գեպի գլուղամեջ թափվեցին ահել, ջահել, մարդ ու կին, վոր տեսնեն, թե եղ ինչ տեսակ թուրքեր են:

«Հեռու կացեք, հեռու», «ճամպա տվեք, ճամպա»-ն ընկավ խալխի մեջ, Յերեխաներից շատերը քիչ մնաց ձիու վոտների տակ ընկնելին: Սրթսրթալով, ցեխ ճմբռելով ու սոթ տալով գալիս ելին ու գալիս: Մութն իր խավարի առաջին վարագույրը քաշել եր արդեն, բաց դեռ մարդաճանաչ եր. սակայն վրա վաղողները, վորովհետև իրենց մեջ վճռել էին, թե խումբերիս բերած մարդիկ անպատճառ թուրքեր են, դրա համար էլ գոնե մի մարդ էլ ե չգտնվեց, վոր մի լավ նալի ու ճանաչի չեթե վոչ Ալեքին կամ Կիկոսին, վորոնք ձիավորների ողակի մեջ էին առնված, գոնե Կիկոսի իշին, վորը, հարսանիքի գալու առաջին լուր բերող «աղվեսի» նման առաջներն ընկած, «իշի յորդա» բռնած վաղում եր, և վորին վողջ գլուղը գիտեր, քանի վոր ամեն առն նրան մի քանի անգամ ջրաղաց տարած կլիներ:

Ինչ վերաբերում ե Կիկոսին ու Ալեքին, նրանց հրամայված եր լուռ ու գլխակախ, առանց ձայն հանելու գնալ. և նրբաճել էլ մատաղի վոչխարի պես գլուխները համարյա շեքի զաթը գցած, առաջ էլին շարժվում:

— Արս, հն մինն էլ հլեյի թե Կիկոսն ըլի, Կիկոսը,—ձայն տվեց մեկը, վոր ավելի չեր մոտեցել:

— Բնլքի դա յել թուրքերի Կիկոսն ա, ինչ գիդաս,—ծաղրեց մոտից անցնողը:

— Վոնց վոր չերևում ա, ես կռիվը Կիկոսների պեսերը պտեն անիլ. հալբաթ թուրքերի «խումբերն» էլ մերոնց պես լուրանք գնդումը նստել, քեֆ են քաշում ու թուրք Կիկոսներին կռիվ դարկում.—ձայնեց մի ավելի համարձակը, վոր չեր նկատել, թե ինչպես քոխվա Սարիբեգը մոտից անցնում ե և լսելուն պես վրա պրծավ:

— Զենդ կտրի, թե չե հրեա ոեկտ կքանդեմ, ըտհենց եք խոսում ե, վոր կարում չենք թուրքերին սրբենք, ճամպեքը բաց անենք: Տանը վեր թափեցեք, հավ թուխս դրեք ելի, փափախներդ կնանոնց տակին դրեք ու լաշակ կապեցեք ելի. ես խմբերն ել վոր ըլեն վոչ, հու ոխտը կորածից մինը կըլենք...

Քյոթլա Սարիբեգը, վոր շատ եր պաշտպանում «խմբերին», վորովհետեւ նրանք քյոթլին նշանակել ելին ելի իր հին պաշտոնի մեջ, վողջ գլուղն են տեսակ թալանի ու սարսափի չեր մատնել, վոր մարդ չեր կարողանում առաջը ձգտուն հանի, մինչեւ անգամ, չերը նա զուտով սրա-նրա հարսը դուրս եր քաշում տանից ու խմբապետին տանում:

Խավարը ս' աղաւթի թեւերի նման փռվեց գլուղի վրա: Յերկինքը հո խավար եր, խավար, գետինն ել նրանից վատթար սեցեր եր: Դուռը գլուղ շտապեցին իրենց տները, քանի աչքները կտրում եր ու ճանապարհը հազիվ նշմարում ելին. իսկ ձիավորներն իրենց գերիներով հասան խմբապետի բնակարանի առաջ:

Այդ գիշեր վողջ գլուղի խոսակցութեան նութը գերի ընկած թուրքերն ելին: Յեւ աչմիջոցին, չերը գլուղակն խավար խրճիթներում կրակի շուրջ բոլորած տանեցիք պատմում ելին կռվի ու դերիների մասին, հիշելով անիծված հալ-թուրքական ընդհարումները, խմբապետի սենյակում հարցաքննութուն եր կատարվում, վորին մասնակցում եր և քյոթլա Սարիբեգը, վորը հիասթափված ու զարմացած դիտում եր ու չեր կարողանում հասկանալ, թե ինչպէս «թուրք գերիները» հանկարծ փռվել ու դարձել են Կիկոս ու Ալեք:

Ամբողջ գիշեր, դրեթի մինչեւ լույս, հարցաքննութունը վոչ մի հետեանք չտվեց:

Են վոր Կիկոսն եր, պնդում եր, թե Ալեքի տեսած ձիավորները նույն գլուղացիներն ելին, վորոնցից մեկը ստրածնիկ Սաքին եր, վոր իրան իշին ել թակեց. են վոր ծվծվան Ալեքն եր, հաստատում եր, թե ձիավորները թուրքեր ելին, հայերեն խոսող թուրքեր, վորոնք Կիկոսին գերի ելին առել ու իրեն տեսնելուն պէս վրան կրակեցին թե սպանեն, չհաջողվեց, վորովհետեւ ինքը սուտ ձիուց վեր ընկավ ու դիրքը մտավ թե կոտորի, նրանք ել թողին փախան:

Վճրին հավատալին...

Քյոթլա Սարիբեգը մի կողմից հաստատում եր, վոր Կիկոսը սուտ չի խոսի, բայց կարող եր չճանաչել ձիավորներին, վոր

վորովհետեւ նրա աչքերը—աչքեր չեն, մյուս կողմից ել պնդում եւր, վոր Ալեքը եւ՝ ստախոս եւ, եւ՝ վախկոտ, նրան ել կարող եր թրվալ, վոր ձիավորները թուրքեր են։ Բայց վորովհետեւ Ալեքը սուրհանդակ եր, իրեւ պաշտոնական անձի ցուցմունք, խմբապետը հրամայեց իր քարտուղարին, վոր մի մանրամասն գրություն կազմի «ռազմական մինիստրի» հենց իր անունով, վորի մեջ խմբի ալլոց գրված եր հետևյալը.

«Թուրքական խուժանն այգինները կրակ տալուց հետո կամեցավ անցնել մեր առաջապահ դիրքի թիկունքը, բայց յետ մղվեց, չարաչար կորուստներ տալով։ Նրանցից մոտ 30 հոգի, կտրվելով իրենց թիկունքից, առանց հասկանալու իրենց վողքերգական դրությունը, կամեցան հարձակվել այն գյուղի վրա, ուր տեղավորված եր «Քարքարուտի» շտաբը—իմ զլխավորությամբ, սակայն մեր սուրհանդակը նկատելով նրանց, կրակ բաց արավ, վորի հետևանքով խմբիս անդամներից 6 հոգի կայծակի արագությամբ հասան յեւ հալածեցին թշնամուն։ Մեր կողմից վոչ մի զոհ. նրանցից առաջմ անհայտ եւ. յենթադրում եմ, վոր յետ փախչելիս մեր յերբորդ դիրքը նրանց վոչնչացրեց։ Խընդրում եմ պարզեցատրության համար միքիչ դրամ ուղարկեցեք, վորպիսի հանգամանքը կվոգեմորի տղերանցը։

Ձեր՝ Կայծակ Ասատուր։

Նամակը քարտուղարի կարգալուց հետո խմբապետը գրիչն առավ եւ իր սեփական ձեռքով տվեցրեց «Հետ գրության»-ը, վորովհետեւ, նրա կարծիքով, վոչ մի նամակ կամ պաշտոնական թուղթ առանց «Հ. Գ.» չի կարող լինիլ։ Նրա գրածը թղթի վրա ճիշտ աչնպիսի տպավորություն եր թողնում, ինչպես ցեխի վրա ման եկող հավի հետքերը։ «Հետ գրության»-ը հետևյալն եր.

«Նամակս վերջացրել եյի, յերբ լուր ստացա, թե փախչող թուրքերին բոլորին կոտորել են։ Կեցցե՛ Հայաստան»։

Նամակը ծրարելուց հետո խմբապետը կարգադրեց, վոր սուրհանդակ Ալեքն ինքն իր ձեռքով հասցնի կենտրոն եւ յեղելությունը պատմի մինիստրին, իսկ քոխվա Սարիբեգին պատվիրեց, վոր Կիկոսին գյուղից հեռացնի, կորցնի, թեկուզ գլուխը կտրելու գնով, վոր նա մարդու յերես չտեսնի եւ վոչվոքի վոչ մի բան չասի յեղելության մասին։

— Տեսնե՛մ ես այս մայղերը,— դարձավ խմբապետը Կիկոսին— տասը փամփուշտ ունի իր մեջ. բերանդ բաց կանեմ ու տասն ել կդատարկեմ մեջը, յեթե վորեւե մեկին բան տեսա: Գնա, պարոն Սարիբեգն ուր վոր կտանի, ծախք կտրած կգնաս, ինչ վոր հրամայի, կկատարես, թե չե չերզվում եմ սուրբ Դաշնակցութեան անուանով, տուն ու տեղդ մոխիր կշինեմ, քամուն կըրամ:

— Լեզուս թող պապանձվի, թե մարդու չե վոր, իշիս ել բան տեսեմ.— կմկմաց հազիվ սփրթնած Կիկոսը:

Լուսադեմ եր:

Ալեքը վոտով ճամպա ընկավ դեպի «Կենտրոն», վոնց վոր «խմբերն» եյին ասում, վոր ամեն գլուղում պատմի իր «քաջագործութունների» մասին, իսկ քյոխվա Սարիբեգն ու Կիկոսը խոնարհ գլուխ տալով խմբապետին՝ դուրս չեկան «շտաբից»:

Քյոխվան դարձավ Կիկոսին, թե՛

— Հու լմիլ իմացար ինչ ասեց խմբապետը: Նա ուղում եր գլուխդ կտրի, յես միջնորդեցի, վոր ինձ բախշի: Հիմի արի եղբ աղաք արա ու սուսուփուս գնա մեր գոմերը: Մեր տավարը կպահես, մինչև տենանք ես բանն ինչով ա վերջանում:

— Քյոխվա ջան, արեհդ մատաղ, քո լեսիրն եմ, քո վտաքի տակի ցեխն եմ, ուղում ես արի վոտնեղդ լվանամ ու ջուրը խմեմ: Եդ լավութիւնը չե թե չես, վասիաթ (կտակ) կանեմ, վոր իմ ոխտը պորտն ել չմոռանա...

Ու են ժամանակ, յերբ լուսը բացվել եր, ու գլուղացիք հավաքվում եյին «շտաբի» դուռը, վոր իմանան, թե «գերի թուրքերի» հետ ինչպես են վարվելու, Կիկոսն իր եղն առաջն արած մոտենում եր քյոխվա Սարիբեգի գոմերին, ուր նրա ապրանքն եր պահվում ձմեռը, ինքն իրան ասելով:

— Կիկոս, գլուխդ ես անգամ ել լավ աղատեցիր թակվելուց... Թո՛ղ, թո՛ղ, դեսն արի, ալ անտեր, դբա քյոխվի գոմերը, ի՞նչ ես շլինքդ դբա սուրբ Սարգիսը ծուխ, հո մատաղ չեմ տանում մորթեմ, գիտում չե՞ս, վոր հիմի իմ խաչը քյոխվա Սարիբեգն մ...

V

Թե ինչ պատահեց աշնունետե գլուղում. Կիկոսը վոչինչ չիմացավ: Նա քյոխվա Սարիբեգի ապրանքի յտեից եր: Պահում եր, խնամում ու իսկի չեր ել մտածում, թե ինչով ե վերջա-

Նալու կռիվը, ինչ կարող ե պատահել այնուհետև, ինքը յերկար պիտի մնա ուրիշի տանն անվարձ աշխատավոր, թե մի որ կազատվի: Նա իրեն չափազանց յերջանիկ եր զգում, վոր աշխարհի խառնված ժամանակ ինքը մի հանգիստ ու խաղաղ անկյուն ե գտել մարդկանցից հետու, կովից ազատ: Յերբեմն գլուղից հաց ու ալյուր եյին բերում Կիկոսի ու քոթավի շների համար, և յեթե խոսք եր բացվում գլուղի դրության մասին, պատմող ջահելը հազար ու մի անորեն բան եր պատմում «խումբերից», թե ինչպես նրանք գազազած հարձակվում ելին սրա-նրա վրա, ծեծում, ջարդում, կռիւ ու յեղը գոմից դուրս քաշում, մորթում, շատ անգամ ել ես ու են կնկանն ու աղջկանը ձեռք մեկնում: Լսու՞մ եր ես ամենը Կիկոսը, լսում ու ինքն իրեն մխիթարում:

— Ինչ լավ ա՛ յես ընտել չեմ, թե չե իմ գլուխն ել կըթակեն...

Գարունը բացվելու վրա յեր, յերբ մի որ Կիկոսի կնիկն եկավ քոթավա Սարիբեգի բիւնեն, մարդու մոտ, ու հայտնեց, թե թուրքերի թագավորը «թախտից ընկել ա», ռսի դոշուն ա եկել, վորոնց «բալչիկ» են ասում, թե հայոց թագավորութունն ել հրամայել ա, վոր «խումբերը» հեռանան, ու տեղը հիմի նոր զորք ա գալիս, թե հիմի յել առաջվա պես ամեն պատահած մարդու նիւթ չեն ուղարկում, այլ ով վոր հին ժամանակ ռսի թագավորի ծառայած ղինվոր ե, նրանց են հավաքում, և ստիպեց Կիկոսի՛ն, վոր թողնի քոթավա Սարիբեգի բիւնեն ու գնա տուն իրենց ցավը քաշի:

Կիկոսը լսեց, լսեց, մտածեց, մտածեց ու կնկանը, թե՛

— Կնիկ, կտաս գլուխս մի խաթի կրեբես, արի ձեռ քաշի ինձանից, գնա բանիդ:

Կնիկը հորդորեց, միքիչ ել անիծեց, «հողեմ, ցխեմ» արավ, բայց վոչինչ չոգնեց: Բանը հասավ կռվի:

— Թաղեմ քեզ, թաղեմ. քեզ պես մարդը վնչ ունենամ. յես ել կասեմ, թե մարդ ունեմ, ելի... Մեռի ելա, պրծնեմ ու մուգս (հուլաս) կտրեմ, անումդ քարին գրեմ, պրծնեմ, բալքի ես երված սրտիս ելա մի հովութուն ըլի...—ճչաց զալրացած կինը:

— Կնիկ, ի՞նչ ելավ քեզ.—կարծես թե բարկացավ Կիկոսը:— Ի՞նչ ես ուզում ինձանից. հենց կիմանայիր մեռել եմ, ռըր եկար, յետեիցդ հու կարմիր խնձոր չեմ ղարկել:

— Բա հմի գալիս չես, ելի.—կրկնեց կինը:

— 25-է...ես լերկու գոմ լիքն ապրանքը թւմ թողնեմ, վոր գամ. քոխվին լ՛նչ կասի...

— Ա՛ հողագլուխ, — կատաղեց կինը, — դու եկել եստեղ ուրիշի ապրանքն ես պահում, քու կոմի ու լեզը «խումբերը» մորթեցին, 5—6 վոխճար (վոչխար) կար, են ել գելն ու գողը տաբան, հիմի սոված զկրտա միտուն քուլփաթով, տեսնեմ քոխվին քեզ կախվելու համար թողի բուրդ ելա կտամ .. Գլխովինը քիչ ա, պահի-պահպանի, թող քունը շունն ու գելն ուտեն:

— Հալա դու յես խոսում, — վրա պրծավ Կիկոսը. — չես իմ ջանը քարեքար, չորհչոլ գցեմ, կովից գլուխս զոռով աղատեմ, դու իմ տունը քանդես. բա վոր տանում ին մորթտում, շունչդ վրեդ չե՞ր, խի՞ չիր մուղայիթ կենում: Կիկոսը հոռ հարամ գլուխի ըսխիցը գալու չեր ապրանք պահի, բա հիմի ինձ դնամիշ տանելու յո՞մ, գլուխդ ու արեդ թակեմ են խովլաթ ձորումը. խալխը լ՛նչ կասի. ինձ կթքեն կմրեն, վոր կնկա վրա ձեռք եմ բարձրացրել... Գնա, գնա բանիդ: Գնա քոխվին ասա, թե վոր դրուստ խումբապետը գնացել ա, թող ինձ միքանի ողով արձակի, գամ տուն ու տեղս սարքուկարդ անեմ, թե չե... քիչ ա ֆուռս գդալը ջուր ածեք ու միջումը խեղդվեք:

Կիկոսի կնոջ համար միանգամայն տարբերակ ու դարձանալի յեր, վոր Կիկոսն եդ տեսակ լեզվով ե խոսում: Կիկոսը Կիկոսն ըլի ու իրան հետ եդ լեզվով խոսի... «Յերեի կուլի ժամանակ մարդկանց սիրտն ել ե փոխվում», մտածեց կնիկն ու վորպեսպի չխոռվեն, ու չկուկեն, համաձայնվեց, վոր տուն դառնա և քոխվից իրավունք խնդրի իր մարդու համար: Կինը խնդրեց, վոր Կիկոսն եշն իրան տա, մինչև գլուղ հասնելը նստի, բայց Կիկոսը յերկար ժամանակ չեր համաձայնվում, վախենալով թե իշից կարող ե զրկվել վերջնականապես, վախենում եր, թե «խումբերը» կխլեն. բայց և աջնպես համաձայնվեց տալ: Ու չերը գոմից դուրս բերեց, չուլեց ու կնկանը վրան նստացրեց, խանդաղատանքով տորոնց իշի աչքերը, սղալեց գլուխը, վորի միջոցին եշը շոջված տիրոջ փաղաքշանքից, դուդեն վեր բարձրացրեց ու հոտոտեց Կիկոսի դեմքը, կարծես փնտռելով նրա շրթունքները, վոր համբուրի Կինը, վոր դիտում եր այս Կիկոսային և իշային սիրո փոխադարձ գզվանքները, գլուխը կամաց տաքացրեց ու «Ֆուս բարովի» փոխարեն «չանչ» արավ Կիկոսին՝ ասելով:

— Հողեմ եդ շաշ գլուխդ, մի սաղ որ ու գիշեր ա դոնադ

եմ եկել կուշտդ, իսկի մի անգամ ելա չմտեցար ինձ. մի անգամ ելա գլուխս չսղախեցիր... մի իշի չափ ել չկամ...

Ելը ճանապարհվեց, իսկ Կիկոսը կնոջ ասածների վրա քիչ միտք արավ, միտք, ու յերբ նկատեց, թե կինն արդեն ծածկը վում ե, յետևից գոռաց.

— Աղջիկ, իշին լավ մուղալիթ կաց. նեղանալ մի, մտահան եմ ելել...

Յերեք որից քյոխվի տան նոքարն եկավ ու Կիկոսին իրավունք տվեց յերկու որով գյուղ վերադառնալ, միայն շատ մեծ զգուշությամբ, վոր «խումբապետը» չտեսնի:

— Արա՛ Մուխի, բա կնիկս եկավ ասեց, թե՛ «խումբերը» քաշվել են, եզ վճնց զադ ա, դու՛յնլ ասում ես՝ ծածուկ ման դամ:

— Հա... չե... — սուտը բռնվածի պես կմկմաց Մուխին ու տվեացրեց. — Գնիթ ա, գնացել են, համա խումբապետը մի 10-20 հոգով հալա գեղումն ա, նոր շտաբ պիտի վա, վոր նա փոխվի:

— Բա հիմա յես վճնց, անեմ. գնամ թե չե... — հուսահատ հարցրեց Կիկոսը:

— Գնա, գնա, քեզ ճանաչողն ով ա, գնա բանիդ. թե վոր մի խաթի յե ռաստ գաս, քյոխվեն սաղ ըլի, ընդեզ չի՞, կադատի ելի...

— Հալըսիթ վոր քյոխվին սաղ ըլի... — ասեց Կիկոսն ու յերեսը խաչակնքելով ճամպա ընկավ դեպի գյուղ, ահանջները խըշած պահելով, վոր ձեն-ձուն իմանա թե չե՝ իրան բուժեն տա:

Նոր եր հասել «բաղերի քուչին», չերբ դիմացի ալգուց խոսակցության ձայն լսվեց. վոտը կախ արավ, ահանջները սրեց, բա՛ն չհասկացավ. մին ել են տեսալ՝ կողքի չափարի (ցանկապատի) գլխովը մի «խումբ» ձին թուցրեց ու գլխավերևը կանգնեց:

— Ծո՛ ինձի աշե, վի՛վ ես... — ձայն տվեց ձիավորը: Կիկոսը բնադաբար գլուխը վեր քաշեց:

— Ծո՛ իշու ձագ, դուն նորե՞ն գիրքերու մեջ չես. փախմծ ես. թւոտեղ ելիր...

— Յես քյոխվա Սարիբեգի նոքարն եմ, նրա դուլուղչին, — կմկմաց Կիկոսը:

— Ձայնդ, իշու ձագ, քյոխվա, շուն ու գել իրար կպաշտպանեք, կոխվ չեք երթար, կպահվեք, հանցանքը և կռվին անաշոգութլունը մեզ վրա կբարդեն: Քալե ֆոռնիթ... Քալե ֆոռնիթ...

— Ծո՛, Հաղրո, վի՛վ ե. — ձայն տվին դիմացի ալգուց:

— Մեկ անգամ բռնած մարդերնիս:

Հազարոն ու իր ընկերը, վոր ճանաչել էյին Կիկոսին, հայհուելով քշեցին դեպի գիրքերը: Նրանք գազազած էյին, վոր իրենց հեռացնում են և տեղը նոր դորամաս նշանակում, ուստի և գյուղից դուրս, այգին ու անտառնեցին ընկած մարդ էյին վորսում և քշում գիրքերը, վորպեսզի իրենց գոյութիւնը դրանով արդարացնեն, թե դասալիքներին բռնոտում, գիրքերն են քշում:

Լավ վոր չծեծեցին Կիկոսին: Իսկ չծեծեցին, վորովհետև նախ ճանաչեցին ինչ անպիտք մարդ լինելը, չերկրորդ ել... նա լուռ հպտակվում եր նրանց ամեն մի կարգադրութեանը, թեև շատ բանը նրանց ասածներից չեր հասկանում. բայց խոսքընդմեջ գլխի յեր ընկնում, վոր նրանք շատ կատաղած են գյուղացիների վրա և պատրաստ են բոլորին կոտորելու:

Կիկոսը հոգնած ու ջարդված հասավ մի սարի գլուխ, վորտեղ նրան մենակ թողին «խումբերը», պատվիրելով, վոր իջնի ցած և անցնի առաջին գիրքերը, վորոնք չերևում էյին սարի ծալից, ու իրենք լետ դարձան:

Գնում եր Կիկոսը թփերի մեջ ընկնելով, վորտեղ քարերին տալով, յերբեմն անիծելով կնոջը և մտքումը հայհուելով.

— Վոր ասում են՝ կնկա խաթեն անպակաս կըլի, հո սբէտ չեն ասում... Ինձ համար վեր ընկած էյի, ասա ի՞նչ էյիր ուզում հը...— Ապա ընդհատելով ինքն իրեն՝ ասում եր.— բալքի լա՞մն ես ամ... ինչ լավ ելավ գլուխս չթակեցի՛ն...

Մութն եր, յերբ հասավ գիրքերին: Կռիվ չկար: Յերեկվա կովից հոգնած, տղերքը գլուխներն իրար ծնկի դրած, հրացանները խտտած հանդստանում էյին, բայց չերբ Կիկոսին տեսն, ամեն բան մոռացած՝ սկսեցին ծիծաղել ու ձեռք առնել նրան.

— Տղերք, հիմի վոր կհաղթենք, սուբբ Կիկոսի զորութեամբ— ձայն տվեց առաջին տեսնողը:

— Տնաշեն, դե միթիչ վաղ դայիր ելի, ենքան մարդ փչացավ գյուղի բորանի բերնին...

— Գեներալն եկել ամ...— մեջ ընկավ մեկ ուրիշը:— Դե պլան բաշի, թե առավոտը վոր կողմից սկսենք կռիվը...

Ծափ ու ծիծաղն ընկավ... Կիկոսը լուռ եր. նրան ինչ... ինչ ուզում են, թող խոսան...

— Թվմնքդ ուր ա, թվմնքդ...— ձեռք առավ մեկ ուրիշը:

— Ի՞նչ ես սարսաղ-սարսաղ դուրս տալի. գեներալը թը-

վանք կուռնենա՞, դուրբինը (հեռագիտակ) հետն ա, բոլ ա, ելի... Մի տես է, տես ինչ դուրբին ունի ճակատից կպած, աստծու շինած դուրբին, վոր համ դրա թիփլիղ ա մտիկ տալի, համ դրա Բազու... մի մտիկ անելում երկու քաղաքն ել վեր ա ունեկու...

— Սոված կըլի եզ յեսիլը, մի թիքա հաց տվեք ուտի, մինչև լուսանա, յետ զրկենք տուն գնա. թնչ եք վրա տվել խեղճ մարդուն, շատ ել թե չեն իմացել, դարկել են...—միջամտեց հասակավորներեից մեկը:

Կիկոսին կերակրեցին:

Դիրքում տղերքը հանգստանում ելին: Լուռ եր ամեն ինչ: Կիկոսն ել գլուխը մի հողի կոշտի վրա դրեց, թե քնի, բայց քունը չտարավ. նրա միտքն զբաղված եր մի բանով միայն, թե յարար իր եչն ու կնիկն ի՞նչ յեղան, յերբ ակտմալից լսեց մի քչիոյց.

— Հոդեմ ես կառավարութեան գլուխը, հոդեմ. հլա մտիկ. խմբերն եկել են մեր տներումը նստել, մեր կնանոց ծոցը մտել, մթամ թե թիկունքը պահում են, մեզ զրկել են զերքերը, եզ հերիք չի, ես խեղճ ու կրակ աչքերը քոռ Կիկոսին ել են կռիվ քչել: Սա կռիվ անող մ...

— Բա վոր քեզ ասում եմ՝ ես բանը բանի նման չի, իչիցը ձի չի ծնվիլ, հավիցը—արծիվ, չես հավատում... Մի կառավարութեան կռիվը վոր Կիկոսն ըլի, նրա բանն ել ըսենց կըլի ելի...

— Տո, մարդ հարցնող ըլի, թե ախր ո՞ւմ դեմն ես կռվում ե՞ս, ո՞ւմ դեմը... ուտի դոշունի առաջ մարդ կդիմանա...

— Իմացա՞ր եսոր ինչ ելին ըղավում դիրքերից. ասում ա՝ «տավարիչ չի ստելչալ, սերովնա պրիդյոմ»:

— Յես նրա «պրիդյոմին» մատաղ, դե գա, ելի, ել ո՞ւմ ճամպեն ա պահում...

— Ա՛րա, տեսում չես, իսկի կռիվը կռիի նման չի... ու՛րում չեն թե կոտորեն. կասես խաղ են անում, խա՛ղ... նրանք վոր ուզեն, մի սհաթում դիփ քարուքանդ կանեն. միտդ մ, Ավստրի գրանիցում են ինչ ելին անում: Համա մեզ դուշմանի տեղ չեն գնում. ուզում են խաղաղ վերջանա, վոր մարդ չփչանա:

— Բա ճամպեքը խի չեն բաց անում, ճամպեքը...

— Վճնց չեն բաց անում. նրանք ես մեր կառավարութեան ասում են՝ թող յերկիրը սավետական դառնա, ճամպեքը բաց անենք, ետ խալիսը մի ազատ շունչ քաշի, սրանք ել համաձայն չեն. ես կռիվն ել զոռով ստեղծել են, միթամ իրանք մնան ես յերկրի տերը, ու մենք ել եսպես տանջվենք...

— Ընչի՞ր, ես կառավարութիւններ չի հասկանա՞ւմ, թե ժողովրդի թշնամին ա...

— Շատ լավ ա հասկանաւմ, համա ես ել ա լավ հասկանաւմ, վոր նրանք եկան թե, չե իրանք թռչելու լեն իրանց փափուկ տեղերից: Տեսնում չե՞ս, վոնց ես ելի հին աղալարները լեղու առել ու մեր վզին նստել... Ոչով չի ուզում վոչ իրան ունեցած հողեցը զրկւի, վոչ ել գովաթից, ջհանդամը թե խեղճ, քյաոիբ խալիբ կկոտորվի...

— Հիմի քու ասելով նրանց սավետի վախան ըսենց չի ըլե՞լ... Ելի քյասիբին ճնշելու չե՞ն... աշխարհս գոռովինը չի ըլե՞լ...

— Աշխարհը գոռովինն ա ըլելու, համա եդ գոռը մեզ պեսների ձեռին կըլի... Բայլ չեիկի մերը չմեռնի, վոր նա մի գոռա կամ քոխվա—քիթխուղա ու խմրապետ սաղ թողնի. սրբելու չա, սրբելու...

Կիկոսի գլուխը, վոր ես տեսակ բարակ բաներից չեմ հասկանում, շուտով քնի գիրկն ընկավ:

Լուսը դեռ չբացված, Կիկոսը վեր թռավ մի սարսափելի զորոյցից, կասես թե մինը նրա ահանջին մի պինդ սիլլա ծեփեց: Կռիփն սկսվել եր:

VI

Կիկոսը կռիփն իմացել եր, չեմ տեսել: Նա ու են սարի ծեփից թնդանոթները վորոտում ելին, կարծես ամպերն իրար հետ կոխ ելին բռնել յերկնքում ու զորոյցից սար ու ձոր շարժում, իսկ զիրքի վրա գնդակներն ենպես ելին վզուում, վոր Կիկոսին թվաց, թե ինքը մի հսկա մեղվանոց ե ընկել, ու եդ մեղվանոցն ընկած արջի պես, չեմ իմանում գլուխը վոր անկունը կոխի, վոր ազատվի:

Կռիվը քանի գնում սաստկանում եր: Կիկոսը մի անկյունում վողնու նման փշքաղել ու կուչ չեկած տաղ եր արել: Նա շշմել եր ու կասես գլխումը հարսանիք եր դրմբում: Նա ենպես եր ապուշ կտրել, վոր յեթե եդ բոպեյին մեկը նրա անունը հարցներ, նա դժվար թե կարողանար հիշել իր անունը:

Նա ենպես եր քարացել, անզգա դարձել, վոր մինչև անպամ չնկատեց, թե ինչպես գիրքում կուլող տղաներից մի մասը փախավ, իսկ մյուս մասը հրացանները բարձրացրեց ե «ուռա» տալով անցավ հակառակ կողմը:

Դիրքը դատարկվեց:

Կռիմը ել առաջվա պէս սաստիկ չեւ: Լսվում էին հատ ու կենտ արաքոցներ:

Կիկոսի գլուխն ալժմ վարար ու հանգարտ հոսող գետի պէս թշուռմ էր, յերբ գլխի վերեր մի պողավոր մարդ կանգնեց, հրացանը դեմ արած դռին ու ինչ-վոր բան ասաց, վորից Կիկոսը վռչինչ չհասկացավ: Պողավոր մարդը նորից բղավեց, բայց Կիկոսն ելի չհասկացավ. նրան թվաց, թե տեսիլքի մեջ է: Իր որումն եղպես պողավոր ու յերկար, կախ ընկած ականջներով մարդ չեւ տեսել: Պողավորը հրացանի ծալքն ել ավելի մոտեցնելով Կիկոսի կրծքին, յերեսը շուռ տվեց ու բարձր ձենով կանչեց, վորի վրա միքանի ուրիշ պողավորներ ել վրա վաղեցին: Նրանք իրար հետ ինչ-վոր անհասկանալի լեզվով խոսեցին, վորից հետո մեկը մոտենալով Կիկոսին՝ հայերեն լեզվով հարցրեց.

— Ա՛յ մարդ, հայ ես...

Կիկոսը վռչինչ չկարողացավ պատասխանել:

— Բեզ հետ չմ՛մ, ա՛յ մարդ. թվ ես, ի՞նչ մարդ ես, անուշդ ի՞նչ ե: Ի՞նչ ես պապունձվել.—բարձր ձենով կրկնեց պողավորն ու թափ տվեց Կիկոսի ուսը:

Կիկոսը յերազից վեր թռածի պէս հազիվ կշկզաց.

— Թվանքը դէնը պահեցեք, վախում եմ...

— Դե դու յել, թե հրացան կամ մի ուրիշ զենք ունես, դէն շարտի:

— Յես մի զագ ել ա ունեմ վոչ, ինձ սպանիլ միք...

— Բա վոր զենք չունես, ես դիրքում ի՞նչ ես շինում:

— Ըսկի՛... հրամայել են, յես ել եկել եմ կռիվ...

— Դե տեղից վեր կաց:

— Ըհը՛,—ասեց Կիկոսն ու որովհետև տեղիցը կանգնեց:

— Դե մտալ անցիր.—հրամայեց պողավոր հալը:

— Չեզ մատաղ, ինձ սպանեք վոչ...

— Մի վախենա, վռչինչ չենք անի, առաջ շարժվիր:

Կիկոսին առաջներն արած՝ պողավորները տարան մեծավորի մոտ:

— Ընկեր, սրան դիրքում գտանք.—ասեց պողավորը մեծավորին:

— Անուշդ ի՞նչ ե.—հարցրեց մեծավորը:

— Կիրակոս, Կիկոս են ասում ինձ... Թափալանց Մակիչի տղա Կիրակոս... յես մի անշառ մարդ եմ, ինձ սպանեք վոչ:

Մեծավորը կարգադրեց, վոր Կիկոսը նստի մի թուղթ գրեց, տվեց մի պողպատե, վորն իսկուհն վազեց: Քիչ հետո յերեք հոգի յեկան, վորոնք Կիկոսենց գլուղիցն եյին, բայց քաղաքումն ելին ապրում, Բալախանու զավոդներումը: Կիկոսը թեև զարմացավ, վոր նրանք ել ելին պողպատ, բայց քիչ սրտապնդվեց:

— Յես ձեր արեին մատաղ, Մուսի ջան, Մուկուշ ջան, Սևան ջան... ինձ հո ճանաչում եք, ձեր խեղճ ու կրակ Կիկոսին. սրանց հասկացրեք, վոր յես անշառ մարդ եմ. ինձ կոխիլ զարկողի տունը կոխիլ ընկնի...

Տղաները քմծիծաղ տվին ու ինչ-վոր ուռեւերին բան ասեցին մեծավորներին, վորից հետո Կիկոսին տարան մի փոքրիկ սալլի մոտ, վորի վրա մի մեծ զազան եր դրված ու կրակ տալին վառած: Մի պողպատը բարձրացավ ես սալլի վրա, պղնձի բերանը բաց արավ, մի մեծ շերեփ ձեռք կալավ, խառնեց, խառնեց ու մի աման լիքը կերակուր տոնեց, դրեց Կիկոսի առաջին:

— Կուշայ, տավարիչ, կուշայ,—ասեց ու մի մեծ սև փռան «առժանովի սոմի» հաց կողքին դրեց:

— Խոչ անեմ... —հարցրեց Կիկոսը շվարած:

— Կուշայ, կուշայ... տակ... տակ... ասեց մարդն ու հացը կտրելով մի կտոր թաթախեց, ինքը կերավ.— կուշայ, տակ, տակ...

— Տաք տաք ուտեմ.— հարցրեց Կիկոսն ու սկսեց ուտել:

— Տակ, տակ, մալադեց.— ասաց մարդն ու պղնձի տակի կրակը թեփ արավ:

Կիկոսը, վոր մալադեց հասկացավ, ել ավելի սրտապնդվեց ու ամանը խաշտեց: Կերակուրը վերջանալուց հետո, մարդը Կիկոսին թիյ տվեց, ես ել շաքարով թեյ:

Կիկոսը, վոր լավ կշտացել եր, իրան-իրան միտք եր անում, թե ինչու յեն եղպես լավ պատիվ անում եղ պողպատները, վոր իսկի չեյին ել ճանաչում նրան, չգիտեյին նրա ով լինելը, բայց խելքը բան չեր կտրում:

Ճաշից հետո Կիկոսին նորից տարան մեծավորի մոտ, վորը ժպտալով հարցրեց.

— Հը՛, վիճեց ես, ընկեր Կիկոս, քեզ հո եստեղ նեղութուն տվող չեղանկ:

— Ձե՛, աղա ջան, շատ շնորհակալ եմ, լավ պատիվ արին, հաց ու չայ տվին:

— Ուղիւմ եմ քեզ քո տունն ուղարկենք:

— Վոնց վոր կհրամայես, աղա ջան, քու դուլն եմ:

— Չե՛ր, բանն հղպես չի. քո կամքն ե. կուզես գնա, կուզես հասեղ կաց:

Կիկոսը լերկընտրանքի մեջ ընկավ: Վժիռն եր լավը. գնալը թե՛ մնալը. չեր կարողանում վճռի:

— Են խ՛րապետ աղեն թե մեր գեղումն ա, հա՛... լա՞վն են ա հասեղ մնամ. թե ինձ կպահեք, թե չես մի բանի պետք կգամ.— վերջապես վճռեց Կիկոսն ու մեծավորին ասաց, զլուխը կախ սպասելով պատասխանին:

— Լավ, մնա ալստեղ, միայն մի պայման կա, վոր ամենքին պետք ե ընկեր ասես. մոռացի՛ր աղեն ու խաղեյի՛նը:

— Վոնց վոր կհրամայես, աղա ջան, հնպես ել կանեմ:

— Ի՛նձ ել պետք ե ընկեր ասես, ի՛նձ ել:

— Լավ ես հրամայում, աղա-հնգեր ջան, համա մի բան եմ խնդրում, թե կարելի չա՛...

— Ի՞նչ ե:

— Յես պարապ վոր մնամ, կհիվանդանամ, ինձ մի բանի դրեք, վոր հլե կերած հացիս հախն ելա դուրս գա:

Վոնց վոր յերևաց, մեծավորին շատ դուր յեկավ. նա ծիծաղելով ասաց.

— Ի՞նչ ես ուզում:

— Յեսի՛մ. մի բան ելի... Ա՛յ, թե վոր եշս կարաք ինձ հասցնեք, չես իմ եշո՞վն ես սաղ ղոշուհին կերակուր եփելու համար փետ կկրեմ. ես հանդերին չես լավ վալադ եմ:

— Լավ, ընկեր Կիրակոս, գնա են կերակուր յեփողի մոտ. կկարգադրեմ, վոր քեզ մի եշ տան:

Կիկոսն ուրախ հեռացավ մեծավորի մոտից: Նրան մի եշ տվին, վոր առաջն արած քշեց դեպի մոտակա քոլուտը՝ չոր փայտ բերելու:

Կիկոսը յերեք որ փայտ եր կրում: Գիշերում եր մոտիկ թուրքի գյուղում ե իրեն շատ լավ եր զգում: Նրա բախտից կերակուր յեփող Իվանը մի լավ տղա յեր, վոր ազատ ժամերին նրա հետ ձեռով-վոտով զրից եր անում: Կիկոսն արդեն միքիչ «առևերեն» եր սովորել: Նո՛ս գիտեր, վոր ռուսներին պետք ե «տավարիչչ» ասի, կերակուրին—«բորոշ», հացին—«խլեբ», բարի լուխին—«զդրաստի», նստելուն—«սադիս», կանգնելուն—«ստոյ»:

Բայց ամենից հեռաքրքիր բանը, վոր կատարվեց նրա հետ, դա այն եր, վոր Կիկոսին ել պոզավոր շինեցին ու մի սալգաթի շինել հլ հագցրին, վոր չմրսի:

Կիկոսին վոչվոք չեր նեղացնում. յերբ ուզում եր, փայտ
եր բերում, յերբ ուզում եր, քնում եր, չերբ ուզում եր, ուտում
եր. մի խոսքով՝ գլուխը կարգին պահում եր և իսկի չեր ել մտա-
ծում, թե ինքը տան տեր ե, տունը վորեւ հոգս կամ ցավ կու-
նենա, կինը կարող ե սգալ իր անհետացած մարդու կորուստը,
և նման բաներ... Մեկ-մեկ ել թե միտն եր ընկնում իր եղբ, նա
մոռենում, նոր եղի մեջքը սղալում եր ու կարոտն առնում:

«Կիկոսի բանն ա դժար, թե չե տանն ինչ կա. վոնց ըլի
յուլա կգնան, հո չէն կոտորվելու. հենց գիտենանք մեռել եմ:
Տանիցը մի Կիկոս պակսելով տունը հո չի քանդվի...» — մտա-
ծում եր ինքն իրեն: Ու Կիկոսն ենպես եր սովորել նոր նիստու-
կացին, վոր կարծես ծնված որից զորքի համար կերակուր
յեփելու փայտ կրող լիներ:

Բայց մի որ ել... Մի որ ել յերբ փայտն իշին բարձած ան-
տառից վերադառնում եր շվշվացնելով, հեռվից տեսալ, թե ինչ-
պես գիրքերումն ել պողավոր չի մնացել. թե ուր են քաշվել,
չգիտեր: Թեև առավոտը փայտի գնալիս իվանն ասեց, ձեռով-վո-
տով հասկացրեց, վոր եղ որր մեծ կոխվ և լինելու, բայց Կիկոսի
համար դա միևնույն եր, քանի վոր նա սովոր եր եղ բանին,
գիտեր, թե ինչպես կոխիլ տմեն որ ել լինում ե, կայց պողավոր-
նեին իսկի տեղերիցը ժաժ չեն գալի: Իսկ ուր են դնացել... Կիկոսն
եսպես մտածուր կանգնել եր, չիր նկատեց, վոր եղ հեռացել ե
ու սովորականի պես ծովել են կողմը, ուր գտնվում եր ի-
վանի շարժական ոջախը: Նա միքիչ քայլերն արագացրեց՝ բղա-
վելով:

— Թեկը, թեկը՝ քու տերը մեռնի վոչ. թամամ վոր եչ
ես, տնում չի՞ս՝ իվանն ըտեղ չի, թիչ ես գուդեղ տափին դրած,
լոշերդ կախ արած գնում...

Իսկ եղը փոխանակ կանգ առնելու, վազքն ավելի արագաց-
րեց, վոր շուտ տեղ հասնի ու ծանր բեռիցն ազատվի: Կիկոսը
վազեց: Են ել եր տեղ հասել, ինքն ել. բայց իվանը չկար:
Կիկոսը բարկացավ եղի վրա.

— Բա եղ խի՞ կանգ առար, հանվան. դե գնա չի, գնա ի-
վանին գտիլ. քեզ վոր ասում եմ իվանն ետեղ չի, հավատում
չիս, հիմի մեր բանը վոնց պլտի լի...

Կիկոսը միքիչ կանգնած մնաց, մտածելով, թե դեպի վոր
կողմը գնա, վորտեղ գտնի պողավորներին, բայց չկարողացավ
մի ճամպա մտառալ: Թարսի պես ել որը ցուրտ եր:

«Ես խեղճ հալվանի բեռն ել ա թափեմ, մեջքը կկոտրի», — մտածեց Կիկոսն ու փախը թափեց: Ելը բեռիցն աղաավելով, քուցին-քուցին արավ, մեջքը թափ տվեց ու պինչը տափերը քսելով սկսեց խոտի մնացորդները ղոնդացնել, իսկ Կիկոսը փախտի մոտ նստեց, թե մի լավ միտք անի ու վորոշի ուր գնալ: Նրա միտքը ենթան մոլորվել եր, վոր նստած տեղը քիչ մնաց փետանա, սառչի, ու մի ասոդ ել չ'լար, վոր գոնե կրակ անի տաքանա:

Են ել, վորի մարմնի տաքութունն անցել եր ու կամաց-կամաց սկսել եր սառչել, դարձացել եր, թե ինչու Կիկոսը չի մոտենում իրան, մեջքը չի տրորում ու չուլը վրան գցում, վոր չ'մտի: Նա համբերութունը հատած, մոտեցավ Կիկոսին, հոտոտեց ու պընչովը կամաց թղեց նրա ուսը: Կիկոսը լուռ եր. նրա իշի փաղաքշանքին չպատասխանեց. հըը քիթը վեր քաշեց ու բերանը բաց արավ, պոռչները պրպտացրեց ու թամամ Կիկոսի ականջի մեջտեղը մի պինդ դաաց: Կիկոսը գլուխը կամաց թեքեց, վոր իշի ձենն ականջը չընկնի, ու գորովապուծ ձայնով ասեց.

— Կանչի, կանչի, քե մատաղ, կանչի, բալքի ձենդ ի վանին հասնի, լետ դա:

Բայց ով եր տվել ի վան...

Ելը մին ել փռացրեց, քթածակերը մաքրեց, վոր իր գուռնին ել պինդ փչի, չեր մի գլուլլա հըղ՝ղ՝ արավ... ու թամամ իշի լետի վրաների մեջտեղը:

— Պան քու տերը մեռնի, շշկված գլուլլա, քիչ մնաց իշիս վրաները ջուր տներ. ես անտերը վորդիսն եկավ... — տեղից վեր թռավ Կիկոսը և ուզեց իշին հեռացնի, բայց հենց վեր կենալը տեսավ. մի գլուլլա լեկ շշկվացնելով նրա ականջի մոտոջն անցավ:

— Պան քու տերը մեռնի, ես անտերը քիչ մնաց քլալիս շուռ տար. — ասեց շշկված Կիկոսն ու մտավ իշի փորի տակը: Բայց դեռ մի վայրկյան չանցած՝ յերբորդ դնդակը թըմփաց նրա վրաների մոտ:

— Հալրաթ մեղ տեսնող կա, ելի. — փնթփնթաց Կիկոսը. — թամամ գլուլլախորով պտեր անիլ. մի հարցնող ըլի, թե Կիկոսը դրանց լի՞նչ ա արել, հու հետները կոխվ չի անում վոր...

Չորրորդ գնդակն իշի աջ ականջի ծալրին կպավ, ու հըը ծուլ ելավ, յետի վրաներով տուր թե կտաս ես քու Կիկոսի մեջքին ու փախավ:

— Ա՛ տերը մեռած, թեր ես փախչում, ես անվիրու-վիրու

(անվայրի վայրի) չորում ինձ մենակ թողնում, ես հարամ գյուղի բռնիքին.— ճշաց հուսահատ Կիկոսն ու վեր կացավ, թե ինքն ել փախչի, չերբ հեռվից մի ձախ նրան կանչեց.

— Ստոյ, ստոյ...

Կիկոսը տեղը կանգնեց ու բախացած. «հալբաթ Իվանն ա», մտածեց նա ու ձայն տվեց.

— Ա՛րի, Իվան ջան, արի, յես քու հոգուն մատաղ, ընհենց չոր դրավա յեմ բերել, վոնց վոր սպիչկա:

Ձայնն այս անգամ ավելի մոտեցից եր գալիս, վոր ելի «ստոյ» եր կանչում:

— Ա՛րի, Իվան ջան, արի, տեսնում չե՞ս՝ տեղիցս ժաժ չեմ գալի, ես ա կաղնած եմ ելի, ել սրանից լավ վճնց ա՜սոյ անեմ... համա եշս զրտեմ վոչ ինչ ելավ...

Ձայնը «ստոյ, ստոյ» անելով մոտեցավ, բայց ձայնատերն Իվանը չեր: Ասենք վոր Իվանը չեր, եղ վոչինչ, բայց պոզավոր ել չեր, մի շատ սովորական սալդաթ եր, ոռու թագավորի ժամանակի սալդաթի նման, վորը հրացանը թամամ Կիկոսի գոշին նշան բռնած մոտենում եր: Մոտեցավ, մոտեցավ ու մի պինդ բղավեց.

— Ստոյ, բայլչեիկ, թե չե հրեա ջիգարդ գյուղիս ծերով թիկունքովդ կհանեմ:

Կիկոսը նոր հասկացավ, վոր Իվանը չի, հաչ ե, բայց լավ չեր ջոկում, թե ով եր յեկողը:

— Բալչեիկ ես.— հարց տվեց յեկողը:

— Չե...— ծոր տվեց Կիկոսը:

— Հաչ ես...

— Հա՛...

— Ձեռքիդ զենք, հրացան-բան ունե՞ս...

— Մի զադ ել ա ունեմ վոչ:

— Դե ձեռներդ բարձրացրու, թե չե գլուխդ շաղ կտամ: Կիկոսը ձեռները վեր բարձրացրեց ու լետեի վրաների վրա կանգնած արջի նման սկսեց տմբատմալ:

— Մոտ արի.— ձայն տվեց հրացանավորը Կիկոսին:

— Ըհը՛, ես ել յես. մի լավ մտիկ. ի՞նչ ես ուզում ինձանից. յես մի անսեղ մարդ եմ.— ասեց Կիկոսն ու մոտեցավ, նկատելով, վոր առաջը կանգնած ե մի ղինվոր, վոր աչքերն արյունով լցված, կատաղած, ուզում եր հարձակվել Կիկոսի վրա:

— Ո՛վ ես, ի՞նչ մարդ ես, վճրտեղից ես.— հարց տվեց ղինվորը:

— Յեա եդ վերի գեղիցն եմ. անունս Կիկոս ա, Թոփալանց Մակիչի տղա Կիկոս, ինձ սաղ գեղը ճնանչում ա:

— Անցիր առաջ.—հրամայեց զինվորը:

— Հրաման քեզ, բան չեմ ասում, մենակ թող տեսամ, եշս ինչ ելավ, եշս ել տանենք.—ասեց Կիկոսն ու ծովեց դիպի իշի կողմը, վորը մի քարի տակ կանգնած՝ Վերավոր ականջն եր թափահարում:

— Կանգնիր,—գոռաց զինվորը.—չարժվես:

Կիկոսը տեղը մեկվեց, իսկ զինվորը լերեսով դառնալով գեպի վերևի դիրքերը, գոռաց.

— Յեկեք, յեկեք, բալլեիկ եմ բռնել...

Սարի գոշից յերեք հոգի թփթփալով ցած թռան: Նրանք շրջապատեցին Կիկոսին ու ապուշ-ապուշ նալում հլին նրա տարորինակ գլխարկին, շենք ու շնորհքին, լերբ մին ել Կիկոսն ու բախացած, թե՛

— Վճւլ, Ունան ջան, քե մատաղ, եդ դու լիս... Ա՛դա, բա հենց ինձ եք քոռ ասում, դու եդ վճնց ես քոռացել, վոր ճնանչում չեա Կիկոսին:

Ունանը, վոր Կիկոսի աներձագն եր, զարմացավ, թե վճնց ե Կիկոսն ընկել բայլլեիկների մոտ:

— Կիկոսն էս...

— Բա շունն էմ...

— Բա եդ գլխիդ պոզն եդ ինչ ա. եդ վեր կալ, վոր հավատամ, թե Կիկոսն ես...

— Ըհը՛.—ասեց Կիկոսն ու բաց արավ իր քառակուսի գրլուխը:

— Տո Կիկոս, գլուխդ չմեռնի, մենք ել հենց գիտենք, թե քեզ սպանել են. դու սաղ-սալամաթ եկել ես ու ըստեղ բալլեիկ դառել. գլուխդ չմեռնի, Կիկոս...

— Դու ճանաչում ես սրան,—դարձավ զինվորն Ունանին:

— Լա՛վ... իմ փեսեն չի՞...

Չինվորը հենց վոր իմացավ, թե Կիկոսն Ունանի փեսեն ե, մյուս յերկու զինվորի ոգնութլամբ նրան զինաթափ արավ ու առավ ողակի մեջ, ապա նրանցից մեկին ուղարկեց, վոր Կիկոսի եղբ բերի, իսկ մյուսին վազեցրեց, վոր շտաբում հայտնի, թե՛ «գերի չե բռնված, աբողի մի մասն ել հետը»:

Կիկոսին իր նոր իշի և Ունանի հետ առաջ արած գլուղն հլին տանում իբրև զբոլլեիկ գերի», և ճանապարհին ով վոր ծա-

նոթ եր դուրս գալի Կիկոսին, նրան ել ելին ձերբակալում, առաջ քշում, լենթադրելով, թե վողջ գլուղը բայլելիկներէ հետ կապ ե պահպանում Կիկոսի միջոցով:

Մութն ընկնում եր:

VII

Կիկոսը մի կողմից ուրախ եր, վոր տունն եր դառնում, բայց մյուս կողմից ել տխուր եր, վորովհետեւ խմբապետից վախենում եր: «Վալ թե անմեղ տեղից գլուխս թակի» — միտք եր անում նա: «Մհ, ինչ ըլելույա, կըլի... բալքի լալն ես ա՛ն...»

Եսպես մտածմունքի մեջ եր Կիկոսը, յերբ գլուղի ծայրին հասավ տղերանց հետ. բայց հենց ուղեց ճամպեն ձուր դեպի իրենց թաղը՝ զինվորները չթողին ե առաջ արած քշեցին ուղիղ դեպի ալն տունը, վորտեղ Կիկոսն առաջին անգամ տեսել եր խմբապետին:

«Հիմի վոր բանս պրծա՛վ» — միտք արավ Կիկոսը. — «հիմի վոր գլուխս թակել տվի, եսքան տարվա պահած գլուխս»: Բայց ինչ կարող եր անել. ընկել եր՝ պետք ե քաշեր. թուրքական առածն ասում ե՝ «գլուշան տղամազ» (ընկնողը լաց չի լինի):

Ուսկար գիշեր եր, եսքան խավար, վոր յեթն մատդ կողքիդ կանգնածի աչքը կոխելի, չեր տեսնի: Ուսկարը հո խավար եր, մառախուղն ել ճանկերը թաղել եր գետնին ե տափիցը կպել: Քոռեքոս գալով, պշպոշի տալով տեղ հասան կամ, ինչպես տղերքն ելին ասում, հասան «շտարի դուռը»:

Դռան պահապան զինվորն ուղեկից պահակից խմանալով լեկողների ով լինելը, դուռը բաց արավ ու ներս թողեց, իհարկե, Կիկոսի ելը կապելով բակի ծառից. թեև Կիկոսը խնդրեց, վոր եղն ել ներս թողնեն, բայց ծիծաղից զատ ուրիշ պատասխան չստացավ:

Կիկոսը զարմացավ, չերբ նկատեց, վոր խմբապետի փոխաբեն նստած եր մի ջահել «ափիցար», գառից կարած պլպլան ուսադիրներով, թրով, կոկարդով, չեքմաններով... մի խոսքով՝ իսկական ռուս թագավորի ժամանակի «ափիցար»:

«Հալբաթ թագավորն ել լետ թախտին նստելա», միտք արավ Կիկոսը ու միքիչ սրտապնդեց, վոր խմբապետը չկա, վոր թերևս «ափիցար աղեն» իրեն կլսի ու կհասկանա բանի հլուլթունը, բայց ափիցար աղեն հենց վոր նկատեց Կիկոսի պողը, մլուսներին դուրս ուղարկեց ու վրա թռավ Կիկոսին.

— Դու ե՛ն գերի ընկած բալլշեիկն ես հա՞...

Կիկոսը չիմացավ ինչ պատասխանի:

— Մոտ արի, մոտ,— վրդովված գոչեց սպան ու ծխախոտը վառելով, սենյակի կիսախավարի մեջ սկսեց անցուդարձ անել:
Կիկոսը մոտեցավ գրասեղանին, վորի վրա թղթեր ելին թափթփված, մի ծայրին ել փոքրիկ լամպա, վորի ապակու փորը թղթով կարկատած եր, իսկ ծայրը մրոտ, լույսն ել... տներն ինքը լույս համարի, պատրուզգի խանձված պոռչի մի ծայրի կարմրավուն բոցը բարձրացել եր հասել թղթի կարկատանին ու թուղթը մրկել, մյուս ծայրն ել կասես լամպի փորն եր ընկել ու ճիգ եր անում դուրս գալ եդ նեղ տեղից՝ յերբեմն «տըտ, տըտ» ձայն արձակելով:

«Ափիցար աղեն», յերևում եր՝ շա՛տ եր բարկացած. նա սենյակը չափողի նման մի անկյունից մյուսն եր գնում-գալի ու պապիրոսը պապիրոսի լետեից վառում, իսկ սեղանի մոտ նստած մի զինվոր համ գրում եր, համ ել մեկ-մեկ գրիչը պահելով նայում Կիկոսին, նրա պողին, ճակատի կարմիր աստղին ու գլուխը կամաց թափահարելով, շարունակում գրել:

Կիկոսն ապշած, արմացած-պեղացածի պես կանգնած եր ու մտքում ինքն իրեն ասում եր. «Վա՛յ քու տունը քանդվի, Կիկոս, ինչ թե քու որն ել եստեղ եր հատել... Միբիբ ե՛ն քշելու, Միբիբ...»:

«Ափիցար աղեն» միքիչ կարծես հանդարտվեց. մոտ յեկավ, Կիկոսին մի լավ տնտղեց, բոյ ու բուսաթն աչքով չափեց ու մոտենալով գրասեղանին, գրպանից ատրճաճակը հանեց, դրեց սեղանին, գրագիր զինվորին պատվիրեց, վոր թուղթն ու գրիչը պատրաստ անի, ապա դարձավ Կիկոսին.

— Տեսնում ե՞ս այս ռեվոլվերը. սրա մեջ չոթ փամփուշտ կա. յեթե սուտ խոսեմք՝ չոթն ել կդատարկեմ սրտիդ մեջ. իմացա՞ր... դե, ասա անուն-ազգանունդ:

Կիկոսը լուռ եր. նա զարհուրանքից գլուխը կորցրել եր:

— Ի՞նչ ես պապանձվել, քեզ չեմ հարցնում. ասա իսկույն անունդ ու ազգանունդ:

— Յես Կիկոսն եմ.— հազիվ պատասխանեց խեղճը, թուքը կուլ տալով:

— Ի՞նչ ազգանունդ...

Կիկոսը չհասկացավ, թե ինչ ե հարցնում. կմկմալով պատասխանեց.

— Գիտեմ Վոչ...

— Ինչպէս չգիտես, դու քո ազգանունը չգիտես... կարծում ես, թե միամիտ ես դուք, թէ կարող ես միամիտ ձևանալ ու ծածկվել. շուտ ասա ազգանունդ:

Կիկոսը կրկին լուռ կանգնած եր:

«Ափիցար աղեն» դարձավ գրագրին.

— Տեսնում եմ ես սրիկաներին, ինչպես համառ են...

Գրագիրը գլխով հավանության նշան արավ ու նորից գլուխը կոխեց թերթերի մեջ, քիթը համարյա կպնելով գրչածայրին:

— Լսիր,— դարձավ ափիցար աղեն նորից Կիկոսին.— միևնույն ես դու մեր ձեռքից չես աղատվիլ. ավելի լավ ե ասես՝ թիկ դու վերադարձիր ես, ինչո՞ւ ես պարտավ մինչև բայլչիկ դառնալդ ե ի՞նչպես ես գերի ընկել մերոնց ձեռքը: Իմացմիր...

— Վոնց չե, իմացա, հընգեր աղաջան...

— Ընկեր...— պոթկաց «ափիցար աղեն»,— լես քեզ ընկեր ցույց կտամ. համարձակվիր մեկ ել կրկնել այդ լիրբ բառը, տես քեզ ինչ կանեմ...

Կիկոսը թամամ կրակն եր ընկել, անհուր կրակը, վճից ասեր, ի՞նչպիս հասկացներ, վոր ինքը մի անմեղ մարդ ե, վճից ասեր, վոր աղի ասածը չի հասկանում: Նա հազար ռանգ փոխեց են յերկուդից, թե իրեն գնդակահարելու լեն, ու հանգամանքից ոգտվելով, վոր աղեն սենյակում բռլթա յե տալիս՝ գրագրի տկանջին, թե՛

— Աղին ասա, վոր լես ես գյուղացի յեմ, ինձ Կիկոս են ասում. ասածը հասկանում չեմ, թող մի դիլբանդ (թարգմանիչ) կանչի մեր գեղից, ինչ վոր ուզի՝ դիփ կպատմեմ:

Գրագիրը հայտնեց «ափիցար աղին», ու կեսգիշերին մարդ ուղարկեցին նախկին քոթավի լետեից, վորը միջանի բոպեյից ներս մտավ:

— Պարոն Սարիբեգ, ճանաչում ե՞ք այս մարդուն,— հարցրեց «ափիցար աղեն» նախկին տանուտերին:

Քյոթավա Սարիբեգը, վորին քնահարամ ելին արել, քունը դեռ գլուխը, տնակնկալի հանդիպած՝ աչքերը տորոնց ու կիսաթավարում պողավորին նկատեց: Վախենալով՝ մի գուցե իրեն ել մեղադրեն մի վատ գործի մեջ, մանավանդ վոր սպան զաւուց անմիջապես նրան հեռացրել եր իր պաշտոնից, առանց լավ դիտելու՝ պատասխանեց.

— Չե, պարոն ափիցեր, լես ես մարդուն առաջին անգամի եմ տեսնում, չեմ ճանաչում:

— Հապա ասում ես, վոր ես գլուղիցն ես.— զայրացավ «ափիցար աղին» Կիկոսի վրա ու վոտը գետնին խփեց:

— Դորթ եմ ասում, Կա ջան, իմ հոր գերեզմանը վկա, վոր յես ես գեղիցն եմ, ինքս ել Կիկոսը, բա քոխվա ջան, ինձ վճնց չես ճանաչում— քանի բուլթիլկա արաղ կըլիմ քեղ փեշքաշ բերած քանի՛-քանի անգամ կըլիմ հունձդ արած, կոռդ քաշած... ըսենց ել կրակ կըլի՛... Մարդու ել իրան գեղումը, իրան տանը ճանաչեն վճի՛...:

Քյոխվա Սարիբեզը ձենից նոր ճանաչեց Կիկոսին ու մոտենալով նրան, վրան բարկացավ:

— Կիկոս գլուխդ մեռնի, ինչ Կիկոս ես. բա վոր դու յես, խի՛ չես վախտին ձեն հանում, ես խալխին ել քիչ մնաց խաթի մեջ գցես...:

— Քյոխվա ջան, քու արևին մատաղ, բա ել վճնց ձեն հանեմ, ել փորումս ձեն ա մնացել, վոր հանեմ... եդ սե ռիվոլը տենողի փորումը ձեն, բերնումը լիզու կմնա... Դու իմ սրտի հալը գլտես վճի՛...:

— Ուրեմն ճանաչում եք սրան.— դարձավ «ափիցար աղին» քյոխվին:

— Հրաման քեղ, պարոն ափիցեր, ճանաչում եմ:

— Դե շուտ ասա ազգանունդ.— կրկին պնդեց ափիցար աղին, վրա պրծնելով Կիկոսին:

Կիկոսը լուռ եր:

— Քեզ չեմ ասում, էյ, Կիկոս ես, ինչ իշի պկու յէս...:

Կիկոսը կրկին լուռ եր. նա չեր հասկանում, թե ինչ է ուղում ափիցար աղին, չերը քյոխվա Սարիբեզը միջամտեց.

— Ա՛դա, խի՛ չես փամիլդ ասում:

— Փամիլը՛ս... Դե հայերեն ասա, վոր հսկանամ ելի... Փամիլըս Թոփալանց Մակիչի տղա Կիկոս ա ելի, խի՛, ափիցար աղին գիդում չի՛, ես գեղումը մի հատ Կիկոս կա, Թոփալանց Կիկոս, են ել հրես յես եմ:

— Գրի՛ Թոփալով Կիկոս Նիկիտովիչ, ոն Ժե Մակիչովիչ:

Գրադերը գրեց, վորից հետո սկսվեց մի լերկար պատմություն, թե յերը և ծնվել Կիկոսը, ինչով է պարապել, հայրն ու պապը ինչով են զրադվել, ինչպես է ծնվել, աչքերը ծնված որից շլդիկ են յեղել, թե հետո լեն ծովել, ինչու յին գլուղացիք նրա Կիրակոս անունը Կիկոս դարձրել, և հաղար ու մի տեսակ նման հարցեր եր տալիս, վորոնց Կիկոսը չեր կարողանում պատաս-

խանել, և նրա փոխարեն քրոխվա Սարիբեզն եր ասում—շատ սուտ ու զորթ խառնելով:

Կիկոսը կանգնած անդը փետացել եր. կես գիշերն անց եր, իսկ հարցաքննությունը դեռ չեր վերջացել: Կիկոսի վտտները հոգնածությունից մտմտում էին, կարծես մեկը յեղինջով նրա վտտները թակելիս լինել: Գլուխն ենքան եր հոգնել ու ծանրացել, վոր կարծես արճիճ էին լցրել: Նա չեր կարողանում հասկանալ, թե «ափիցար աղի» ինչին են պետք նրա կյանքի ամբողջ ժանրամասնությունները, վոր ինքն էլ իսկի լավ չգիտեր...

Վերջապես հասան են տեղը, յերբ «խումբերը» նրան բռնեցին ու քշեցին դիրքերը, վորից հետո քրոխվա Սարիբեզն ավելա չեր կարող ոգնել ու մնում եր, վոր Կիկոսն ինքը պատմի: Բայց Կիկոսը վճից պատմի, վոր նրա գլխումը վոչ խելք եր մնացել, վոչ հարաքլաթ:

Կիկոսը ոռւս թագավորին ծառայած, նրա ժամանակ զինվորություն արած տղերանցից շատ եր լսել, թե ափիցարները շատ տանջանք են տալիս, բայց սրա բանը, ես ափիցար աղի արարքը ամեն բանի տվեց անց կացավ:

— Դե հիմի դժւ շարունակի պատմել, թե ինչ էլիք շինում մեր դիրքերում, ինչու փախար ու անցար թշնամու կողմը և ինչ տեսաք այնտեղ,— դարձավ ափիցար աղեն ու ելի մի պապիրոս վառեց:

Սենյակը լցվել եր ծխախոտի ծխով. Կիկոսի շունչը կտրվում եր, կոկորդը խանձվում: Նրա կատիկը ցամաքել եր, լեզուն չորացել. նա ուզեց թե բերանը բաց անի ու ասի, վոր ինքը վոչինչ չգիտե, վոչ մի բանից տեղեկություն չունի, յերբ նրա ծանրացած գլուխը պտույտ եկավ ու ետոբ ես զնացել թե յերեկ— «թրճփ» — փռվեց հատակին:

Դրագիրն ու քրոխվան վրա վազեցին, յերեսովը ջուր տվին, քունքերը տրորեցին, գլուխը վեր քաշեցին ու մի ջրով լի բաժակ մոտեցրին նրա կապտած շրթունքներին: Կիկոսը հազիվ կում արավ ու ջերմոտի պես սկսեց սրթսրթալ:

Ափիցար աղեն, վոր այս ամենի հանդեպ անտարբեր եր, իրեն-իրեն մրթմրթաց ոռւսերեն լեզվով:

— Ա՛դա, բա քեզ նամուս չունես, լ՛նչ ելավ քեզ, խելքդ գլուխդ հավաքի.— կես խոճահարված ձայնով սաստեց քրոխվան Կիկոսին:

Կիկոսն աչքերը բաց արավ ու անկանոն թարթելով, դողդողացող շրթունքները հազիվ կառավարելով՝ ձայնեց.

— Ձեզ մատաղ, ինձ սպանեք վոչ...քրիստիան ջան, առավոտից մանանա չեմ դրել բերանս, գլուխս իմը չի. միքիչ թողեք զինջանամ, խելքս հաւաքեմ, յեննա ինչ ուզում եք արեք...— ու նորից աչքերը խփեց ու սկսեց սրթարթալ ու դողալ:

Քրիստիան Սարիբեգն ինչքան միջամտեց, վոր «ափիցար աղին» թույլ տա Կիկոսին գնա իրեն տուն, բան դուրս չեկաւ:

— Հը՛, հը՛, հաղիվ ե՛ ճանկս ընկել, յես բայլշիկ բաց կթողնեմ, ցե՛ս բրաթ, ցե՛ս, օո՛ւսիւ...— կտրականապես մերժեց «ափիցար աղին»:

— Հաւատացե՛ք, պարոն ափիցեր, սա փախչող մարդ չի, սա մի հաւսնի պես մարդ ա. թողեք գնա իրեն տուն. առավոտս ելի բերենք, թեկուզ սաղ-սաղ մաշկեցեք.— միջամտեց քրիստիան:

— Վո՛չ, պարոն Սարիբեգ, սա՛ ել ձեր գիտեցած Կիկոսը չի, ձեր առաջհիմի ուրիշ մարդ ե, չե՞ք տեսնում ինչպես ե սուտ հիվանդ կամ հոգնած ձկանում, յիրը խոսք ե բացվում բալլշիկները մասին. սա չի ուզում վոչ մի դադտնիք ասած լինի. սրան պետք ե շիկացած շամփուրներով դադել և ողողինք տալ, վոր դադտնիքներ պատմի... Դուք կտրճիլ եք յերաշխավորել, վոր ձեր առաջ փռված այդ մարդը, իր տուն գնալուց հետո անմիջապես չի ծլկվի բալլշիկները մոտ ու չի պատմի մեր զինվորական դադտնիքներն ու զորքի քանակը. դուք դեռ անփորձ եք զինվորական գործում. այն ել...նա զոցե վոյեցնիսի ղեյսսվիլ: Սա հո խմբապետների կռիվ չի՞. սա ռեգուլյար զորքի տակտիկա յե: Թե յերաշխավոր եք, տարեք ձեր տուն, ձեզ մոտ պահեցեք ու առավոտը վաղ ներկայացրեք: Կտանե՞ք...— վոզեորված վերջացրեց իր «ճառը» «ափիցար աղին» ու նորից մի պապիրոս վառեց:

Քրիստիան Սարիբեգն ել եր ֆնացել կրակում. թնչ աներ... «Ափիցար աղին» ենպես համոզեցուցիչ ձևով եր խոսում, վոր նրան ել թվաց, թե առջևը փռված ուշաթափ ու ծանր շնչող մարդը իր տեսած ու ճանաչած Կիկոսը չի: Հարցը շատ կտրուկ եր դրված. կարճիլ եր քրիստիան Սարիբեգը յերաշխավորել ու Կիկոսին առնել իր տուն ու պահել մինչև առավոտ... «Թե Կիկոսն իմ գիտեցած Կիկոսն ա, գլուխը թակես ել, նա իր տանից վոտը դուրս դնողը չի, չի փախչիլ». մտածում եր քրիստիան Սարիբեգը մեռածերով պես՝ Կիկոսի գլխավերեք կանգնած. «համա յես վճնց զամուց ըլնեմ ես դայդի խառնակ, հերը վորդուն ուրացած ժամանակը. չորտն ա խաբար, բալքի ես միքանի որում բալլշիկներն Կիկոսին փոխել մարդ են շինել...հը՛ը՛...չե, իմ բանը չի».—

վճռեց քոխովն միտը բերելով թուրքերեն առածը, թե՛ «բորջուն յոխտուր, գլեթ զամին ոյ»։ Եւսինքն՝ «պարտք չունես—գնա յերաշխավոր յեղիւր»։ Գլուխը կամաց թափահարեց քոխովա Սարիբեգն ու մի կողմ քաշվեց «ափիցար աղին» խնդրելով։

— Պարոն ափիցեր, թե իս ել անելու բան չունեմ, ինձ մուրախաս արեք (արձակեցեք), գնամ տուն...

— Հը...—ցուցամատը ճակատին դրեց «ափիցար աղին» ու մտածեց. կարծես ցուցամատով փնտռում եր իր ուղեղի մեջ պատասխանը, վոր դուրս քաշի։

Գլուխով Սարիբեգի համար ստեղծվել եր մի հոգեմաշ դրու-թյուն. «վայ թե ափիցար աղեն իրեն ել թուլլ չտա տուն գնա-լու. ինքն ինչ հանցանք ունի, հո թնքը չի Կիկոսին բալլեկի շինել»...

— Դո...մեք...—ծոր տվեց վերջապես ափիցար աղեն.—դուք կարող եք գնալ, բայց դեռ լույսը չբացված ալստեղ պիտի լինեք։ Այս մեկ, յերկրորդն ել, վոչ մի մարդու բան չպետք ե ասեք այն մասին, ինչ այստեղ կատարվեց. հասկացմք, թե չե լեզուդ ծոծրակովդ կհանեմ...

— Յես զուլլուդ արած մարդ եմ, երեկվա երեխնն հո չեմ...—պատասխանեց քոխովա Սարիբեգն ու դուրս գնաց։

— Կարգադրեցեք, վոր ես լեյը տանեն, գոմը գցեն, մի պահակ ել դռանը կանգնեցնեն,—պատվիրեց «ափիցար աղեն» գրադրին։

Դրագիրը դուրս գալով յերկու զինվոր կանչեց, վորոնք Կիկոսին բարձրացրին ու թևերն ընկած դուրս տարան։ Նա դուրսը մաքուր ողից ուշքի յեկավ, թեև լավ չեր հաշիվ տալիս իրեն, թե ուր ե ինքը, և ովքեր են իր թևերը մտած տանում, ու յերբ գոմի դուռը բաց արին և առաջարկեցին ներս մտնել, նա զինվորներին մի բան հարցրեց միայն.

— Ձեզ մատաղ, բա Թշս վորդեղ ա...

VIII

Գլուխով Սարիբեգի ու Կիկոսի հեռանալուց հետո սպան ջղայնացած ինքն իրեն մրթմրթաց. «դրա լեզուն պետք ե տակիցը կտրել, վոչինչ չի ասում, վոչ մի խոսք»...ու հանկարծ հիշելով, վոր Կիկոսի հետ ուրիշ մարդիկ ել կալին, բարձր գոռաց.

— Ել, պահակ։

Պահակը ներս յեկավ։

— Ի՞նչ արիր բալլէկիկի հետ բերած տղաներին:

— Նրանք դիմացի սենյակումն են, պարոն ոֆիցեր:

— Ներս ուղարկիր ըտլորին:

Պահակը «լսում եմ» ասաց ու մի րոպե չանցած, վեց հոգուն ել քնահարամ արած ներս բերեց:

— Ո՞վ և բռնել բալլէկիկին,—հարցրեց սպան:

— Ի՞նչ բալլէկիկ, աղա,—հարց տվեց մեկը, նայելով ընկերների լերեսին, վորոնք նույնպէս հայացքները փոխանցելով կործեա ուղում եյին տեղեկանալ իրարից, թե խոսքն ում ե վերաբերում:

— Ի՞նչպէս թե ինչ բալլէկիկ, ա՛յ են, վոր ձեզ հետ միասին եստեղ եր:

— Կիկոսը՝...

— Այո, հենց նա:

— Աղա, նա միբոսեղի բալլէկին ա, են խեղճ յեսիրը.— քմծիծաղ տվեց Ունանը, վորի քմծիծաղին միացան և մլուսները:—Են հո իմ փեսա Կիկոսն ա, իմ քվոր մարդը:

— Բո փեսան... Այդ լավ ե, շատ լավ ե.—գոհունակութիւն փայտը դեմքին ասաց սպան: Ապա պապիրոսը վառելով մոտեցավ Ունանին ու խորամանկ տոնով հարցրեց.

— Դու լավ ես ճանաչում նրան:

— Լավ... հինգ մատիս պես, իմ փեսեն չի՞...

— Իսկ դու տեսա՞ր, թե նա ինչպէս եր կռվում մեր դեմ:

— Չե, աղա, յես նրան եմ վախտը տեսա, վոր մեզ բերող սալդաթը բռնել եր ու մեզ ելկանչեց, թե բալլէկիկ ե բռնել. յես ել գնացի ու ճանաչեցի, բայց ինձ ել Կիկոսի հետ բռնեց ու առաջն արավ: Ես տղերքն ել վոր մեր գեղիցն են, վորը պատահեց ու մեզ բարով տվեց, արանց ել բռնեցին ու առաջ արին: Ի՞նչ բալլէկիկ, ի՞նչ բան. Կիկոսն ել բալլէկիկ կըլի՞...—պատասխանեց Ունանն ու նայեց իր ընկերներին, վորոնք գլխի շարժումով հավանութիւն տվին Ունանի ասածներին, իսկ ուսերի շարժումով զարմանքի նշան արտահայտեցին ոֆիցերի հարցի ու Կիկոսի բալլէկիկութեան վրա:

— Իսկ ձեզնից վոչվոք չգիտի, թե Կիկոսն ինչպէս ե փախել ու անցել բալլէկիկների կողմը:

— Են վախտը յես պապիցընի ի, միքիչ գիդամ.—ասաց Մինասը, վորը Կիկոսի հարեանն եր:

Սպան Ունանին թողեց ու հարցումիորձ արավ Մինասին,

վորը պատմեց ամեն մանրամասնութիւն, թե ինչպես «խուժ-
բերը» չեւին իմացել, թե Կիկոսը «աչքերի ինվալիդ ա», կոխվ
եւին ուղարկել, և թե ինչպես իրենք դիրքերը թողնելու ժամանակ
Կիկոսին մոռացել եյին այնտեղ: «Մենք հենց գիդայինք—ավե-
լացրեց Մինասը,—թե բալլեիկնին նրան սպանած կըլեն, համա
վոնց վոր տեսնում ես, հրեդ սաղ ա...»:

Սպան այս ամենը լսեց, հետո տղաներին ազատ արձակեց,
իսկ ինքը դառնալով գրագրին, պատվիրեց, վոր գրի առնի այն
ամենը, ինչ ինքը կթելադրի: Միաժամանակ նա կանչեց ձերբա-
կալող զինվորին և մանրամասն հարցութորձ արեց:

* *

Քրիստիա Սարիբեգը, վոր սիրտը դող տուն եր հասել, ան-
կողին մտնելով՝ չկարողացավ քնել, կասես թե շեղջի մեջ պառ-
կած լինել: Կինը վոր չեր հասկանում մարդու անհանգստութիւն
պատճառը, մեկ ուզեց հարցնի, մեկ ել՝ վախենալով, թե քրիստիա
Սարիբեգը կարող է բարկութիւնն իր վրա թափել՝ կողերը
ջարդելով, լռեց: Միայն առավոտը, դեռ լուսը չբացված՝ մարդը
չերթ թռավ տեղիցը ու դուրս վազեց, կինը համարձակութիւնը
հավաքելով՝ լիտեից կանչեց.

— Ա՛յ մարդ, մի թիքա հաց ելա կուտեյիր...

— Հաց չե՛ս ասածու կրակ ուտեմ, հրես վոր Կիկոսի տեղ ինձ
կախ կանեն, հացը նոր կիմանաս ինչ բան ա...

Քրիստիա Սարիբեգի կինը մնաց սառած, դռան շեմքին կանգ-
նած, չհասկանալով ինչումն է բանը:

Նա գիտեր, վոր Կիկոսը կորել է, բայց թե իր մարդն ինչ
մեղք ունի եղ բանում, վոր պիտի նրան կախեն, չեր հասկա-
նում, ու տունը թողնելով վաղեց Կիկոսի կնկա մոտ՝ մի խաբար
իմանալու:

Կիկոսի կինը քնատեղից նոր վեր կացած, գոմն եր մտել,
վոր հավերին կուտ տա, յերբ դոմիցը դուրս գալիս նկատեց, թե
ինչպես քրիստիա Սարիբեգի կնիկը վտտներով ցեխը ճմբռնելով ու
սոթ տալով վազում է դեպի իրենց տուն:

— Ա՛ղջի Անթառան, ա՛յ աղջի, ո՛ւր ես ըտհենց վաղ թեք ու
փեղդ հավաքած վաղ տալի, խեր ըլի,—ձայն տվեց Կիկոսի կինը:

— Ղու՛ւ, հողը գլխիս կենա, Թագագլու՛կ ջան, մարդուս փոր-
ձանք ա պատահել, քու Կիկոսի համար նրան են ուզում սպանեն.
մարդիցդ խաբար-բան չունեմ...

— Հոգն իմ ես սև գլխին կենա, ինչ են զայդի իգիթ մարդ կորցրի, ով գիդի Կիկոսի վոր վոսկոռը ինչ գելի փայ դառավ, խաբարը վճրդիան ա. արի, արի, ջալդ արի, մի տենամ եդ լինչ ես ասում...— ձայնը կերկերալով դնդնացրեց Թաղադյուլն ու փեշովը քիթը սրեց:

Անթառամը հեհեհ հասնելով պատմեց, թե ինչպես կեսգիշերին «ափիցար աղեն» կանչել եր իր մարդուն, թե ինչպես մարդը լուսադեմին մոտ տուն եր եկել, մինչև լույս չեր քնել, ու թե ինչպես կրկին վաղեց «ափիցար աղի» մոտ, ասելով, թե Կիկոսի տեղ նրան են կախելու:

— Վճռյ ջոռանամ չես, աղջի Անթառան ջան, եդ ինչք ես ասում, բա հարցրիք վոչ, թե Կիկոսը վորտեղ մ...

— Ել մաջալ ելավ, վոր հարցնեյի...

— Աղջի, ցավդ տանեմ, արի գնանք իմ հորանց տուն, իմ ախպեր Ունանը կովումն ա լել, բալքի եկած ըլի, մի խաբար կիմանա:

Գյուղը կամաց-կամաց արթնանում եր, ամեն կտուր ծխում եր առավոտվա կրակի չիբուխը, ծուխը քուլա-քուլա դուրս տալով բուխարու անցքից, շատերն ել ապրանքը գոմից դուրս արած քշում ելին դեպի աղբյուրը՝ ջուր տալու, յերբ Թաղադյուլն ու Անթառամը շնչակտուր հասան Թաղադյուլի հորանց տուն:

Թաղադյուլը ճռռալով դուռը բաց արավ ու ենպես ներս ընկավ, կարծես ավազակների հալածանքից փախչելիս լինելու: Ել «բարիլուսը» մոռացած՝ վրա թռավ դեպի գետնին փռած անկողիններն ու կիսախավար տան մեջ ճչաց:

— Ունան ջան, արև'իդ մեռնեմ, ախպեր ջան, վճրտեղ ես, լինչ խաբար ունես քու սևատար փեյիցը...

Տանեցիք թառժած ելան, յերեկիցը վեր թռան ու աչքերը չռած, վախից կուչ հկան, իսկ Ունանը, վոր խոր քնի մեջ եր, կամաց ճրրաց ու շուռ չեկավ մյուս կողմի վրա:

Ունանի կինը մոտեցավ Թաղադյուլին, թևիցը բռնեց ու կամաց ահանջին փսփոսաց:

— Ախպերդ մի սհաթ ըլիլ չի, ինչ տուն եկավ, թող միքիչ քնի քունն առնի. խի՞, մարդդ տուն չի եկել. բա ախպերդ ասեց, թե գտել ա...

— Գտել մ, սաղ ա գտել, թե՞ մեռած... Վա՛յ Ունան ջան, վեր կաց քվորդ թաղի փեսիդ հետ, վճրդի չես գտել նրա մեյիդը (դիակը)...

Ու Թազագյուլը վրա թռավ յեղբոր անկողնին և Ունանի գլուխը վեր քաշեց:

Ունանը քնահարամ, յերազ տեսնողի պես, աչքերը հազիվ բաց արավ ու նկատելով սուգ անող քրոջը՝ չհասկացավ բանի ելությունը:

— Ասա է, ասա, ա՛յ գետն ու ջուրն ինձ տանի, մի տուն յեթիմի տեր մնացի. ես թառւան Կիկոսին վճռդի թաղեցիր... սև ըլի իմ որը ինչ սեպցեմ...—Ու լալահառաչ սկսեց վողբալ Թազագյուլը:

—Ա՛ղջի, շաշվել ես, թե ձին գլխիդ քացի լա տվել, մարդդ են չեր, ինչ իրիկունը տուն եկեմ...

— Վ՛այ իմ հալիս, մարդիս գլուխը կտրեցին... վ՛այ իմ որին...—ձեն տվեց քրոխվա Սարիբեգի կինը, և մի վողբ ել նա սկսեց, ձայնը միացնելով Թազագյուլի ձայնին...

Տունը կարծես մեռած տուն լինեք. սրանց ձայնին միացան և յերեխաները, վորոնք առանց հասկանալու, իրանք ել սկսեցին լաց ու կականալ:

Ունանը վրա նստեց անկողնում ու վրդովված գոռաց.

— Ձեններդ կտրեցեք, բաղդու չեք հու, ես լիսածեգին քնչ եք զոզոսքը գցել... Դե՛հ չեմ ասում, է՛յ, քիբա, մարդդ սաղ ա. երեկ գտել եմ ու իրան իշի հետ առաջ արած բերել գեղը. թե մութն եր ու տունը չգտավ, գիզեմ վոչ, թե չե բերել եմ ու հասցրել գեղամեջ, հրեն է, ես վոր հիմի մեր ըշտաբն ա, ափեցարի ապրած տունը:

— Սուտ մի ասիլ, Ունան ջան, իմ Կիկոսի ելը հրեն գոմում կապած...ինչ Կիկոսը կորել ա, խեղճն ունքերը կիտած, պռոշը կախ միտք ա անում, յես նրա դարդին մատմղ...

Ունանը տեսավ՝ խոսք չի լինում հասկացնել թերահավատ քրոջը, ու մինչդեռ նա սգում եր քրոխվի կնոջ հետ միասին, ինքը հագնվեց ու հրացանը վերցնելով հրամայեց.

— Վեր կացեք գնանք ըշտաբը, թե վոր իմ բերած սաղալամաթ Կիկոսին մի բան պատահած ըլի, ափեցերի ջանն եմ քաշելու ես թվանքի հինգ գլուխն:

Ունանը յերկու սզվոր կնոջ առաջն ընկած գնում եր: Արեւը պռունգը դրել եր սարերին. գլուղը վտտի վրա յեր: Ես պատկերը տեսնողը վրա վազեց: Են վոր տղամարդիկ ելին, Ունանին հարցուփորձ հլին անում, բայց պատասխան չեին ստանում. նա կատաղած մի բան եր ասում միայն—«հրես կիմանաք»: Են վոր

կանայք եյին, մոտ չեկողը սգի տոպրակը բաց արած «վա՛յ» երանում ու ծնկները թակելով սգում, առանց հարցնելու, թե ում կամ ինչի համար:

Հինգ ընդհանրապէս ամբողջ գլուզն շտաբի դռանն եր: Վոչ-վոք չեւ իմանում բանն ինչումն ե. ամենքն աղմկում եյին, վոմանք հայոյում եյին կռիջն հլ, հնարողն ել, կառավարությունն ել: Իրար հետ հին հաշիվ ունեցողներն ել բղբողում եյին ու իրար վրա բռնեցք թափ տալի: Շատերն ել կարծելով, թե նոր զորահովաք ե լինելու, գոռում եյին:

— Բո՛ւ ա, հերիք ա, քանդվեցինք, ավերվեցինք, ել վոչ հալալ հաց մնաց, վոչ ապրուստ, վոթի տակ կորանք, կռիվ չենք ուզում...

— Թող ոռւսը դա, ոռւս ենք ուզում, ոճւս...

— Ես զայդի կառավարություն մեզ պետք չի. եկավ-չեկավ, կռիվը պոչիցը կախ արած. հալալ ապրուստներս հարամ արավ...

— Եկավ թե ճամպա բաց անի՞, թե ելածն ել կապի, թող կորչեն գնան, մենք մեր ճամպեն մասլահաթով բաց կանենք, կովից զահլեքս գնաց...

— Փռնալը բերել են դռն շեմքը կռիւել, գլուխդ հանում ես թե չե՞ գլուխն ճակատիդ ա կաշում:

— Զուխտ-շուխտ տղեքս գլուխսորով ելան, տանս դուռ բաց անող չկա՛ւ...— ճշում ու մազերը փետում եր մի պառավ կնիկ:

Աղմուկն ու իրարանցումը քանի գնում մեծանում եր. ամբողջը գրգռված պահանջում եր, վոր պահակ զինվորը դուրս կանչի ափիցերին: Ունանն ուզում եր զոռով ներս մտնի, բայց զինվորը նրան լեռ եր հրում և արգելում առաջ անցնել:

— Ունանին թո՛ղ, Ունանին թո՛ղ ներս մտնի, դուրս կանչի ափիցարին,—գոչում եր գրգռված ամբողջը:

Ունանը տեսավ՝ խաթրով ու խոսքով բան չի դուրս գալի, պահակ զինվորին գնն հրեց ու կատաղած ներս ընկավ և, նկատելով ափիցարին ու քոխվա Սարիբեգին իրար կողքի նստած առանց Կիկոսի, գոռաց:

— Վճրդեղ ա Կիկոսը, ի՛նչ հք արել նրան, ես սահաթին ասացեք, թե չե ես ըշտաբը հրես տակնուվրա կանեմ:

Քյոխվա Սարիբեգը նկատելով, վոր բանը կարող ե վատ վերջանալ, սպախին խորհուրդ տվեց դուրս գալ, և խաղաղացնել բորբոքված խալիսին:

Սպան սփրթնեց, վեր թռավ, ատրճանակն ու թուրը կռպեց և քոխվա Սարիբեգի հետ միասին ուղեց դուրս գալ, Ունանն առաջը կտրեց.

— Դեղանից Կիկոս եմ ուզում, Կիկոս. ջուղաբ տուր, յեննա դուրս արի: Սպանել եմ, թե թնչ ես արել...

Սպան ուղեց հարձակվել Ունանի վրա, բայց քոխվա Սարիբեգը միջամտեց:

— Պարոն ափիցեր, մեր խալխի խառնաթը փիս ա, կտան մի վատ բան կանեն. տես՝ դուրսը ինչ մեծ դամաղալ ա... Մի քիչ քեզ հավաքի, խալխի հետ հանաք անել չի ըլիլ. ամենքի ջիգյարն ել դադված ա. .

Սպան կարծես ուշքի յեկավ ու կանչելով գրողներին՝ պատվիրեց, վոր դուրս գա, Կիկոսին բերել տա. բայց գրագիրը գլուխը դուրս հանեց թե չե՝ ամբոխը մի խելագար գողում-գողումով աղաղակեց.

— Ափիցարը թող դուրս գա, ափիցա՛րը, տենանք թնչ ջուղաբ ա տալի խալխին. կոխվը յերբ ա վերջացնում, ճառալեքը յերբ ա բաց անում...:

Դրագիրը շփոթված նորից ներս մտավ:

Դրությունը քանի գնում լրջանում եր. բավական եր, վոր մեկը գոչեր՝ «տվեք», սաղ տունն ողը կցնդեցնիլին:

— Բա վոր քեզ ասում եմ, թե խալխի փիս վախտն ա, չես հավատում, պարոն ափիցեր. տես թե իսկի մարդու ականջ են կախում...—ապա դառնալով Ունանին՝ ասաց.—Արա, Ունան, դուրս արի, հրեն Սիսականց դոմումն ա Կիկոսը, հանի, բեր, բալքի եդ խալխը հանդարտվի, թե չե մի Կիկոսի խաթրու ես գեղում արինհեղություն կպատահի: Դու յեյ, պարոն ափիցեր, եստեղ կաց, մինչև խալխը միքիչ հանդարտվի, հետո դուրս կգաս, յիրբ վոր յես կասեմ: Դուրս գամ, ելի լես հին քոխվա յեմ, ինձ բան չեն անիլ:

Ունանը հաղիվ ճեղքեց ամբոխն ու վաղեց դեպի Սիսականց գոմը, վորին հետևեցին միքանի հոգի, իսկ քոխվա Սարիբեգը դիմացը լելավ թե չե՝ աղմուկն ելի սաստկացավ:

— Ես դիմ քու սարքած բաներն ա հա... քոխվա Սարիբեգ.—ճչաց մի յերիտասարդ...

— Ինչն ա իմ սարքածը, ինչը, թնչ ա պատահել. հըր եք հավաքվել...

— Դու շատ լավ ես գիտում, թե ինչն ա քու սարքածը, ել

ինչ պատահի, պատահածը քիչ ամ. հիմի հլի թագա պլանեք քաշում, վոր սաղ գեղը սրի քաշեք ..

— Սարսաղ-մարսաղ դհւրս մի տալ, շա՛շ. մի սուս կացեք ու բան հասկացեք. հիվ ա ձեղ սրի քաշողը:

— Չենք ուզում, չենք ուզում...— Բարձրացալ մի աղմուկ:

— Ի՞նչը չեք ուզում, ի՞նչը, ա՛ խալխ, հո գժվել չեք,— ձայնը բարձրացնելով գոռաց քյոխվա Սարիբեգը.— երեկ մեր զորքը հաղթեի ա. կռիվը տարեի ենք, դուք հավաքվել եք, թե չենք ուզում, ի՞նչը չեք ուզում...

— Կռվել կռիվը չենք ուզում, թող քաշվեն գնան հստեղից, թողուսը դա. եդ դայդի հայեր մեզ պետքը չեն, ետ դայդի հայի թագավոր չենք ուզում: Նիկալային հո դրանց համար չենք թախտիցը վեր գցել:

Մինչդեռ քյոխվան սատանի լեզու լեր բանեցնում, վոր խալխին հանգստացնի, Ունանը Կիկոսի թեկից բռնած բերեց, Կիկոսին առաջին տեսքից վռնվոք չճանաչեց, բայց նրա գլխի պողը, կախված ականջներն ու յերկարափեշ շինելն ամենքի ուշքը գրավեցին, և նրանք թողնելով իրենց աղմուկ-աղաղակը քյոխվի ու ափիցերի դեմ, իրար հրելով շուռ եկան դեպի Կիկոսը, վորի ընդհանուր տեսքը մի վողորմելի տպավորութուն եր թողնում: Ամեն կողմից հարցերի տարափ տեղացիին Ունանի գլխին.

— Ադա եդ հիվ ա, Ունան. վո՞րդեղացի չա. եդ վո բեգդից հանեցիր...

— Եդ ի՞նչ միլլաթ ա, հալար խոսալ գիդա...

Ունանը ձեռքը վեր բարձրացրեց, նշան տալով, վոր լռեն:

— Ճամպա տվեք, թող անց կենանք հասնենք ափիցար աղին. ես մարդը բալլելիկ ա, երեկ ենք բռնել դիրքերումը...

Գլուղացիք բայլելիկ անուշը լսել եյին, բայց չեյին տեսել. ամեն մեկը աչքերը չռած ուզում եր մի լավ դիտել ու վաղափար կազմել, չերը մեկը մոտենալով Կիկոսին, դեմքը մի լավ զննեց ու բացականչեց.

— Ա՛րա Ունան, դորթ ա, ասում ես բալլելիկ ա, համա աչքերն ենք ան հման ա Կիկոսին...

Պալխը ես սրամտության վրա ծիծաղեց:

Բորբոքված տրամադրութունն անցել եր, չերը Կիկոսին Ունանը թեկից քաշելով մի կերպ խալխի միջից ազատելով, գցեց ափիցար աղի սենյակը բղավելով.

— Ը՛հ, էս ել քու բալլելիկ Կիկոսը, մի ասա տենամ ի՞նչ

ես ուզում ես խեղճ ու կրակիցը, վոր ենքան չարչարում ես. հրեա լեզուն կապ ա ընկել:

Սպան տեսնելով Կիկոսին, ուրախացավ, վոր վոչ փախել է, վոչ էլ մի բան է պատահել: Նա յենթադրում եր, թե Կիկոսը կամեցել է դոմից փախչել, նրան պահանջն սպանել է, իսկ գլուղացիք բորբոքված լիկել, պահանջում են իրենց մարդուն:

— Վհյ Կիկոս, գլուխդ տափը դնեմ ինչ Կիկոս ես. եսքան զաւմաղալը սարքեցիր մեր գլխին, — գլուխը պտուլյտ տալով ասավ քլոխվա Սարիբեգն ու դառնալով սպային՝ ավելացրեց. — Թող գնա կորչի իրան տուն. քեզ ասում եմ՝ անշառ մարդ ա. թող գնա իր բանին, թե չե ես խալիսը հենց կիմանա եստեղ մարդիկ ես մորթոտում:

— Վհյ, — պատասխանեց սպան. — դեռ ամեն ինչ վերջացած չե. սա պետք է արձանագրությունն ստորագրի. այնուհետև հատուկ լեռաշխավորով կարձակեմ տուն, վոր տանից դուրս չգա. սա պետք է տնային բանտարկության լինթարկվի:

Կիկոսն, իհարկե, վոչինչ չհասկացավ. նա միայն զարմանում եր, թե ինչու «ափիցաբ աղեն» իրեն չեւ արձակում. ի՞նչ է աբել ինքը...

Դուրսը աղմուկը հանդարտվել եր. բայց դրա փոխարեն մի այրող հետաքրքրություն եր մտել ամեն մեկի մեջ, վոր հանգիստ չեւ տալի վոչվոքի: Բոլորն էլ դիմում էյին դեպի շտաբի սենյակի միակ լուսամուտը և ձեռներն ականջներից ցած բռնելով՝ հենվում ապակուն ու նայում ներս, վոր բալլճիկին լավ տեսնեն:

— Դե, պարոն ափիցեբ, դուրս արի ես խալիսին ցրի, թող գնան իրանց բանին. մեկ էլ, վոնց վոր յերեւում ա, շատ են ուզում եդ «բալլճիկին» տեսնեն. դուրս բեր, թող թամաշա ելաւանեն, հետո ինչ վոր ուզում ես, են արա, — ասաց քլոխվա Սարիբեգն ու քթի տակ ծիծաղեց:

Սպան, վոր ջղախնացած, պապիրոսը վառած, վոտները դետնին թակելով լետ ու առաջ եր վազում, վտանգն արդեն անցած համարելով, վորոշեց ոգտագործել Կիկոսի «գերի ընկնելը» և ծառայեցնել նրան իբրև պրոպագանդայի նլուժ խավարամիտ ամբոխի վրա հարձակման դիմելով, ցույց տալ նրան իր կառավարության ուժը, պատմել նրա տարած հաղթանակների մասին և կոչ անել արթնացնելու ամբոխի բթացած հայրենասիրական զգացմունքը:

Նա պատվիրեց, վոր տասը զինվոր շրջապատեն իրեն, ողա-

կի մեջ առնելով Կիկոսին, քլոխվա Սարիբեգին և Ունանին: Ամբոխը ձեղքելով նա անցավ մոտակա կալը և բարձրանալով մի ճոճոտան տարուրեստի վրա՝ հապես ճառեց.

— Հայրենակիցներ...

Խալխը իրար հրելով, հրմշտկելով լցվեց կալը:

— Տա՛ղ արեք, սո՛ւս կացեք, — լսվեց ամեն կողմից:

— Հայրենակիցներ, ձեր առաջ կանգնած ե մի դավաճան. մի մարդակեր, հայրենիքի խսկական դավաճան, վոր լքելով մեր դիրքերը, անցել և թշնամու կողմը. բայց այդ դեռ բավական չի. ալժմ ել չի ուզում պատմել այն ամենը, ինչ տեսել ու լսել և այնտեղ: Մեր վերջին գրոհը պսակվեց հաղթանակով. թշնամին չղիմանալով մեր քաջարի մարտիկների գրոհին, խուճապի մատնված՝ փախավ: Մենք կհետապնդենք նրան, և վաղը չերկաթուղու կայարանը մեր ձեռքին կլինի: Ճանապարհները կբացվեն, քանի վոր ինչպես արտը չի դիմանում սուր մանգաղին, այնպես ել թշնամին չի դիմանում մեր հարվածներին: Յես լսում ելի, թե դուք ինչպես աղմկում ելիք, թե պատերազմ չեք ցանկանում. մենք ևս չենք ուզում կռվել, միայն մեզ ենք պաշտպանում. հարձակվողները նրանք են: Սակայն յեթե ձեր մեջ դեռ չի մեռել ազատության գաղափարը, դուք պետք ե իբրև մի սիրտ և մի հոգի, դիմեք դեպի պատերազմի դաշտը, դեպի դիրքերը, վորպեսզի չզան ու ձեզ նորից գերի և սարուկ չդարձնեն: Մենք կռվում ենք հանուն արդարության և ազատության, և մեր կռիվը սուրբ ե: Մենք ուզում ենք ապրել լալն ու ազատ սահմաններով յերկրում: Կեցցե կռիվը...

Եստեղ միջանի հոգի «կեցցե» տվին ու ծափահարեցին, վորովհետև սովորել ելին, վոր անպատճառ «կեցցե», «ուռա» արտասանելիս, հետտորին պետք ե ծափահարել և արձագանգել: Այս բանից վողեկորված, սպան հազաց, կոկորդը մաքրեց ու դառնալով դեպի Կիկոսը, շարունակեց.

— Ինչ վերաբերում ե այս դավաճանին, սրան մենք կպատժենք անխնա կերպով. թող լավ իմանա ձեզանից ամեն մեկը, վոր հեղափոխությունն իրեն հետ կատակ անել չի սիրում: Տեսնո՞ւմ եք այս գլխարկը... (սպան կռանալով՝ Կիկոսի գլխից վերցրեց նրա գլխարկը): Մի՞թե մարդ կարող ե ալսպիսի գլխարկ ծածկել. ահա, նայեցեք այս աստղին, այս յեղջուրին...

— Կիկոսն ա՛, Կիկոսն ա՛, ա՛րա, սա մեր Կիկոսն ա՛...

— Բա վոր ասում ի Կիկոսի նման ա՛...

— Հն, հն, հն, հն... Եսքան ճառախոսութիւնը Կիկոսի վրա լիք...

— Արա, եղ մարդակեր հարամին դու լես ելել, Կիկոս...

Սպային ալլա լսող չկար: Կիկոսին արդեն ճանաչել էին, և ամեն մեկն ուզում էր մոտենալ և ստուգել, իսկ սպան ջղայնացած, Կիկոսի գլխարկը թափահարում էր ու գոռում, վոր լեն. բայց լսողն ուլ էր... Մեծ ու փոքր խառնվել էին իրար: Սպան ոգնութիւն կանչեց իր վոտները, վորոնք տաքուրետի մեջքին ամուր հարվածում էին ու. ել ավելի ճոճացնում: Մին ել հանկարծ տաքուրեո՞ղ՝ չդիմանալով հարվածներին ու ծանրութիւնը՝ ծովեց ու սպան, հավասարակշռութիւնը կորցնելով, բնկավ, վորն առաջ բերեց մի դիվային քրքիջ. իսկ ծերունիներից մեկը, վոր վոչինչ չէր հասկացել սպայի ամբողջ ճառից, բացականչեց.

— Բո՛ւ ա, բո՛ւ ա, ափիցար աղա, լավ բոլ քարոզ տվիր, շատ ապրես...

Սպան դալբացած՝ հրամայեց զինվորներին, վոր ուժով ցըրեն ամբոիը, իսկ ինքը, խայտառակութիւնից ազատվելու համար, բարձրացավ իր գրասենյակը, այնքան շփոթված, վոր չնրկատեց, թե ինչպես ձախ ձեռքին ամուր բռնած տանում էր Կիկոսի գլխարկը:

Խալիը շրջապատել էր Կիկոսին ու ամեն մեկը մի հարց էր տալիս: Կիկոսը լերբեք այդպես մեծ ուշադրութիւն չէր արժանացել խալիի կողմից, նա ենքան շղկվել էր, վոր չէր իմանում վորին լսի, վորին պատասխանի:

Կինը խալիի մեջը ճեղքելով հագիւլ հասավ նրան, իսկ Ունանը դառնալով խալիին՝ ասաց.

— Խեղճ մարդն երկու որ ա մանանա չի դրել բերանը. թողեք տուն տանեմ, միքիչ խելքը գլուխը գա, լննա կգաք, շատ կխոսեք:

Ունանն ու իր քույրը Կիկոսի թեկը մտած առաջ անցան, իսկ խալիը նրանց լետեից մեղվի ձագի նման պտույտ անելով ու աղմկելով գնաց մինչև Կիկոսի տան դուռը:

Կիկոսը, լերբ վոտը տան շեմքից ներս դրեց, միանգամայն ուրախ ու ապահով, լեզուն բացվեց ու դառնալով Ունանին, հարցըրեց.

— Ունան ջան, երեկ իրիկուն վոր եկանք, եշս ի՞նչ ելավ...

IX

Յերկու որ գյուղը դրմբում եր: «Բալլէիկ Կիկոսի» նոր, պողովոր գլխարկը հագցրել էյին մի յերկար ձողի ծայր ու ցուցադրել, վոր ամեն մարդ թամաշա անի: Ու գլխարկը թեւերը կոտորւած թռչունի պէս «սականջները» կախ, կարմիր աստղը—աչքի պէս ճակատից կպցրած, նայում եր տխուր-տրտում ու յերբեմն քամու ուժով թեւերը թափահարում, վորից հաճախ վախենում էյին սնոտիապաշտները, վորոնք կարծում էյին, թե «սասունայական գործ ա», մանավանդ վոր՝ ձողի ծայրը շատ մոտ եր յեկեղեցու փտած զանգատան հովանոցի պէս շինած փայտե գրմբեթին:

Սա, իհարկե, «ափիցար աղի» սարքած բանն եր, վորն առավոտ-իրիկուն հենց վոր նկատում եր, թե մարդիկ են հավաքւել գլխարկի շուրջը, դուրս եր գալիս շտաբից ու ճառասում:

Ինչ վերաբերում է գլխարկի տիրոջը, Կիկոսին, նա տնային բանտարկութեան եր յենթարկւած. նրա մոտ ուրիշի մուտքն արգելւած եր, վորովհետեւ առաջին որը, յերբ Կիկոսը հանգստանալուց հետո, իր ունեցած խելքը հավաքեց, սկսեց պատմել ի վախի և ահասարակ «պողովորների» մասին, նա՝ առանց հասկանալու, վոր ինքն ակամայից դարձել երալլէիկ ագիտատոր, վորդեւորւած գտնում ու գովաբանում եր «պողովորներին», վորի պատճառով վողջ գյուղը նրա տունը թափւած սրբի ուխտատեղի նման մտնում դուրս եր գալիս, ու ամեն միւն իր հերթին ավելացնելով ու «ծաղկացնելով» պատմում եր պատահողներին Կիկոսի տեսածների մասին:

Սկզբում սպան ուզեց անուշադրութեան տալ, շատ անգամ ասելով, վոր Կիկոսի պատմածները սուտ են, հնարովի, բայց նա զգաց, վոր վոչվոք իրեն չի լսում, քանի վոր ամենքը համոզւած էյին, վոր Կիկոսն ինչ ել վոր լինի՝ սուտ յերբեք չի խոսի: Ապա ափիցար աղեն ուզեց կրկին բանտարկել Կիկոսին, բայց նրան հասկացնող չեղալ, վոր վատ հետեւանք կունենա ալդ քայլը, մանավանդ վոր՝ Կիկոսն այնքան անմեղ ու անշառ մարդ է ճանաչւած, վոր նրան հալածելը կնշանակեր վողջ գյուղն իր դեմ հանել: Ուրիշ ժամանակ վոր լինեիր, թեկուղ Կիկոսին մատաղի տեղ մորթեյին ել, վոչվոք ձեն-ծպտուն չեր հանիլ, իսկ հիմի... հիմի մի տեսակ վողջ գյուղի պաշտպանութունն եր վայելում:

Անուհետև ափիցար աղին մտածեց Կիկոսին կոռի պատրվակով ուղարկել կենտրոն, այլ խոսքով՝ աքսորել նրան, բայց ես ել հասկացվեց, և գլուղը մի մարդու պես բողոքեց՝ ասելով.

— Մենք քեզ Կիկոս չենք տալ, վոր սարեսար, քոլեքոլ գցես, Կիկոսի տեղ ում վոր կուզես ուղարկենք, մենք դիփս կը-
գնանք...

Սպան, տեսնելով՝ վոչ մի բան ոգուտ չի անում, իսկ բալլ-
շերկները գովքը քանի գնում տարածվում է գլուղում, մտածեց
Կիկոսին չեղոքացնելու համար կանչել իր մոտ և ալկա դուրս
չթողնել, բայց լերբ այն զինվորը, վորն ուղարկվեց Կիկոսի չե-
տեից, թե նրան բերի շտաբը, իբր «պրիտակուլը» ստորագրելու
համար, մոտեցավ Կիկոսինց տան դռանը հավաքված ամբոխին
ու հայտնեց իր գալու նպատակը, ամենքը ծաղրով պատասխան
տվին, իսկ Ունանը բարկացավ զինվորի վրա՝ ասելով.

— Կիկոսն անգրագետ ա, թող պրիտակուլն ինքը, ափիցար
աղեն ստորագրի ու վասն անգրագիտության անի:

Ես խոսքի վրա խախը հռհռաց, իսկ զինվորը քու-փոշման
յետ դարձավ շտաբը, վորից հետո ափիցեր աղեն՝ շտաբից մի
10 զինվոր վերցրած՝ գնաց, Կիկոսի տունը շրջապատեց, ամբոխը
ցրեց ու Կիկոսի դռան մոտ յերկու զինվոր կանգնեցրեց՝ պատ-
վիրելով, վոր վոչ մի կողմնակի մարդու ներս չթողնի Կիկոսի
հետ խոսելու, հայտարարելով, թե «Կիկոսը տնային բանտարկու-
թյան է յենթարկված»:

Իհարկե, սրան հետևեցին դժգոհություններ, անհեքներ,
հայհոյանքներ և այլն, բայց սպան իր ուղածն արեց և, Կիկո-
կոսին տնային բանտարկության յենթարկելով, «գլուղն ազատեց
բալլշերկյան ալկասերման վտանգից», ինչպես ինքը գրեց այդ
մասին կառավարությանն ուղարկած իր զեկուցման մեջ: Այս ա-
մենը կատարվեց առաջին օրը:

Յերկրորդ օրն սպան աշխատեց ամեն կերպ գլուղացիներին
հավաքել Կիկոսի գլխարկի շուրջը և ճառել, բայց մեծերից վոչ-
վոք չեկավ, վոչ մի զանգահարություն և գլուղի «սուրհանդակ»
գլրի գոռգոռոցն ոգուտ չարավ: Գլուղացիք շրջապատել ելին
Կիկոսի տունը և պահանջում ելին, վոր ավիցադր Կիկոսին ազատ
արձակել: Նրանք ավելի հետաքրքրությամբ կուզելին լսել Կիկոսին,
քան ավիցադրին, վորի ասածներին ալկա հավատացող չկար:
Սպան ամեն կերպ ուզում էր զրգռել ամբոխն ու վոգեորել կովթ
գաղափարներով՝ ասելով, թե թուրքերն են հարձակվողը, մինչ-

դեռ Կիկոսը միանգամայն ժխտում եր՝ պնդելով, վոր զորքի մեջ մի հատիկ թուրք ել չի տեսել ինքը, թե հայեր կան, են մոտիկ գլուղներից ու իրենց գլուղից, Բալախանում ծառայող հայ տղերք, բաց թուրք՝ ամենևին։

Սպան նկատելով, վոր քանի գնում իր դրությունն ենքան ավելի չե խախտաւանում, վորոշեց զոռով ցրել ամբողջը, վոր Կիկոսի տան շուրջը հավաքված աղմկում եր։ Նա միքանի զինվոր ուղարկեց, վորոնց ամբոխն ընդունեց վրդովմունքով և զգուշացրեց, վոր չեթե սուսուփուս յետ չքաշվեն, հակառակվելու դեպքում գլուղը բոլորին կկոտորի ու կքշի։ Դրությունը քանի գնում լրջանում եր։ Դյուղացիք «բունտ» ելին սարքել և կառավարութիւնը չեյին ուզում ճանաչել։ Սպան զգալով իրերի լուրջ կացութիւնը՝ յետ կանչեց զինվորներին և, չերկու հոգու թուղթ տալով, ուղարկեց կենտրոն՝ ոգնական զորք խնդրելու, վորպէսզի «ներքին ապստամբութիւնը ճնշի»։ Բայց են բոպեյին, չերբ զինվորները գլուղից դուրս չեկան, հանկարծ լուր տաւածովեց գլուղում, թե զիրքերում նորից կռիւներն սկսվել են, և ոգնական զորք և հարկավոր։

Սպան, այս անգամ շփոթված ու ջղայնացած, ձիով դուրս չեկավ գլուղի ծուռումուռ փողոցները, հարաւ տվեց, ճչաց՝ «ի գեն դեպի դիրքերը», բաց վոչ մի հոգի իսկի տանից ել դուրս չեկավ։

— Կգան կկոտորեն ձեզ, ալ անասուններ... — թնդաց սպան ժի պատահած գլուղացու վրա։

— Ե՛հ, գալիս են, թող գան, ջհանդամը, թե կկոտորեն, հո ջաններս ելա կգնջանա, կպրծնենք ես կռիւներից, — պատասխանեց գլուղացին ուսերը թափահարելով, վոր կարծես մի բան եր ուզում մեջքիցը ցած գցել։

— Ա՛յ դու դավաճան սրիկա, — գոչեց սպան և ուզեց մըտալի հարվածն իջեցնել գլուղացու գլխին, յերբ միքանի ջլապինդ լերիտասարդ՝ վորտեղից-վորտեղ մեջ ընկնելով՝ ձիուց վար առան սպային ու զինաթափ անելով, առաջ արին դեպի շտաբը ու, ներս հրելով, դուռը փակեցին՝ ասելով։

— Դե գնա, վորտեղ քոնն ասես, մերն ել ենտեղ պատմի. ես գեղը դիփ Կիկոս գիտեմ...

Ապա դառնալով դեպի Կիկոսի տուն, դռանը կանգնած յերկու զինվորին զինաթափ արին ու Կիկոսին դուրս բերին։

Վողջ գլուղը հարսանքավորի պես ցնծում եր։

Սառնված, մեծ ու փոքր իրար գլխի թափվելով, Կիկոսին շրջապատած տարան գլուղամեջ, պողպատը գլխարկը ձողից ցած առան, դրին գլխին, մի լավ ծիծաղեցին նրա նոր տեսքի վրա, նստեցրին լեկեղեցու պատի կողքին ընկած հին գերեզմանաքարի վրա, ստիպեցին՝ վոր բայլեկներ ձախն իր տեսածն ու լսածը պատմի:

Ջարմանալին այն եր, վոր շտաբում մնացած ղինվորները փոխանակ մնասելու գլուղացիներին, կամ հակառակվելու ափիցար աղին բանտարկելու համար, առանց մի թթու խոսք ասելու «բունտովիկներին», նրանք ել ելին մոտեցել խմբված հասարակության ու ղրաղից ականջ ելին դնում:

Կիկոսն առոք-փառոք նստել եր ու չեր իմանում, թե վորտեղից սկսի իր պատմությունը: Նա հազաց, կոկորդը մաքրեց ու գլուխը թափ տալով սկսեց.

— Են ա՛ վոր տարան մեծավորի կուշտը, նա ել ինձ ղարկեց Իվանի մոտ: Հիմի աչքդ բարին տենա, ինչ յես տեսա: Ես քու Իվանը մի ջանավար ռուս ա. շեկ, աչքերը պլստրատին տըվող, ճաղար, ամեն մի կուռը հենց մի գոմշի՝ վոտ, բայ եմ ասում՝ ըհը, վոր մեր տուն մտնի՝ գլուխը ոճորքից կախ ընկած ունջին կառնի. հենց թափով ման ա գալի, վոր մեր կուռըը նրա վոտի տակին դիմանալ չի: Թիկունք եմ ասում՝ ըհը, Սումբաթի ջաղացի քարի չափ լեռ: Դրուստն ասած, ես Իվանիցը վախեցա... Հա, մտիցս ընկավ, թե ասեմ. ձեռին մի ջվալի փետի չափ դազանակ բռնած՝ հենց իմացա ինձ բանհողի լա անելու: Ինձ բերողը ես Իվանին միքանի ռուսար բան ասեց: Իվանս... Հա, դուք իմ խոսքը մտներիդ պահեցեք, յես մի արմանալու քան պատմեմ: Ես Իվանի կողքին մի սեղ կար, վրեն ել մի դազան, դազանի տակին ել կրակ եր երում. սելի վրա թվ ա տեսել ոջախ շինեն... Ես դազանի կողքին ել մի տրուբա, Թանեսի երզան չիբուխի պես՝ ծուխ եր դուրս անում...

— Հա, հա, հա, Կիկոս, եդ «պախողնի կուխնի» լա ըլել,— ծիծաղելով ընդհատեց մի հին՝ ղինվորություն արած, վոր լեռկու կովին մասնակցել եր:

— Հա... Ես Իվանս վեր թռավ տելի վրա, ձեռի փետովը դազանը խառնեց ու մի երկաթե շերեփով մի մեծ աման խորակ լցրեց ու դրեց առաջիս, թե՛ «տաք-տաք կեր»: Աչքերդ բարի տենա ինչ իմն եր: Մի ռսի փռան սոմի յել կտրեց, կեսն ինձ տվեց: Սոված Կիկոս—տաք-տաք բորշ ու փափուկ թթվաջ հաց...

— Կիկոս, սուտ չխառնես հա՛մ... Ասում են բալշեիկներն սոված ու տկուր են. սոմի հացը նրանց հիվ ա տվել, — միջամտեց քյոխվա Սարիբեգը:

— Սուտը շան փեշակն ա, խի՞ չեմ սուտասում վոր... Հացս կերա պրծա թե չե՛մ են նրանց պղնձի ամանը, «կասիլով» ա, ինչ ա, չալով լցրից ու տոպրակիցը մի կտոր շաքար հանեց, թե՛ մո խմի:

— Հմի՛ վոր սուտդ բռնվեց, Կիկոս. շաքարը ես քանի տարի լա վերացել ա, երազ դառել, հիվանդի համար ել չի ճարվում, իվանին հիվ եր շաքար տվել, — նորից միջամտեց քյոխվա Սարիբեգը:

— Եդ մեզ համար ա վերացել, բալշեիկներն շաքար շատ ունեն. թե հավատում չես, հրես կգան, կտենաս:

Գյուղացիք ծիծաղեցին ես բանի վրա, իսկ Կիկոսը վողե-վորված ուզեց շարունակի իր պատմութլունը, լերբ գյուղի գլխի սարի ծերիցը մի հավար տվող, հրացանը կրակելով, գոռաց.

— Յեկան, հե՛յ... չեկան... ներքի շենը վե՛ կալան...

Ինչպես վոր թնդանոթի ուռւմը պայթի ու հողը ցաք ու ցրիվ տա, ենպես ել ես հավարը ուռւմի նման պալթեց խալխի մեջ ու ցրիվ տվեց: Վորը հրացանն առած դիմացի սարը բարձրացավ, վորը ձին նստեց ու սկսեց գյուղամիջում ջիրիդ խաղալ, ինքն ել չիմանալով, թե դեպի վճր կողմը քշի, վորն ապրանքը դուրս արած դեպի սարը քշեց, վորն ել բղավում-ճվաղում հր ու խուճապն ավելի սաստկացնում: Մի խոսքով՝ գլուղն են դրու-թյան մեջ եր, վոնց վոր սելավի ձեռից փախչող տավարը, վոր չգիտեր, թե վոր ծառին կամ քարին բուխ ա նի, գլուխն ազա-տի: Մի դժվժոց եր ընկել, մի դժվժոց, վոր ինչպես լերկրաշար-ժի ժամանակ մարդիկ չեն իմանում ինչ անեն, ու տանը մնա-ցածները դուրս են թռչում, իսկ դրսիները դեպի տուն վազում, եղպես ել գնդակի արագությամբ մարդիկ գյուղի ծուռումուռ փողոցներով վազվզում եյին՝ լերբեմն ես կամ են աղբակույտի կամ փեյիսի մեջ թրմփալով:

Կիկոսն հր մենակ նստել գերեզմանաքարի վրա, միանգա-մալն անտարբեր. կարծես նրան եդ քարիցն էյին կպցրել ու ա-նիծել, վոր չչարժվի տեղիցը, լերբ կինը ճչալով ու ծնկերը թա-կիլով վրա հասավ, բռնեց Կիկոսի թևից ու թափ տալով գոչեց.

— Ա՛ գլխամեռ, ի՞նչ ես տեղդ քար կտրել, մնացել, վեր կաց ե՛, վեր կաց. սաղ խալխը քոչում ա, հրեն տերտերը բարգ

ու բարխաններն հալաքած փախչում ա, քյոխվա Սարիբեգն ել ձին նստեց ու կորավ, վեր կաց տենանք՝ մենք ուր ենք կորչում ե...

— Ուր պիտի փախչենք՝ կնիկ. մեր տունը թողած հուքարեքար, սարեսար չենք ընգնի...

— Այ քարեքար, սարեսար գա եդ գլուխդ, բալքի ու մուգս*) կտրի, պրծնեմ, վոր ել չասին, թե մարդ ունեմ: Վոր գան թալանեն՝ դադարկ տան սներն ես կռծելու...

— Սարսաղ-մարսաղ դուրս մի տալ, կնիկ, ինչ թալան, ինչ գադ: Խնչս պըտի թալանեն, մի կով կար, են ել «խուսմը» մորթեց: Երնակ շուտ գան, մի իվանին տեսնամ. նրանք թալան անող ե...

Մինչդեռ մարդ ու կնիկ վեճի եյին բռնվել, գլուղի ծայրին յերևացին փախչող զորքի խուճապի մատնված ձիավորները և հրացաններն ողում կրակելով թափվեցին գլուղը, համարյա ձիերի պոչիցը կախ արած շներով, վորոնք ամեն կերպ հալածում եյին ձիերին, աշխատելով նրանց ազդերը կծոտել:

Շուտով շտաբի դուռը կոտրեցին, սպային դուրս բերին, վորն անմիջապես իր ձին հեծավ ու փախուստի դիմեց:

Փախչող փախչողի չեր: Սպայի հետ յեկած զինվորները մարդկանց զոռով առաջ եյին անում, վոր գլուղից դուրս անեն, հեռները փախցնեն տանեն. ինչ ապրանք եր ձեռներն ընկնում, քշում եյին, իսկ ով վոր չեր համաձայնվում գլուղը թողնել, ծեծում եյին ամենաանխիղճ ձևով ու վազադած գոռում:

— Ձեր բոլորիդ պետք ե սրի քաշել, դավաճան սրիկաներ, դուք ամենքդ բալլշկիկներ եք...

Մի խոսքով՝ աջնախիսի թալան ու ծեծ եր ընկել գլուղը, վոր շատերը հենց եյին իմանում, թե լեկող «թշնամին» հենց սրանք են վոր կան:

Ես զինվորների կատաղությունն ել ունիւր իրեն պատճառը: Առաջինը՝ վոր նրանք չեյին կարողացել մի թուրք գլուղ ել մտնեն, վոր թալան անեն, ու թալանն եստեղ եյին անում, յերկրորդն ել այն, վոր վճռական բոլեյին գլուղերից հավաքված պահեստի զինվորները դիրքերում խլրտում եյին զցել ու, կարծես իրար հետ պալման կապած, զենքերը ցած եյին զցել և, հարմար առիթից ոգտվելով, անցել եյին բալլշկիկների կողմը:

Այս վերջին հանգամանքը մի կողմից սրանց մեջքը կոտ-

*) Հուլյոս

քել եր, մյուս կողմից ել գազազած շուն դարձրել, վորոնք դիրքից սկսել ելին կրակել «գալաճաններէ» վրա, միքանիսին ըսպանել, միքանիսին ել, վորոնք դիրքերումն ելին մնացել, զինամիտ արած ծեծելով հետները բերում ելին ու հայհոյանք թափում թե նրանց գլխին, թե գլուղացիներին:

Ինչպես յերկնքում ծլկող աստղը, ննպես ել դիրքից փախչող զորքի մնացորդները, ձին մտրակելով, ծածկվում էին գլուղի հորիզոնում, չետեից մի սև գիծ թողնելով, վորն աստղի հետքի պես կորչում եր յերկնակամարի վրա, վեր ցցված ձիու պոչի հետ:

Փախչող զորքի թնդանով շուտով վորոտաց վերին սարի գլխին, վորն աննպատակ ումբ եր նետում դաշտերի վրա, վորպեսզի փախչողները միքիչ ելե սրտապնդեն:

Արևն իր հրե թելերը կամաց-կամաց կծկում եր: Զորերը մի կողմի վրա թիկնկը տված սպասում էին, վոր իրիկունն իր անկողինը փոխ, դաշտերի վրոջն ել մի մեղմ քամի չեր փսփսալով անցնում, են մոր նման, վորը հոգոց հանելով իր վերավոր վորդու վերքն ե սրբում, գլուխն որորելով ու անիծելով են մարդկանց, վորոնք իր ջահել մատղաշ գավակին վերավորել, մեջքը վրտնատակ տվել, տրորիլ էին, գլուխն արշունջվա արել, վոնց վոր են դաշտերում նոր ծլող արտն ու խոտն ելին ձիու սմբակներէց ու ումբերից տրորված, ջարդված ու արշունջվա...

Գլուղը մնացել եր անտիւ: Վոչվոք չեր ուզում գլուխ կանգնի, մի կարգադրութիւն անի, մի ծրագիր քաշի, թե ինչ անեն, իրենց անտառին ու լեռներին պահ տան, թե յեկողներին դիմավորեն, բարի գալուստ մաղթեն, աղ ու հաց մատուցեն: Գլուղի մեծամեծները փախել ելին, քիչ թե շատ բան հասկացող մարդկանցից շատերն անցել ելին բալլեիկներին կողմը, մի մասն ել փախչողները հետները դիրի արած տարել ելին, իսկ մի մասն ել ռվ գիտի վորտեղ եր գլուխը թագցրել, վոր ազատվի «խումբերի» ու «ափիցար աղաների» ձեռքից: Կանաչք ելին մընացել ու ջահելներից միքանի հոգի, վորոնք բնից դուրս յեկող բոռերի նման դբռնում էին ու աննպատակ չափչփում գլուղի ցեխոտ փողոցները:

Բոլորովին ճերմակ մորուքավորներից զատ, միջին տարիքո մարդ գլուղում մնացել էին Կիկոսը, մեկ ել նրա նման դռադա*) մարդիկ. վոնց վոր՝ մի աչքը քոռ գունանաչի թևոսը,

*) Անպետք:

նրա գէուլի կաղ Սեփոն, յերկու վտից թոփալ դալլաք Մոսին, վորին գյուղացիք «տահանոց» ելին կանչում, մեջքը կոտրած մղդսի Սիմոնը, վորին «ե ընդ հոգույդ քու» ելին ասում, մի ձեռը թիւ ժամկոչ Յեփրեմը, վորին «ե ես» ելին մկրտել, սատանաներ հալածող ջինգար Սողոմոնը, վորին «սա պահեսցե» ելին կոչում, վորովհետեւ աջ ձեռքի բութ և ցուցամատի ծայրերը շարունակ իրար եր քսում և լքլքում: Մի խոսքով՝ են տեսակ մարդիկ, վորոնք վոչ տանն ելին բանի պետք, վոչ դուրսը, թեև խոսելու մեջ փրկստփաներ ելին, ճարտասան, ամենքին խելք սովորեցնող, խորհուրդներ տվող, բայց հենց վոր բանը դարգործի՝ «մկան ծակին ոխորթուման տվող», մկան չափ սուր հոտառությամբ և նապաստակի չափ վախկոտ:

Բանն այն է, վոր գլուղը սրանց եր մնացել, բայց սրանք ել վախենում ելին թե տիր կենան: Ես տեսակ անորոշ դրության մեջ ելին մանավանդ ջահնները, վորոնք ուզում ելին մի բան ելա արած լինեն, յերբ մեկ ել տեսան՝ Կիկոսի կնիկը նրա թեւիցը պինդ բռնած քարը եր տալիս դեպի տուն, աշխարհիս յերեսին դեռ չլսված հայհոյանքների տալով: Ջահններից մինը, թե՛

— Տղերք, եկեք ես Կիկոսին առաջներս գցենք ու գնանք լեկող զորքի դեմը...

— Ա՛յ լավ խելք...—վրա բերեց մի ուրիշը, — թամամ վոր գտել ես. Կիկոսը համ պողավոր ա, համ ել նրանց հետ ծանոթ...

Ասելն ու անելը մեկ լեղավ: Ջահնները շրջապատեցրն Կիկոսին ու իր կնկանը. Կիկոսին խլեցին գաղաղած կնկա ճանկերից և առաջարկեցին, վոր իրենց հետ միասին առաջ ընկնի դեպի յեկողները՝ նրանց դիմավորելու համար, բայց Կիկոսը չհամաձայնվեց:

— Ձեզ մատաղ, եդ իմ բանը չի. — թուքը կուլ տալով հաղիվ պատասխանեց Կիկոսը. — ով գիզա թե կռիվը վոնց կվերջանա. ես փախչողներն մին ել տեսար յետ եկան, են վախորդ գլուխս ստիճ կնդի նման կթոցներն...

Ջահնները պնդեցին իրանցը.

— Դու ծանոթ ես նրանց հետ, գիտես նրանց վարք ու բարքը: Եդ գլխիդ պողը ու հագիդ շինելն ել նրանցից են. դու յես վոր կաս: Ես նեղ որին ել վոր գեղին պետք չեա գալու, ել հիմ ես ապրում աշխարհիս յերեսին, — ամեն կողմից վրա տվին ջահններն ես տեսակ խոսքերով ու Կիկոսին առաջ արին:

Վորտեղից-վորտեղ գտան գուռնաչի թևոսին ու գհուլի Սե-

փոյին, ու մին եւ ահ ու սաբասփ ընկած գյուղի միջին Թեոսն-իր զուռնն զից, իսկ Սեփոն իր կոպալներն ենպես ուժգին խը-փից դնոյին, վոր նրա ձենից սկսեցին զրմբալ գյուղը շրջապա-տող ժայռերը, վորոնք յերկար ժամանակ զուռնա-դհուի ձայնին չելին արձագանգել:

«Թամամ վոր ոյին ա ես ջահելների բանը», խեթ-խեթ նա-յում ու զլինները տմրտմրացում եյին սրահի տակ նստած պա-ռափները:

— Կիկոսին թաղադան հարսանիք ենք անում, բալչևիկի հարսանիք, ուռա...— Կոչեց ջահելներից մեկը, վորին ձայնակցե-ցին մշուռները, և խուճապից գլուխը կորցրած գյուղը, տեսնելով ես տարորինակ ու անսպասելի «հարսանիքը», միքիչ սրտա-պնդեց:

Յերեսաները վորը տկլոր, վորը բորիկ, զուռնի ձենին վրա վազեցին թոչկոտալով, միացան հանդեսին, իսկ կանայք ու ծեր մարդիկ չելին իմանում՝ լաց լինեն, թե ծիծաղեն:

Լիսն ու մութը խառնվել եր իրար, յերբ «հարսանքավոր-ները» դուրս եկան գյուղից: Գիշերը համր քայլերով իջնում եր, իսկ գլուղացիք սպասողական դրության մեջ, վոչ կրակ եյին վա-ռում, վոչ ճրագ:

Եդ գիշեր գյուղում վոչվոքի աչք քուն չեկավ: Ինչ տան վոր տղամարդ եր ցնացել, վորը ծեր, վորը վերավոր կամ հի-վանդ, հարևան կանայք իրենց յերեսաներով նրանց մոտ եյին հավաքվել, նրանց բուխ աբել, ու թուխսը կորցրած ճուտերի պես սվսվում եյին: Ծերունիները պատմում եյին իրենց պապե-րից լսած Ղզլբաշի զորքի ավերածութունների մասին, թե ինչ-պես եգ կողմի գյուղերը վոտնատակ իյին տվել, կոտորել ու ժո-ղովրդին գերի տարել, ունեցածները խալանել ու գյուղը կրակի մատնել, միաժամանակ ավելացնելով, թե՛ հիմիկվա յեկող զորքը քրիստոնչա չե ու դժվար թե ձեռք տ ս անմեղ խալխին: Ես վեր-ջին հուսադրող բանն եւ ասում եյին, վորպեսզի լսողները շատ չսարսափեն. թեև իրենք եւ իրենց ասածին չելին հավատում: Եսպես եր ահա են գիշեր խավարի մեջ կորած գյուղը, անհան-գիստ ու սպասողական: Գարերին ու ծերպերին կպած, աշխար-հից կտրված ես գյուղի ամեն մի մարդու միտքը մի բանով եր միայն զբաղված, թե ի՞նչ առավոտ ե բացվելու նրանց տանջ-ված գլխին..

Միքանի տնվոր, գյուղի աչքից ընկածները, վորոնք գյու-

դի ես ու են ծայրին ընկած, կամ ձորի մեջ պահված գետնափոր խավար ու խոնավ հյուղերում ու գոմերում ելին ապրում, շեմքին կանգնած, ձեռները խաչաձև ծալած ծոցներումը դրած, անհամբեր սպասում ելին «բալլիկներին» գալուն: Սրանք վորդին կամ մարդը կորցրած մայրերն ու կանաչք եյին, վորոնց վորդին ու ամուսինը աշխարհը խառնվելուց, մեծ կովից սկսած սինչե հզ որը տուն չեյին վերադարձել:

Եդ կորած տղաներից միքանիսին տարել ելին պատերազմ. թե վճի սահմանը՝ հայտնի չեր. մեռած եյին, սպանված, թե գերի ընկած—վոչվոք տեղեկություն չունեիր. ինչ վոր «թագավորին թախտից գցել եյին», նամակի դաթը կտրել եր ու տանեցոց աչքը ճամպին թողել: Մի մասն ել, վորը պատերազմն սկսվելուց առաջ, վորն ել հետո, գնացել եյին քաղաքներն աշխատանքի, վոր կարկտից սովամահ լեզող ընտանիքին մի կերպ հաց հասցընեն կամ կարողանան միքանի սև գոռոշ աշխատեն, վոր պարտքից մի կերպ ազատվեն: Ու եդպես գնացել եյին ու գնացել, անհետ կորել. գոնե դուշի թևով ել ե լուր չեյին ուղարկում կամ քամու միջոցով ապսպրանք...

Հիմի յե տանեցիք հիկոսից իմացել եյին, թե նա միքանի հոգու տեսել ե յեկող զորքի մեջ, ու հույսերը կապել եյին նրա ասածին, թեև շատ հաճախ հոգոց քաշելով իրար ասում եյին հուսահատ ձայնով. «Վա՛յ մեզ, վոր մեր ումուղը հիկոսն ա քնացել...» և իսկույն իրենց սիրտ տալու համար, գովում, գովաբանում եյին իրենց կտրիճ տղային ու մարդուն, ավելացնելով, վոր նրանք «նալի ու մեխի դաթումն ել վոր ըլեն, ելի դուրս կգան, իրենց կհասնեն...»:

Գիշերը ննջացող պառավի պես գլուխը թեքել եր ու ծանրացել: Մարդիկ աչքերը կթել եյին լիսաստղի դուրս գալուն, բայց նա կարծես «ոխտը սարի լեռըը պահված փերի լիներ», վոր չեր ուզում իր պայծառ լերեսը ցույց տա:

Ամեն խոսակցություն դադարել եր, իսկ յեթե պատահում եր, վոր իրար ուզում եյին բան ասել, ապա գողության գնացած ավազակների պես փսփսում եյին, կարծես վախենալով, թե քամին կլսի, լուր կտանի, կմատնի:

Յեվ լեթե այդ կեսգիշերին սև խավարի և վախկոտ լուսթյան մեջ մի ձայն հանող կար, ապա դա լե գլուղի միջով հոսող առուն եր, վոր ավելի շատ վը՛շ-վը՛շ-ում եր, քան թե կարկաչում—ու իր վը՛շ-վը՛շ...շ-ոցով ավելի լեր ճնշում մարդկանց տրամադրությունը:

Մին ել ես ահա՛վոր լուսթլան մեջ մի դոփյոռն բարձրացա՛վ, կարճ, արագ ու կտրուկ: Շատերին թվաց, թե տան կտրուկը յերեսաների մի խումբ վազեց թմփթմփալով: Յերկուսդից սրտերը դող ընկած մարդիկ ավելի կուչ եկան, կծկվեցին, ականջները սրած ու շունչներն իրանց քաշած սպասելով, թե ինչ ե լինելու:

Ներքի թաղում մի ճչոց ու ծկլթոց բարձրացա՛վ. կարծես ուրուրը վրա չեր տվել թխսին ու ճուտերին: Յերեսեքը մոր փեշերից քաշքշելով, յերկուսդից աչքերը կկոցած, ցուցամատը բերանները դրած հիկեկում եյին, չհամարձակվելով ձայները շատ զիլ բարձրացնել, իսկ մալրը մի ձեռքով պաշտպանվելով՝ մտրակի հարվածներից, մյուս ձեռքով յերեսաներին թևերի տակն եր առնում, վոր լեղաճաք չլինեն:

Դա բայլշիկ Կարոյի ընտանիքն եր: «Պումբերը» վաղուց Կարոյին բանտն եյին դրել, վորովհետև նա ընդդիմացել եր խեղճ-բապետի հրամանին, անպատվել եր կառավարությանը և գովաբանել «շեկ ոսին»: Նրան բանտարկիւուց հետո տունն ու ապրանքը թալանել, կերել եյին ու հիմի յել թե ինչ եյին ուզում: տանը մնացած խեղճ կնկանից ու յերեսաներից, վոչվոք բանչեր հասկանում:

Պավարի մեջ հագիվ նշմարվում եյին ձիու վոտները, վորոնք ստվերների պես անցնում եյին գյուղի միջով, ողակի մեջն առած Կարոյի կնոջն ու յերեսաներին: Կարոյի կինը—Սալոն, վոր մարդուց պակաս համարձակը չեր, հենց վոր գյուղամիջ հասավ, բարձր ճչաց.

— Կոտորվեցեք ելի, ա խալի, կոտորվեցեք, ել վճր որվա համար եք պահում ձեր նամուսը, վոր եկել են գեղի ծերին ընկած անմարդ, անպաշտպան թանը վրա տվել, մի խեղճ կնիկ գտել ու յերեսանց հետ տանում են թե կոտորեն, դուք կրիալի պես գլուխներդ քաշել եք ձեր բունն ու ձեններդ կտրել:

Այս սթափեցուցիչ ձայնի վրա միքանի հոգի սրահի տակից գլուխները հանեցին, բայց վախկոտ խիւնշի պես ելի պողոտաները ներս քաշեցին ու ավելի խորը մտան, վոր իսկի չլսեն ել թե ինչպես ձիավորներից մեկը մտրակելով Սալոյին, վրան դռնաց.

— Ձայնդ կորի, անգգամ լաչառ, մարդով-կընգանով, տընով-տեղով բայլշիկ եք դառել, վոչ իշխանութուն եք ճանաչում, վոչ որենք ու գակոն:

— Դու տեսել ես, վոր լեւ ու մարդս բալլեիկ ենք դառել... Բալլեիկն ի՞նչ բան ա, յես իսկի չեմ հլ գիտում. ձեզ պես անորեհների հախից լեկող ա իմ մարդը, վոր հիմի տարել եք վրտն ու ձեռը բխովել: Բալլեիկ եք շինել մեզ, բա վո՞նց բալլեիկ չդառնանք...

Սալոն ու. ձիավորները հսպես կռիվ տալով հասան Կիկոսի տուն և գողգողալով դուրս կանչեցին Կիկոսին:

Կիկոսի կնիկը, Թազագյուլը դուրս յեկավ տանից ու չիմանալով ում հետ գործ ունի, ասեց. «գեղի ջահել-ջուլը Կիկոսին տարան բալլեիկ դորքի առաջը, հրես ուր վոր ա նրանց հետ կգա»:

— Քանդեցեք այս վորջը,—հրամայեց մեծավորը:

Յերեք զինվոր ցած թռան և Կիկոսի տունը, մարագը, գոմը սկսեցին խուզարկել: Նրանք չեյին հավատում, թե Կիկոսը տանը չի, կարծում էյին՝ պահված, թագնված ե:

Ոեղճ Թազագյուլը վրա լեր պրծնում հս ու են առարկան խլում զինվորների ձեռից, վորոնք խուզարկության միջոցին թալան էյին անում, իսկ Սալոն նրան սիրտ եր տալիս.

— Աղջի լա՛ց մի ըլի, ամոթ ա. հրես սրանց վերջը մոտեցել ա...

— Վա՛յ Սալո ջան, քե մատաղ, ախր քու մարդին վոր դաւա յեն դրել, նա հլա մարդ ա, իգիթ ա, հիմի, լել ասում են բալլեիկ ա, բա իմ Կիկոսիցն ի՞նչ են ուզում, նա ի՞նչ մարդ ա, վոր ինչ անի...

— Ձանդ, անդգամ, մենք շատ լավ գիտենք, թե ով ե նա. գաղտնի լրտես ե և կապ հաստատող. յեթե մի ձեռքներս կընկնի՛ր...

Մինչդեռ զինվորները խուզարկում, տակնուվրա ելին անում Կիկոսի տունը, գլուղի վերեի սարի գլխին մի թնդանոթ վորոտաց, վորին հետեցին համադարկերը, իսկ գլուղից ցած, դաստի միջին թնդաց Սեփոյի թմբուկը, վորին միացան զուռնի զիլ ձա՛նը և լերկար ու անընդհատ ուռա-նները:

— Աղջի Թազագյուլ, վախիլ մի. ձայն տվեց Սալոն.—հրես գալիս են սրանց ջանի համար, հողեմ յես սրանց գլուխը:—Ապա դառնալով զինվորներին, վորոնք ձիաների ականջը մտած փախչում էյին, ձա՛ն տվեց.

— Հրեն ե, հրեն գալիս են, յես նրանց յեկած ճամպին մատաղ...թե ղոչաղ եք, գնացեք նրանց հետ կռիվ արեք. լեկել

եք լերկու խեղճ կնիկ գտել ու մի խեղճ ու կրակ Կիկոս եք ման գալի՞:

Լիսաստղը դուրս եր եկել ու իր ճառագայթները խաղացնում, փայլեցնում եր յերկնակամարի վրա, մերթնդմերթ փպտալով իր մանկական խաղի վրա: Ներքևում գլուղին ավելի ու ավելի ելին մոտենում զուռնա-դհուլի և ուրախ աղաղակների ձայները, իսկ մլուս կողմից ավելի ու ավելի ելին հեռանում թնդանոթների ու հրացանների վորոտը:

Բայլշերիկների զորքի առաջապահ գունդը հալածում եր թշնամուն, իսկ թիկունքը դանդաղ, բայց հաստատ առաջ եր շարժվում դեպի գլուղերը, հայտարարելու խորհրդային իշխանութիւն:

X

Լույսը դեռ չեր բացվել, վոր գլուղը մտավ Կարմիր բանակի շտաբը, վորին ուղեկցում էին զուռնան, ցնծագին աղաղակներն ու պարերը:

Կիկոսը գտել եր Իվանին, վորը նրան նստեցրել եր իր կողքին, շարժական խոհանոցի վրա և հետը ձեռով վռտով զրույց եր անում: Կիկոսը դառել եր մի յերանելի մարդ, վորին նախանձում ելին գլուղի ջահելները, վոր ենպես լավ ծանոթութիւն ունի բայլշերիկներին հետ, և մտածում ելին նրա միջոցով կապեր հաստատել նրանց, յեկողների հետ, իսկ Կիկոսը՝ սիրտը կոտրած, վոր չի կարողանում պատմի Իվանին իր գլխի լեկածը, մի գլուխ են եր ասում:

— Ախ Իվան ջան, թե մի լիզուս կհասկանաս, ինչե՛ր չեմ պատմիլ քեզ...

Բայլշերիկ զորքի շտաբի պետը զանազան կարգադրութիւններ եր անում, վոր գլուղում անկարգութիւններ չպատահեն: Մինչև լույսը բացվելը նա տեղավորվեց նախկին շտաբի տանը, ապա անմիջապես հեռախոսային կապ հաստատեց առաջապահ գնդի հետ, վոր հալածում եր թշնամուն, և իր մոտ կանչելով ալն ջահելներին, վորոնք դեռ շարունակում ելին գլուղում զուռնա-դհուլով ցնծալ, պատվիրեց, վոր գլուղում մի խելքը գըլխին մարդ գտնեն, վոր վոչ նախկին քոլսվա լինի, վոչ ել ստրաժնիկ, ալլ հասարակ ռանչպար գլուղացի, վորը կարողանա գլուղը կառավարի:

Ջահելները շվարեցին: Գլուղում թե մի եդտեսակ մարդ էլար, են ել Կարոն եր, վորին բանտարկել ելին ու ով գիտի թե

ուր տարելւ շիմի հիւ կա, վոր ում ջոկեն... միտք արին, միտք ու մին ել տղաներից մինը՝ թե՛

— Տղերք, յեկեք մի բան ասեմ, համա վրես ծիծաղեք վոչ։

— Ի՞նչ. — հետաքրքրությամբ հարց տվին ամենքը։

— Ես վոր մեղանից մարդ ա ուզում, եկեք Կիկոսին ջոկենք. են մարդը համ նրանց հետ ծանոթ ա, համ ել իր որում իսկի գդիր ել չի ելել. ինքն ել հալալ ունչալար մարդ ա. թող նա կառավարի. ինչ վոր կհրամային՝ են ել կանենք. ասում են՝ ծանոթությունը աշխարհ ա կերելւ Տհանք, վոր Կիկոսին տեսան թե չե, վոնց ուրախացան... են Իվանն ել առավ ու իր դրոժկի վրա նստացրեց...

— Եղլալ ես ասում համա... — առարկեց մեկը. վախում եմ սաղ խալիի մասխարեն դառնանք. ախր ի՞նչ կասեն, թե փլան գեղի կառավարին հիւ ա... Կիկոսը...

Մինչդեռ ջահելները միտք ելին անում, Կիկոսը Իվանին խնդրեց, պաղատեց, վոր բրիչկեն քշի իրենց տան դուռը, իրենց դռնաղը դառնա։ Իվանն ել «խարաշո, տովարիշ» ասեց ու շարժական խոհանոցը գլուխով քշեց Կիկոսի դուռը։

Յերկիրքը շառագունել եր. որը բացվում եր։

Իվանը սարքուկարդ եր անում. պղնձի տակի կրակն եր վառում, վորի շուրջը հավաքված լերեխաներն ու կանաչք ապշած պտույտ-պտույտ ելին անում, յերբ ջահելներից մի հինգ հոգի յեկան ու Կիկոսին, թե՛

— Ես գորքի մեծը մի մարդ ա ուզում, վոր գեղը կառավարի, մենք ել քեզ ենք հարմար տեսնում. հաղիր ծանոթ ես սրանց հետ, ինքդ ել հին դուլլուղչի չես ելել, արի ես մեր գեղի կառավարիչը դառ, մինչև տեսանք ես գեղի ցրված խալիսը հավաքվի, են վախտը հալքաթ նրանք մի բան կանեն։

Կիկոսը դեռ գլուխը կախ միտք եր անում, յերբ կինը մեջ մտավ.

— Լավ են ասում, գնա, քանի պետք ա ուրիշը քու գլուխը թակելով կոռ դարկի. հիմի յեկ դու դառ ես գեղի տերն ու տիրականը. հողեմ յես քոխվի գլուխը, մեզ երեւ-խորովել ա. դու յեկ ջանդ քարեքար ես գցել ես որվա համար, գնա, գնա, լավ են ասում։

Ջահելներն ավելի վոգեւորվեցին ու սկսեցին համոզել Կիկոսին, վորը կացինը ձեռին փալտ եր ջարդում Իվանի համար, շուտ-շուտ ցույց տալի փալտի չոր կտորներն ու պարծանքով ասում.

— Իվան ջան, տեսնում եմ ինչ չոր դրավա յա. դու քեֆդ քոք պահի, հրես եշս կչուլեմ ու ես մոտիկ տեղից դհա լավը կրերեմ: Ա՛ կնիկ, դնա տես հավերը ձու լեն ամեկ, բեր Իվանի համար մի ձվածեղ անհնք, չուլն ել հաղիբ արա, ես ա եշս մի դուրս հանեմ գոմիցը... —

— Քեզ կառավարիչ են ասում, կառավարիչ, — զայրացավ կինը, եշ չեն ասում:

— Գնա բանիդ, կնիկ, Կիկոսը դեղի կառավարիչ, իսկի ըլելու բան ան... յես վոր ես խառը ժամանակ կարենամ գլուխս պահեմ, եդ ել մեծ հուշար ա...

Վոչ մի հորդորանք ոգուտ չտվավ:

Հենց եդ միջոցին եր, վոր դուղամիջում զանգը հնչեց, Դանշան եր, վոր ժողով ե լինելու: Տղերքը մի կողմ գոռով, մի կողմ խաթրով, Կիկոսին առաջ արին դուղամիջ, իրար հետ խոսք կապելով, վոր ամեն կերպ աշխատեն Կիկոսին համոզեն գլուղի կառավարիչ դառնալու:

Շուտով ես ու են թաղից սկսեցին հավաքվել դուղամիջ: Շատերը վախով, շատերն ել կասկածանքով մոտենում էին շտաբի դռանը՝ իմանալու, թե ինչ նոր բան պիտի ասի նոր իշխանութիւն ներկայացուցիչը:

Կանայք քաշվել էին մի անկյուն և ուշադրությամբ դիտում էին կարմիր-բաՆակայիններին: Ծերունիներից վոմանք նստել էին քարերի վրա ու չիբուխ էին ծխում, իսկ ջահելներն ել աննպատակ վազվզում էին ու աղմկում:

Գլուղացիք, վոր մինչ այդ սարսափելի առասպելներ էին լսել բայլեկի դորքի արարքների, նրանց թալանների ու ավերմունքների մասին, դարմանում էին, թե ինչու ալիքան հանգիստ ու խաղաղ էին պահում իրենց. վոչ մի մարդու վատ խոսք չէին ասում, վոչ ել տանից հաց դուրս քաշում կամ ապրանքը գոռով գոմից հանում: Իսկի կովոդ թշնամու դորքի նման չէին: Զարմանալի լեր նաև աչն, վոր դորքի մեծ մասը հայերից եր, այն ել շատերը ծանոթ, իրենց հայրենակից, մոտիկ գլուղերից:

Շտաբի մեծավորը դուրս յեկավ, մոտ կանչեց ըլորին և ճառի փոխարեն սկսեց զրույց անել գլուղացիների հետ, վոնց վոր նրանցից մեկը: Վոչ բարձր գոռգոռում եր, վոչ վոտներով տափը թակում, վոչ ճահճի մեջ ընկած ձիու պես ձեռները թափահարում:

Մի քարի վրա նստած, հանգիստ, կես հանաքով-կես լուրջ խոսուած եր նոր իշխանութեան. նրա նպատակների ու անելիքների մասին:

Գյուղացիք, վոր սովորելին իշխանավորի մեջ անպատճառ բռնուցք ու մտրակ տեսնելու, հայհոյանք ու սպառնալիք լսելու, մի խոսքով՝ այն ամենը, ինչ վոր վախ ու յերկնող ե առաջ բերում մարդու մեջ, հետաքրքրութեամբ հետևում ելին ես նոր տեսակի, «իրանց ղայդի» խոսողի ամեն մի բառին ու սիրտ առած հարցեր ելին տալիս:

Զրուցն աշխուժ կերպարանք եր ընդունել: Կանաչք, վոր մինչ այդ հետու քաշված ելին, նրանք ել մոտեցան ե մինչև անգամ հարցեր տվին: Իհարկե, ամբողջ խոսակցութեան նյութը գյուղի ու գյուղացիների ցամաք եր, իսկ եդ ցավերից ամենամեծը՝ խաղաղութեան ու թուրքերի միջով դեպի կայսրան ճանապարհ բաց անելու հարցը:

— Հըմի, աղա...—ծոր տվեց մի ծերունի...

— Աղա չե, ընկեր: Ընկեր պետք ե ասեք. մեր մեջ աղա չկա, հայրիկ.—ընդհատեց մեծավորը:

— Լավ ես ասում, բնալա ջան, Լավ հնգերը ոխտն ախպորիցը Լավ ա. դու յեւ մեր ղայդի մարդ ես երևում, հմպարտ ու գոռոջ չես, շատ ապրես, վոր մեր երված սրտին մխիթարանք ես յեկել. թե վոր բալլեկի ես ասում, ինչ ես ասում, դիփն ել քեզ պես ես, հնգեր ել եք, ախպեր ել չա, ես ի ասում: Եդ ինչ վոր զրից արիր, շատ հավան ենք, համա շատերն են եկել ըտհենց զրից արել, շատերն են իրանց գովել-գովարանել... Յաս պառավ, մի վոտս գերեզմանում մարդ եմ, գլխովս շատ փորձանք անցկացած. կրախչես, վոր ասեմ՝ շատ բանին ել չեմ հավատում: Հրես ես ժամն ինչ ա, ես ժամը վոր ասում են աստծու տունն ա, ես ժամի տերը—մեր տերտերն ել ա շատ քարող տվել, համա մի բան ելա մեր աչքովը տեհնել չենք. ենքան թերահավատ եմ դառել, վոր քիչ ա մնում հոգիս կրակը գցեմ, աստծո ուրանամ: Զուխտ-ջուխտ տղերքս սարի պես կանգնած, կռիվ տարան, թագավորի թախտը բաթմիշ ըլի, ինչ բաթմիշ ելավ: Հուլսս կապել ի աստծուն, ամեն մի տղիս ուղուրին մի-մի աչառ. մատաղ մորթեցի, վոր աստոծ նրանց հարամ գշուլի ըռխիցն ազատի... Համա տղերանցս տեղ՝ նրանց սե գիրն եկավ, տունս քանդվեց, դուռս երեսիս փակ մնաց...

Մերունու ձայնը կերկրաց, ու աչքերիցը յերկու խոշոր կա-

թիւ արցունք կախվեց, վորը չուխալի թեքովը սրբելով շարունակեց.

— Բնա ջան, սիրտս փուլ եկավ, կրախշես, պառավել եմ, սիրտս ամեն բանի չի դիմանում: Հենց կիմանաս, թե իմ ցափն եմ, սգով եմ, չեմ, բալա ջան, եսքան խալխի մեջ մեկը չկա, վոր սիրտը դադրած չըլի: Հրես եմ, ես խիզանի, ես կնանոնց միջին մինն ելա կա վոչ, վոր չա տղեն, յա մարդը, յա ախպերը կորած չըլի... դիփս ել երված ենք... Հիմի յեւ դուք եք եկել. լավ եք արել, բարով եք եկել, մեր երեսը ձեր վոտի տակը... Խոսալդ ել իրան կարգին, համա ասա՛ ես կռիֆներին մի տուտ, պուճախ, մի վերջ, մի հատնելիք, մի ծեր (ծայր) կամ, թե քանի սաղ հնք, պետք ա իրար ջնջինք... Ձեա գիդում եմ, չես գիդում, թե ինչ ենք ուզում: Ուզում ենք, վոր ել թվանքի տրաքոցի ձեն չիմանանք, պատրոնը երազ դառնա, բարութն ել դարմանի (դիդի) համար ման գանք, դտնենք վոչ: Ասում ես—ինչ ա մեր ցավը, ա՛յ, ես ամենամեծը: Թե վոր կովին վերջ կտաք, չես իմ պառավ տեղովը կուրանամ յերկինք ու հրեշտակ, ձեր առաջը խոռնկ ու մոմ կվառես... Խոչ կասեք, ա խալխ.—դիմեց ծերունին խմբված հասարակութանը:

— Դրո՛ւստ ա, դո՛րթ ա, եդ ենք ուզում,—ձայն տվին ամեն կողմից.— Արթյուն ապիրը դրուստ ա խոսում, նրա ասածն ա...

Ծերունին վոգևորված, թափ տվեց չիբուխը ապա թամբաքուր քիսան թափահարելով՝ սկսեց լցնել, շարունակելով.

— Եդ մին: Գլխացավանք չըլի, բալա ջան, ցավ շատ ունենք. ոխտն որ պատմեմ, հատնիլ չի. համա թող մինն ել ասեմ ու պրծնեմ:

— Ասա, հալրիկ, ասա, մենք ել հինց եդ ենք ուզում, վոր ամեն բան իմանանք, գուցե մի ճար դտնենք,—ասաց շտարի պետն ու գլուխը կախ՝ ականջ դրեց:

— Մեր մի ցափն ել են ա, վոր... Հրես տեսնում եմ ես իգիթ տղին, հրես վոր կողքիս նստած, կուռը կտրած ու առանց մի վոտի... Սա մի ասլանի բերան ճողղ մարդ եր, ոխտը հարամու. դեմ գնացող. հիմի չեսիր ա դառել, վոտը կտրած ճուտի պես չեսիր: Ոխտը տան ումուղը, հիմի ինքն ա ուրիշի ձեռին մտիկ տալի: Ե՛հ, քանի-քանի դրա պեսերը կան... Հա. խոսկիս քամակին մտիկ: Մի խի՛ չես հարցնում, թե ընչիցն ա բսենց ելել... Ես մեր հայոց թագավորութիւնը վոր եկավ, կգիդենաս, եդ թագավորութան հետ ել թուրքի ու հայի մեջ կռիվ ընկավ:

եկան թե՛ ով նամուս ունի ու գլխին փափախ ա ծածկում, թող կռիվ դուռ դա թուրքերի դեմ ու ճամպեքը բաց անի մինչև վազգալ: Դե գիշաւ ելի, դու լի ես ջահել, կհասկանաս: Զահել տղեն վոր թուր ու թվանքը կապում ա, ձին նստում, հենց ա դիդում, թե սաղ աշխարհն իրանն ա, մարդիկ ել ճանճեր են իր առաջ: Եդպես ել մեր ջահելները—նրանց մեջ ել գլխավորը սա: Գնացին, վրա տվին, մի թուրքի գեղ ել վառեցին, հարամ տպւանքն ու հացն ել թալանեցին, բերին, «խումբերը» տարան, ինչ արին-չարին՝ գիդեմ վոչ, վերջն են դուռ եկավ, վոր սա ըսհենց ես որն ընկավ, սրա պես ել շատերը: Թուրքն ել մեզանից խելոք եր. տեսավ իրան շատ են նեղում, մեջքն ոռւսին բութաւ արավ, պնդացրեց ու... ճամպեքն ել բացվելու տեղ, հենց պինդ փակվեցին, վոնց վոր ոխտն երկաթի դուռ ու կողպեք ըլեն վրեն դրած: Հիմի խոսքս ըտեղ ա գալի թե... եդ մեր տեսած ճամպեն բաց եք անելու, թե՛ մի թաղա կռիվ ել նոր պտեք սարքի... մենք վոր կանք, իրարով ապրող մարդ ենք, թուրքերը վոր մինչև մեր արտերը հասնելը մեղ հաց չտան, մենք կկոտորվենք, թե վոր մենք ել նրանց մեր սարերը չթողնենք, նրանք ել ենտեղ կկոտորվեն: Մենք ել ենք ազամորդի, նրանք ել, շատ ել թե միսս թուրք ա ծնվել, մեկելս հայ. իսան ենք, պետք ա ապրենք, չե... մի լերկուռ որվա կյանքը խի՞ լինք սկ անում... դինջ ու սերով ապրենք ելի... եդ եմ ասում, թեկուղ նեղանաս ել, յա խելքը պակաս պառավի տեղ դնես...

Թե ով ա մեզանից արդար, ով ա մեղավոր, եդ հողը կշոկի, մենակ թե իմ աչքովը տեսամ, վոր առաջվա պես ճամպեքը բաց, լին ու ազատ գնում-դալիս ենք, մեր հարեանութիւնն ել հաստատ ա, ել մեռնեմ, դարդս չի: Դե յես պրծա, ասելիք չունեմ ել. ֆնացածը դու դիդաս, ես խախը:

Ծերունին վերջացրեց իր խոսքն ու մեջքը պատին դեմ անելով չոփով սկսեց չիբուխի կրակը խառնել, վոր ծուխը վարարի:

Միջանի հոգի լի դեսից-դենից հարցեր տվին, խոսեցին, բայց ամենքի ասածն ել նույն յերկու գլխավոր խնդրի շուրջն եր պտտում. նրանք միայն ավելի մանրամասնութուններ ելին ավելացնում և ավելի սարսափելի պատկերներ նկարագրում, թե ինչպես մեծ պատերազմից սկսած մինչև եդ որը գլուղն անվերջ կռիվներից, սովից ու հիվանդութուններից տանջվել ու քայքայվել ե:

Ամենքն անհամբեր սպասում եյին, թե ինչ կասի մեծավորը, վորը գլուխը կախ լսում եր, ու չերբեմն թափահարում, չերբ լսում եր մեկ-մեկու չնտեից պատմվող սոսկուեմների շարանները։ Նա կամաց գլուխը վեր քաշեց ու հաստատ, վճռական ձայնով ասաց.

— Խորհրդային իշխանությունը ձեր իշխանությունն է, այսինքն ձեր ծոցից դուրս չեկած բանվորների ու ետեղ մնացած չքավոր գյուղացիների։ Այժմ մի բան կարող եմ հաստատ ասել, վոր ձեզանից ամեն մեկը, թղամարդ թե կինարմատ, կարող ե մեն-մենակ, ազատ գնալ կայարան, նրա մազին դիպչող չի լինի, ճանապարհը բաց ե ու ազատ։ Յեթե կուզե՞ք՝ հենց եսոր փորձի համար կարող եք միքանի հոգի ուղարկել մեր մարդկանց հետ կայարան, վորոնք նավթ, աղ ու ալյուր են բերելու զորքի համար։ Ես մի հարցը վճռված ե։ Ինչ վերաբերում ե մյուսին, վոր պատերազմ այլևս չլինի, մենք հույս ունենք, վոր մինչև մի չերկու ամիսը դուք այլևս վոչ մի հրացանի ձայն չեք լսի։ Ինչպես դուք եք կոիմներից բեզարել, այնպես ել ձեր հարևան թուրքերը. և վորովհետև իշխանությունը ձեր ձեռքին ե, և դուք ել կոիվ չեք ուզում, պարզ ե, վոր այլևս կոիվ չի լինի։ Կապենք, կտեսնենք։ Իսկ այժմ դուք պետք ե ձեր միջից մարդիկ ընտրեք, վոր գլուղը կառավարեն։ Ընտրեք ենտեսակ մարդկանց, վոր վոչ գող-ավազակ լինեն, վոչ կովարար խառնակիչ, վոչ ել նախկին տանուտեր կամ սորաժնիկ կամ թագավորի հին ծառայող, դուլլուղչի։

Ժողովը վերջացած եր. ամենքի դեմքը պայծառ փալլում եր։ Մեծավորը մտավ շտաբի սենյակը, իսկ գյուղացիք սկսեցին սովորական աղմուկով խորհրդակցել, թե ով պետք ե լինի գլուղի նոր կառավարիչը։

XI

Խորհրդային իշխանության առաջին բջիջն եր կազմակերպվում գյուղում—հեղափոխական կոմիտեն կամ, ինչպես են ժամանակ ելին ասում, ռուսերենի կրճատած ձևը—**սեվկոմ**։

Ծերերը չեյին մասնակցում խոսակցությանը, վոր պտըտվում եր ռեկոմի ընտրության շուրջը, իսկ յեթե պատահում եր, վոր կարծիք ելին ուզում իմանալ, պատասխանում եյին.

— Մեր դուրանը (ժամանակը) անց ա կացել, հիմի ձերն ա գեղն ել, նրա ցաֆն ու հոգսն ել. ում ուզում եք, ջոկեցեք, մենակ հենցին ջոկեցեք, վոր գել չդառնա ես գեղն ուտի։

Ջահելները կանգ ելին առել Կիկոսի վրա, վորն եղ միջոցին իրեն տանը Իվանին ձվածեղով եր հլուրասիրում և իսկի միտք ել չուներ խառնվելու վորևե գործի, թեև կինը, ամառվա շոգին ծառի ծերին թառած ճճենի (ճպուռ) նման ճտճտում եր ու համոզում մարդուն, վոր «գեղի տերը» դառնա:

— Տղերք, — ձայնովեց Ջահելներեց մեկը, — Կիկոսից հարմաբը չկա, մարդը սրանց հետ ծանոթ ա, հրեն մի հոգու չիլ տալեղ ղոնաղ ա արել. «ծանոթութիւն աշխարհը կերել ա», վոնց վոր մեր պապերն են ասել. հազիր մի մարդ ունենք սրանց վարք ու բարքին ծանոթ, դնանք բերենք, թող ռեմկո դառնա, թե վոր ես մեծավորը համոզվի...

Միքանի րոպելից հետո Կիկոսը կանգնած եր մեծավորի առաջ, գլուխը կախ ու սպասում եր, թե ինչ կհրամայի:

Մեծավորը, վոր չերկրորդ անգամն եր տեսնում Կիկոսին նույն խեղճ դրութիւն մեջ, ժպտալով դիմեց նրան.

— Ընկեր Կիրակոս, գլուկացիք ուզում են, վոր դու ռեկոմի նախագահ դառնաս, ի՞նչ ես ասում:

— Ի՞նչ պետք ա ասեմ, հընգեր մեծավոր, ի՞նչ կոռից եմ փախել, վոր եղ կոռիցը փախչեմ. գեղ ա, հրամայում ա, չես մի Կիկոս, վո՞նց ատկաղ անեմ. մենակ ասեք, թե ի՞նչ պետք ա ասեմ. ռեմկոն ի՞նչ դադ ա:

— Ռեկոմի նախագահի պարտականութիւնն ե գլուղը կառավարել. նրա ամեն հոգսն ու ցալը հոգալ, մի խոսքով՝ իշխանութիւնն ե գլուղի մեջ:

— Հա... — ծոր տվեց Կիկոսը. — լանի վոնց վոր քոխվին ելի:

— Այո, մոտավորապես եղպես մի բան, միայն վոչ քոխվի պես անորեն բաներ անող. — պատասխանեց մեծավորը և հենց ուզում եր շարունակել ռեկոմի պարտականութիւնների բացատրութիւնը, չերբ Կիկոսն ընդհատեց նրան.

— Հընգեր մեծավոր, արի մի բան ասեմ, համա նեղանաւ վոչ:

— Ասա:

— Եդ իմ բանը չի, իմ տունն ինչ իմ տունն ա, եմ ել իմ կնիկն ա կառավարում, չես կարամ գեղ կառավարեմ, միտքս վարիլ չի, խեղքս կտրիլ չի. մի սխալ բան կանեմ, կտան գլուխս կթակեն, եսքան տարվա սաղ-սալամաթ պահած գլուխս...

— Իսկ յեթե գլուղը իր պահանջի վրա պնդի, և չես ել ստիպված լինեմ կարգադրել, վոր դու ռեկոմ ֆիաս, դրան ի՞նչ կասես:

— Դե վոր հրամայես, ինչ կարամ անեմ. յես հրամանից կարամ փախչեմ: Միթամ վոր հմի հրամայես, թե՛ Կիկոս, վեր կաց են մեծ քարի ծերիցն ընկի, ջարդուփշուր արի, հրամանդ կարամ չկատարեմ, խի, յես քանի՞ գլխանի յեմ... Ես աշխարհը հենց ա ստեղծած, վոր մեծավոր ու փոքրավոր ըլի. մեծավորը կհրամայի, փոքրավորն ել կկատարի. յես վոր կամ, եդ փոքրավորների ցեղիցն եմ, աստո՞ծ ըտենց ա կամեցել. ինչ վոր հրամայեք, կկատարեմ, համա յես մեծավոր դառնամ, դեդ կառավարեմ... սաղ աշխարհն ի՞նչ կասի, թե տեհեք, տեհեք, անտեր գեղի գլխին ով ա իշխան դառել: Այ որինակ քեզ իմ ելը...

Այստեղ մեծավորն ընդհատեց Կիկոսին ու հետաքրքրու-թյամբ մեկ ել դիտելով նրան, ժպտալով, թե՛

— Կիրակոս, ընկեր Կիրակոս, եդ վճից լեզուդ բացվել, փրկխոսիմա յես դառել. բա վոր առաջին անգամ քեդ բռնել բերել էլին ինձ մոտ, ինչո՞ւ չեցիր կարողանում յերկու բառ ասել. իսկ հիմի եղպիս ճառում ես:

— Կբախես, հընգեր ջան, յես մի խեղճ մարդ եմ. թող զընամ իմ բանին, շատ կխոսացնես, կտամ մի սարսաղ զրից կանեմ... դե, խի, դու գիղում չեմ, վոր շուներ իր դռանը զալում կըլի...

Գլուղացիք, վոր հետաքրքրությամբ հետևում էյին այս խոսակցությանը, առաջին անգամ տեսան ու համոզվեցին, վոր Կիկոսը ենքան ել անխելք ու սարսաղ մարդ չի, ինչքան իրենք կարծում էին մինչ այդ, մանավանդ վոր նա շատ համարձակ եր խոսում իր մեծավորի հետ, վորը լսելով Կիկոսի առարկութունները, առաջարկեց գլուղացիներին նոր մարդու հանձնել ունկոմի նախահռութունը, վորից հետո արձակեց Կիկոսին, վորն ուրախությունից թռչելով հասավ տուն և դռան շեմքին սպասող կնոջը՝ թե՛

— Կնիկ, աչքդ լիս, գլուխս խաթից լավ ազատեցի. եշս դուս քաշի, գնամ Իվանի համար չոր փետ բերեմ:

Թագագյուլը, իհարկե, «հողեմ-ցխեմ» արավ, մարդուն անիծեց, իր անբախտ գլուխը սգաց, վոր «ծավը պակաս» մարդ ունի. փորձ արավ համոզել Կիկոսին՝ ասելով, թե՛ «բախտն չեկել դռանը չոքել ա, դու բախտին քացի յես տալի» ու նման բաներ, բայց Կիկոսն անդրդվելի չեր. նա եդ խոսքի կարկուտին ու կնոջ կատաղած զուգոռոցին մի պատասխան տվեց, թե՛

— Կնիկ, չես ասում, թե խաթեն ա դռանս չոքել, ասում ես,

Թե բախտն ա չոքել... քանի՛-քանի քյոխվա, քանի՛-քանի մեծ-
մեծ չնոփնիկ մարդիկ կար մի ժամանակ, հիմի ուր են, վորին
սպանել են, վորը փախել ա քարեքար, սարեսար ընկել, համա
յես միշտ կամ ու կամ: Նշս սաղ ըլի, նրա մեջքովն ենքան կաշ-
խատեմ, վոր տանդ լիսն ու կրակն անպակաս կըլի: Նս մեծա-
վորին ել կխնդրեմ, թե կարելի յա մորթած կովի ու տարած
յեղների տեղ մի բան տա, վարից-ցանից չընկնեմ, երեսնքս ել
թաց ու ցամաք անեն... Յես ասում եմ մարդ դառնանք, մարդա-
վարի մեր հալալ ապրուստին, վար ու ցանին կենանք, դու ա-
սում ես՝ գնա Ռեմկո դառ. ըսկի մի կարգին ել չեմ հասկանում,
թե Ռեմկո ասածդ ինչ միտք ունի...

Մարդ ու կնկա կռիֆն ենքան շատ չերկարեց, վորովհետեւ
Կիկոսն իր եղբ գոմից դուրս քաշեց, չուլը վրեն գցեց, ու չիբբ
գյուղն աղմկելով Ռեմկո յեր ընտրում, Կիկոսն իր եղն սուտջ ա-
րած մոտիկ անտառը չոր փայտի չեր գնում:

Յերբ Կիկոսն իրիկնադեմին անտառից տուն եր դառնում
եղին չոր փայտ բարձած ու միտք անում, թե ինչպես պետք է
Իվանն ուրախանա ու շնորհակալ լինի, սարի լանջին նկատեց,
թե ինչպես մեծ ճանապարհով ձիավորներ ե վոր քշած գնում են,
հա գնում, գեպի վերև:

«Կովի վախտը սհենց բաներ շատ կպատահի», միտք արալ
նա ու բզեց իշին, վոր առաջ շարժվի, ու շուտ տուն հասնի: Բայց
վոքքան մեծ չեղավ նրա դարձմտեքը, չերբ տուն հասնելուն պես
նկատեց, վոր Իվանի բրիչկեմ (ինչպես ինքն եր ասում շարժա-
կան խոհանոցին) տան դռանը չի: Նրա շփոթված հարցին կինը
պատասխանեց, թե ինչ-վոր պողավոր կար, գնացին, կռիվը շա-
րունակվում է, իսկ գլուղը մնացել է անտեր:

— Պահ, կնիկ, հիմի վոր տեղներս քանդվեց, թե վոր դրանք
ըստիան քոչեցին: Ապա իշի բեռը քանդելով ու կամաց ցած թա-
փելով՝ ինքն իրեն, բայց բարձր ձայնով, թե՛

— Բալքի լաֆն ես ա՛...

Գլուղում մի անասելի աղմուկ-իրարանցում կար: Ամենքին
տնից դուրս ելին քաշել, ժողովի բերել: Ռեմկոն ընտրված եր
արդեն: Մեծ մասը ջահելներ ելին, իսկ նախագահը կոնատ Ար-
տեմն եր, մի ձախ թևից գուրկ մարդ, վորի կուռը Բագու մաշի-
նի տակն եր ընկել—«Մանթաշովի պրոմըսլումը»:

Բացի հեղափոխական կոմիտեից, գյուղն զբաղված եր մի
բոլորովին նոր ձեռի մարմնի կազմակերպութեամբ. դա—կոմբըլիշն

եր, կամ կոմյաչեկեն, վորի անելիքների մասին գլուղում վոչ-վոք գաղափար չունենր, մինչդեռ, ինչպես պատմում եր կազմակերպող կարմիր-բանակայինը, դա, եղ յաչեկան եր լինելու գլուղի ամենաաչքաբաց ղեկավար մարմինը, խորհրդային իշխանութւան արթուն հսկող աչքը և այլն: Իհարկե, ամեն մարդ չի կարող մտնել յաչեկան, ուստի առաջին հերթին յաչեկայի անդամ դարձան են գլուղացիները, վորոնք այս կամ այն կերպ դժգոհ լինելով նախորդ իշխանութւան քաղաքականութունից, անցել ելին Կարմիր բանակի կողմը և զենքը դարձրել դեպի նախկին տերերը: Այդպիսիների թիվը քիչ եր առաջժ, վորովհետև շատերը չէին վերադարձել դեռևս շարունակվող կովի գաղտից:

Կիկոսն, իհարկե, անմասն չմնաց այս ամենից: Նրան ել կանչեցին ժողովի, խոսեցին զանազան հարցերի մասին, վորից նա շատ բան չեր հասկանում, և առաջարկեցին մինչև անգամ մտնել յաչեկայի մեջ, բայց Կիկոսը հրաժարվեց, նախ վոր եղ յաչեկա ասածը շաբաթական ամենաքիչը մի անգամ պետք ե ժողով գումարեր, իսկ Կիկոսը ժողովը համարում եր բանուգործից ընկնել, դուր տեղը ժամանակ կորցնել, մանավանդ, վոր գիտեր, թե առանց իրեն ել գործը տանող կլինի. լերկորդն ել, ինչպես քիչ-միչ հասկացավ, դրանք աստծուն հակառակ մարդիկ պետք ե լինեն, ժամն ուղում ելին վերցնեն շինեն ժողովի ու եղպես բաների տեղ, տերտեր-տիրացու եղտեղ մուտք չունեյին, իսկ վոր գլխավորն եր, քչփչում ելին, վոր նախկին քոխվա, ստրաժնիկ և ել ուրիշ դուլլուղչի մարդկանց բռնեն բանտարկեն, իսկ Կիկոսի մտքոմն ել չեր անցնում մեկնումեկին վատութիւն անի, ենքան տարվա դուռ ու դրկից հարկանների, են տեսակ աղա մարդկանց քեֆին դիպչի:

Կիկոսի հատուկենտ պատասխանից յերևաց. վոր նա յաչեկայի մարդ չե, վորից հետո նա թողեց ժողովը ու գնաց տուն ինքն իրեն միտք անելով՝ եղ բաների վրա, թե ինչ ե լինելու վերջը: Նա կնոջ հետաքրքրութւնը բավարարեց եսքան միայն ասելով, թե՝

— Դրուստ ա, եղ յաչեկեն քլասիք մարդկանց համար շատ ոգտավոր բան ա ասում, համա են վոր քոխվի, սուդյի, առաջուց ստրաժնիկութիւնն արածի, ուզբաշու (անտառապահ), տերտերի ու համփա մարդկանց հակառակ ա, եղ մինը լավ չի... Թաղագլուղը ետտեղ ել մի լավ հայհոյեց իր անբան մար-

դուռն ու հետաքրքրվեց, թե կնիկարմատը կարճդ ե մտնել յա-
չեցկա: Կիկոսը չգիտեր:

— Քու գլխին փափախ դնողի, իմ գլխին լաչակ գցողի ձեռը
կոտորի,—ասաց վորդովված Թադազյուլը.—հալա կաց մի տենամ,
թե կնիկը ուսմիկ յա յաչիկա կարա դառնա, տես աչքդ կհանեմ,
յաչեկա կդառնամ, թե չե...

Ամբողջ գիշեր գյուղը ղրաղված եր իր հեղկոմի և կոմբլի-
ջի կազմակերպությամբ: Առավոտյան դեմ կովից վերադարձան
գյուղի տղաներից շատերը, վորոնք ավելի կենդանացրին դորժը:
Նրանք աստուսանքով պատմում ելին, թե ինչպես փախչող դորժն
իր հետ բանտարկված տեղից տարել ե Կարոյին և փչացրել, այ-
սինքն ճանապարհին սպանել:

Նոր կազմակերպված կոմբլիջի առաջին հոգսն եղավ Կա-
րոյի ընտանիքի դրությունը բարելավել, գոնե հացով ասպահո-
վել, վոր լերեխաները սովի ձեռին չկոտորվին, ապա միքանի
թերահավատ մարդկանց կանչեց ու յաչիկայի տղաներից յերկու
հոգու հետ միասին ճամպեց կայսրան, վոր վերջնականապես
համոզվին, թե ճամպաները դեպի կայսրան, թուրքերի միջով,
միանգամայն աներկյուղ են ու ապահով: Գնացողները նուչն
յերեկոյան վերադարձան՝ պատմելով, թե ամեն բան խաղաղ ու
հանգիստ ե, ասելով, թե՝ «ուզում ես գլխիդ մի սինի վոսկի դի-
ռ ու աղառ-համարձակ մեն-մենակ գնա, իսկի մոտ չեկող ու ա-
սող ել չի ըլի, թե աչքիդ վերևը սե ունք կա»:

Ամբողջ շրջանում կոիքները դադարել էյին, լերկիլը դարձե-
կար խորհրդային, միայն լուր կար, թե Զանգեզուրում գեռ կռիվ-
ներ կան, թե «խումբերը» են սարերում դիրք են բռնել և ու-
զում ին իրենք ժողովրդի գլխին նստած մնան:

Իշխանութունը տեղերում ամբանում եր, կառավարութուն-
ը հայտարարել եր, թե՝ «ով վոր սխալվել ա, դուդ ճամպից
ծովել, խալխին ֆնաս տվել ու հիմի փոշմանել ա իր արարքից
և ուզում ա իր տուն գա, իր հալալ աշխատանքին կենա, կառա-
վարութունը նրան ներում ա»: Եսպես եր ձևակերպում դյուղա-
ցին խորհրդային իշխանություն հայտարարած ամսխատիան կամ,
ինչպես ասում ելին, «մանիֆեստը» և ավելացնում, վոր «շատ մե-
ծահոգի կառավարութին ա»:

Փախածներից ու մոլորվածներից շատերը վերադարձան,
վորոնցից միքանիսը դեռ թերահավատությամբ էյին վերաբերվում
դեպի խորհրդային իշխանության հոստատ մնալը, բայց վախե-

նում ելին ալդ մասին բացարձակ խոսելու Դրանք գլուղի նախկին տերերն ելին, «Չուկ-Չուկ գրփող, մեկտեղ ուտողները», վորոնք խոսքը տեղը չեկած միջոցին իրար ականջի փսփսում ելին. «Թագավորի թախտից ընկնելու որից քանի՜-քանիսն են յեկել ու գնացել. սրանք ել յերկար չեն մնա»:

Բայց հակառակ նրանց կամքին ու ցանկության, խորհրդային իշխանութունն որըստորե ավելի յեր արմատները խորը թաղում, ժողովրդին վստահություն ու հավատ ներշնչում: Խալխը լավ եր ճանաչում եղ «ատամները հանած գելերին» և նրանց նոր անուն եր դրել՝ կոմսիկ *) կամ հալա:

Եղ կոնտրիկները չիրեմն միայն ձայն ելին բարձրացնում, չեթե հարցը վերաբերում եր կրօնին կամ մկրտության, ամուսնության և թաղման ծեսերին: «Պապական որենքը վտանատակ են տալիս», ասում ելին նրանք, «մեռնն ու սուրբ խաչը անպատիվ են անում»... Յեվ ալս ձեի աղմուկը ավելի մեծացավ, յերբ միջանի ամսում կազմակերպված կոնցովուր (կոմյերիտմիտություն) գրավեց չեկեղեցին, վրայի խաչը հանեց, տեղը մի փոքրիկ կարմիր դրոշակ դրեց ու սկսեց իր ժողովները այնտեղ անել, ուր և հիմնեց մի փոքրիկ գլուղական խրճիթ-ընթերցարան:

Եղ որերին եր, վոր Կիկոսը բանից բեխաբար, ուղեց մի մատաղ մորթի ժամի դռանը և պատարագ անել տա իր մեռած պատերի ու հորն ու մոր հոգու փրկության համար, յերբ մին ել չեկեղեցու մոտից անցնելիս լսեց, թե ինչպես չերեկույան ժամերգության տեղ կոնցովուր յերդն ե հնչում չեկեղեցու ներսը: Տերտերն ել ինչ առաջի որը, չերբ «պողավորները» յեկան, փախել եր ու դեռ չեր վերադարձել:

Կիկոսը միտք արավ, միտք, ու բան չհասկանալով ես փոփոխությունից,—ձալըմթ...—վճռեց նա, աստծուն ել են թագավորի պես իրան թախտիցը վեր գցել, ելի, վոր ժամն ես որին ա... թե չե գլխներին կրակ վեր կածեր...»: Ես մտքի մեջ եր, վոր առաջը ցցվեց ժամկոչ Յեփրեմը ու դառնալով Կիկոսին, թե՝

— Կիկոս, հը... միտք ես անում, թե ես վոնց են ժամը և-ևս արեմ... սաղ աշխարհը քանդեցին, քանդեցին... Յես, շինդար Սողոմոնն ու սուղյա Գալուստը ժողով ենք արել, ուզում ենք մի և-ևս գրենք, վոր կառավարութիւնը ես մեր ժամը և-ևս անի...

*) Կոնտրիկ—ռուսերեն կոնտր-ռեվոլյուցիոներ (հակահեղափոխական) բառի կրճատումն ե: Մ. Դ.

ինչ վոր հավատացյալ կա հալա աստծու ճամպիցը չեւած, պետք ա եդ թուղթը և-ևս անի, ստորագրի, թե չե մեր մեռելները են աշխարհում կրակի միջին և-ևս կըլին, մեր հանդերձն ել կարկուտը կգա և-ևս կանի... Արի գնանք սուղյա Գալուստի տուն, նա շատ բան և-ևս կանի. կպատմի սրանց անորինությունների մասին: Դու յե՛ր... նավակատիկ ա դալի, մարդ պետք ա իր մեռելների համար և-ևս անի, ես ժամի դռանը չըլի, հրե՛ն թող են ավագ-սուրբ նշանի խաչն ըլի. մատաղդ ընդեղ և-ևս արա, մենք կգանք, և-ևս կանենք:

— Յանի՛... խնամի Յեփրեմ, — ծոր տվեց Կիկոսը, — ասում ես դամ, թե ի՞նչ անեմ. թուղթ եք գրում, գրեցեք. միքանի հետ չես թղթի տակ ձեռք եմ քաշել, վոր հիմի ձեռք քաշեմ... չես անգրագիր (անգրագետ) մարդ եմ, ուղում եք, իմ տիղ ձեռք քաշեցեք ու «վասն անգրագիտության» արեք, վոնց վոր են վաղ վախտը պրիգորն*) իք սարքում:

— Ձե, ե, չե՛... Կիկոս. գիդում չես բանն ինչ տեղ ա. ժամը խել են, տերտերին չեն ընդունում, կնունքն ու պսակը և-ևս են արել, պետք ա ժողովուրդը բողոք տա, և-ևս անի, դու հո խախիցը լիտ չես մնա, եզուց ել մի մեռել կունենաս, տանը կհոռի, առանց տերտերի հու չեմ թաղիլ, որենք կա, ծես կա, աստված և-ևս կանի. արի գնանք:

— Ձե, ախպիր, եդ իմ բանը չի, — գլուխը բացասաբար շարժեց Կիկոսը: — Ինչ ուղում եք արեք, աստծու ցավը հու ինձ չեն տվել: Աստծոն իր աստծո տեղովը... մեղա աստծու... վոր կարում չի սրանց հախիցը գա, մի Կիկոսն ի՞նչ կարա անի: Կտաք գլուխըս մի փորձանք կբերեք, թող գնամ իմ ցավին, — ասեց Կիկոսն ու ճամպա ընկավ դեպի տուն:

Ժամկոչ Յեփրեմը նշա յետևից մի արհամարհական հայացք գցեց ու գլուխը թափահարելով, թե՛

— Դիփդ ել ըտհենց եք անում, վոր ամեն բան և-ևս ա ըլում ե՛...

Կիկոսը տանը պատմեց կնոջը չեկեղեցու պատմութունը և շատ զարմացավ, վոր կինը ամեն բան գիտեր և, վոր գլխավորն էր, հայհոյում եր սուրբերին ու չեկեղեցուն՝ ասելով, թե դրանք սուտ, հնարովի բաներ են ժողովողին խաբելու համար, և պատմեց Կիկոսին, թե ինչպես քաղաքից մի կին եր չեկել գյուղ, ժո-

*) Թուսերեն «միբսկի պրիգորն» — «համախոսական վճիռ» Մ.Դ.

դով արել, կանանց հավաքել ու եղ տեսակ բաների մասին պատմեց, ու թե ինչպես Կիկոսի կինը մտել է գլուղի կանանց «կինբաժնի» մեջ ու շուտով «յաչելիկա» պիտի դառնա:

Կիկոսը մեկ ուզեց բարկանա կնոջ վրա, մեկ էլ հետաքրքրութունը բավարարելու համար հարցրեց.

— Յանի աստծուն թախտից գցել է՞ն...

— Շաշ գլխիդ ձուն դա,—պատասխանեց կինը քիչ զայրացած ձայնով.—աստոծ թախտ ա ունեցել, վոր վրիցը վեր գցե՞ն. մի գնա լաչելիկա, տես ինչեր են պատմում ե՛... Դիպի սարքովի բաներ են: Ե՛հ, յես ել մարդ եմ դտել, ուզում եմ բան հասկացնեմ, ելի՛ր Վոնց վոր Կիկոս աշխարհ ես եկել, ընենց ել Կիկոս գնալու չես, ես աշխարհից բխարար: Յես «կինբաժին» եմ դառել, տղես ել կոնցոմոլ, դե գնա հենց քու եղի հետ զրից արա:

Կիկոսն ես ամենը լուռու մունջ լսում եր, առաջը դրած հաց ու պանիրը ծամելով, վորը վերջացնելուց հետո կնոջը, թե՛

— Ե՛, ա՛ կնիկ, կնիկ ես ելի, քեզ լ՞նչ ասեմ. սարսաղ-սարսաղ դուս ես տալի. բա հե՛րու խի չի՛յր ըտհենց խոսում. ժամումը մոմը ջուխտ-ջուխտ իր վառում, մատաղն ել քու ձեռով բաժանում, հիմի յեկել ես, թե՛ աստոծ չկա: Մի հալա «ե-ես» Յեմերեմին ել հարցրու ե՛... Համա ի՞նձ ի՞նչ, չես կովի հետ զավի չուենեմ. կասեն՝ աստոծ կա, ժամ դնա, կգնամ. կասեն՝ ել աստոծ չկա, ժամիցը դուս արի, հիմի յել դուս կգամ, մենակ թե դլուխս թակեն վոչ, եղն ել ձեռիցս առնեն վոչ...

Ծիշտ ե, Կիկոսը եղպես պատասխան տվեց կնոջը, բայց սաղ գիշեր միտք իր անում եղ մասին ու չե՛ր կարողանում մի չեղրակացության դալ, թե առանց աստծու աշխարհիս բանը վոնց ա շուռ գալու:

Իսկ մյուս որը հանդում, ազատ ժամին մոտենում եր եղին ու աստծու գոյության և չգոյության մասին հետը զրույց անում ասելով.

— Հիմի, ե՛ջ ջան, չես քու տերն եմ, ասենք քու աստծո՞ր, չես վոր ընեմ վոչ, բա քեզ թվ կպահի, ես ձորի, ես քուի միջին գեղերը կգան ու քեզ կուտեն, ելի, հը՛, դրուստ չեմ ասեմ... Հալրաթ վոր դրուստ եմ ասում. համա վոր աստծու տունը ձեռիցը խել են, նա խի՛ չի յերկնքիցը կրակ թափում խլողների գլխին, հը՞, բալքի մեռել ա... Բա աստոծ կմեռնի՞... հը՛, ե՛ջ ջան, դե մի ջուղար տու ելի, վա՛յ քու տերը մեռնի վոչ, ի՞նչ անելու հալվան ես:—Ասում եր Կիկոսը ու նորից իր մտածածքների ծովը ընկած գործի կենում:

XII

Կյանքը քանի գնում, հնքան ալելի կանոնավորվում եր: Դյուզը կառավարվում եր տեղացիներով. դրսից միայն մի կոմ-բլիշի քարտուղար կար, վորը սովորեցնում եր, թե ինչպես պետք ե կառավարվի նոր գյուղը, խորհրդային իշխանութիւն գյուղը: Յերբեմն դասախոսութիւն եր տալիս, յերբեմն ել հալց ու պատասխանով որենքներ եր բացատրում, իսկ ամենից շատ խոսում եր ընութիւն յերևութիւնների մասին, վոր չափազանց հետաքրքրում եր սնտրիապաշտ գյուղացիներին:

Ես կոմբլիշի քարտուղարը զարմանալի յերիտասարդ եր. գլխին եր հավաքում ահել ու ջահել, փորձեր եր անում, ջրից գոլորշի հանում, գոլորշին նորից ջուր, «անձրևս շինում, ե եղ-պեսութիւնով համոզում մարդկանց, թե ամեն բան դիտութիւն ձեռին ե, թե յերկնքում վոչ մի գաղտնիք չկա, թե ամպն ու կար-կուտը սովորական բաներ են ե այլն:

Իհարկե, ես բանը դուր չեր գալիս Կոնօրիկներին, վորոնք հարմար գեպք ելին փնտռում, վոր հարցերով նեղը լծեն՝ ասելով, թե ամենը աստծու ձեռին ե ե այլն, բայց միշտ ել իրենց ար-ժանի պատասխանն ելին ստանում ու լետ քաշվում քու-փոշ-ման, անիծելով, վոր «նեղը» ծնվիլ ե:

Ճանապարհը դեպի կայարան ու քաղաք ազատ եր ու բաց, վոնց վոր «Ջաղացի ճամպա», ինչպես գյուղացիք ելին ընորոշում, կռիվները միանգամայն դադարած, հրացանի ձայնն այլևս չեր լսվում... գյուղացուն սրանից ավելի ել ինչ եր պետք: Ամեն մեկը սկսել եր իր կոտրածը նորոգել, ճղվածը կարկատել, կո-րուստը փնտռել, մի խոսքով՝ առաջները դարուն եր գալիս, ու ինչ վոր աշնանը չիլին կարողացել ցանել, պատրաստութիւն-ներ ելին տեսնում, վոր գարնանը լրացնեն:

Եղպիս եր կյանքը ազատ ու շինարար, յերբ մի իրիկուն Կիկոսը տուն դառնալիս նկատեց, վոր գյուղն ինչ-վոր իր տե-սածը չի, ելի փոխվել ե: Յուրտ դիմաթ ձմեռվա կեսին մար-դիկ փոխանակ գլուխները ծածկի տակ կոխելու, դուրս ելին յեկել ու... գյուղը բլթըլթացող լեռման ջրի պես նորից տակն ու վրա յեր յեղել: Բանն այն ե, վոր գյուղը նորից լցվել եր պողավորներով, ինչ-վոր «յաչիյկա» կար, ամենքը զինված ելին: Դյուզի վերին կողմը գտնվող սարերի ձերին պահապաններ կանգ-

հաճ հսկում ելին. մի խոսքով՝ ինչպես պատերազմի ժամանակն է լինում: Ծիշտ եղ տեսակ զրութուէն եր:

Կիկոսը իր ելը «չո՛ւ, հա չո՛ւ» անկողով, սառած գետնի վրայով հագիվ եր հասել տան դուռը, յերբ առաջը կտրեց լաչեկա Դավիթը ու Կիկոսի վրա բարկացած, թե՛

— Են թիչ ես խոսացել «ե-ես» Յեփրեմի հետ:

Կիկոսը շշկլվեց: Ձե՛ վոր լերկուսով ելին լեղիլ խոսելիս ժամի պատի տակ. սա՛ վորտեղից ե լսել:

— Բան չեմ ասել, Դավիթ ջան. ժամի մասին ենք քիչ զրից արել: Ֆնասակար բան չեմ ասել:

— Իե, տանդ վեր կընկես ու ել դուս չես գա, թե չե վոր մին ել քեզ տեսել ենք եղ Յեփրեմի-զադի հետ, թամամ վոր «ե-ես» կանենք:

Կիկոսը թուզը-մուզը ցամաքած տուն մտավ ու կնկանը պատմեց, թե ինչպես լաչեկա Դավիթը իմացել ա իր խոսակցութլունը «ե-ես» Յեփրեմի հետ:

«Սատանի ջինս են, ինչ են, եղ լաչեկեքը, ամեն մի պուճախում աչք ու անդաճ ունեն»... ինքն իրան, բայց բարձր փնթփնթաց Կիկոսը, վորին կինը գաղաղած պատասխանեց, թե ինչ-վոր կոնտրիկ կա, բոլորին ել բռնել գոմն են ածել:

— Ի՞նչ ա պատահել, կնիկ, զեղը խի՞ յա ել չետ խառնվիլ. անջախ հալալ ապրուստի տեր ինք դառել:

— Հալալ ապրուստը գլխիդ դիպչի, չո՛ւ ու ցավ ա պատահել, «խումբերը» ել յետ Երևան խլել են ու գալիս են դբա մեզ. դե տղա լես, հիմի դիմացի: Բացվել ա, վոր ամեն գեղի կոնտրիկ նրանց հետ կապ ա ունեցել, դբա համար ել դրսի ունանցը քոնոտել են, ու լավ կըլի, վոր շանսատակ անեն. անջախ եր հաց-ներս հալալվել, ելի ուզում են հարամ մկան պես կարասն ընկ-նեն, մուրտառեն:

— Բա հիմի ասում ես, վոր բանը խարաբ ա ելի...

— Խարաբ ա թե խարաբ չի, ըտհենց ա:

— Բա վոր քեզ ասում ի, ա՛ կնիկ, թե տեղդ ծանր նստի, վինց եր իմ խելքն ու քունը: Ուզում իր, վոր ռեմկո դառնամ, հիմի վինց ես, վոր գան ու ես քու ռեմկոյին ժամի զանգակատանից կախ անեն. բա ձեր կիրքաթինքը թիչ ա շինում, դե դո՛ւս արի, դոչդ գյուլլին դեմ արա ե՛, — հեղենց Կիկոսը: — Մի քեզ ել մտիկ, ինձ ել, լստով բանի խառնվի ե՛, Խի՞ չես վատդ լոր-դանիդ գյորա մեկնում, հը... Ռւմ աղջիկն ես, յա Ռւմ կնիկը...

Գիրգուժ չէս, վոր ինչքան աշխարհը փոխվի, ել յետ լուսմ-
րուղը (բոռնցքը) քյասիրի գլխին ա գիպչելի՞ւ... Դե գնա հիմի
կինքաթինք դառ, ինձ ել ուսկո շինի: Յեկել են, թե՛ Կիկոս, թե՛
յես իրեցփոխ «ե-ես»-ի հետ ժամի կողքին զրից արել... Կնիկ,
հրես խումբերը կզան, ել յետ կսկսվի հին նաղլը...

— Ի՛հ, հոգեմ յես նրանց գլուխը, սող ըլեն մեր պողպատոր-
նին, հրես եկել են մեզ թե ու թիկունք: Վա՛չ նրանց շաշ հալին
կենա. ապում են՝ մեր տերտերն ել ա նրանց հետ. փարաջեն հա-
նած պատրոնդաշին ջուխտ-ջուխտ կապած գալիս ա:

— Կդա, բա գալ չի՞, տունը խել, ժամը քանդել են, բա
գալ չի՞...

— Ա՛ սեասիրտ, — ճչաց կինը, — ձենդ կտրի, կիմանան, կզան
կտանեն իշախառանջի պես կսառկացնեն:

Կիկոսը նոր ուշքի յեկավ, վոր ավելորդ բաներ շատ ե խո-
սել ու լեզունը լուրջ կոխելով, թե՛

— Ա՛ կնիկ, արի չուլն ինձ տու, գնամ ես գիշեր գոմումը
քնիմ, աշխարհիս խառնակ վախտն ա, կզան, ունենք-չունենք
մի ել ու մի կով, կառնեն կտանեն...

Ու մինչդեռ կինը հորդորում եր, վոր մարդը տանը մնա,
Կիկոսը հին կարպետն ուսին՝ գոմը մտավ և կովի առաջը խոտ
գցելով, մոտեցավ ելին ու սկսեց տխուր-տխուր պատմել նրան
եղելությունը:

— Միտդ ա, ել ջան, են խումբերը... Են վոր մեզ իրարից
ջոկեցին... են խումբերը ել յետ գալիս են. ի՛նչ պտենք անիլ...

Ապա տեղավորվելով ախոռում, գլուխը մսուրին դրեց ու
կես քնի մեջ մրմնջաց.

— Բալքի լաջի ես ա՛... — ու քնեց:

Առավոտը Կիկոսը վեր կացավ ու հենց են ե՛ պատրաստ-
վում եր, թե եշն առաջ անի ու հանդը գնա, յերբ յաչեյկա Դա-
վիթը լեկավ և կանչեց գեղամեջ, ուր միքանի անծանոթ մարդ
նստած քոխվա Սարիրեգի առաջվա տան սենյակներից մեկում
(վոր հիմի յաչեյկայի ժողովատեղն եր), առաջները թղթեր դրած
կարդում ու շուռ ու մուռ եյին տալիս:

Մի մեծ դավթար բաց արին, թերթեցին ու մի յերեսի վրա
կարդալով Կիկոսի անուն-ազգանունը, ծնված թիջն ու ելի մի-
քանի մանրամասնություններ նրա կյանքից ու ապրուստից,
հարց տվին, թե նա յերեցփոխ Յեփրեմի հետ ինչ ե խոսել ժամի
մոտ են իրիկունը, վորի մասին մենք արդեն գիտենք:

Կիկոսը միառժի պատմեց, զարմանալով՝ նախ, վոր իր անունը «դավթար ա ընկել», քերկրորդ, վոր ես անծանոթ մարդիկ ամեն բան գիտեն, ամեն մարդու ճանաչում են, ու թե վոր «մուկն իր պոչը հանդոււմ ժաժ տա, սրանք հստեղ արդեն տեղեկություն կառնեն», վոնց վոր ինքն եր պատմում կնկանը:

Կիկոսին քերկար չպահեցին, միայն սաստեցին, վոր առաջժամ տանից չհեռանա, վորովհետեւ քննության համար կարող ե պետք գալ, և շատ ելի կնպես բաներ ասացին, վորից Կիկոսը բան չհասկացավ:

— Հրաման քեզ, հընգեր. տանից թե վոտս դուս դնեմ, թող երկու վոտս ել փշովն. վոր հրամայեք, Կիկոսը հաց ել չի ուտիլ. մի դալաթ ա՛ր արել եմ. լես չեյի գիդում, թե եդ գլխամեռ «ե-կա»-ի հետ չի կարելի խոսել, հիմի վոր հրամայում եք, վոչ կլտ-սեմ, վոչ կլսեմ:

Կիկոսը տանը նստած, կնկանը պատմում եր իր գլխի յե-կած փորձանքի մասին, յերջներս մտալ նրա աներձադ Ունանը և պատմեց, թե ինչպես կոնտրիկները բուռն են սարքել բալլերիկ-ներէի դեմ, և թե ինչպես աջժամ կոիջներ կան Յերկանի մեջ ու նրա մոտերքը...

— Ունան ջան, հոյնամս չի դալ...—կես վախեցած կես սար-սափած հարցրեց Կիկոսը:

— Կարող ա գա, թե վոր բալլերիկը հալթի վոչ:

— Յեղով եդ կըլլ՞ վճր...

— Իմ դիդալով դա անկարելի բան ա, չչունքի հիմի թալ-խը դիփ բալլերիկի կողմն ա, հենց ինքը բալլերիկ ա, ել խուճերը կարող չեն գան, նամանալանդ, վոնց վոր սուդյա Գալուստն ա ասում, թե վոր ես մեր կոնտրիկներին ու մի յերկու դաշադ գլտդա կան, նրանց ել բռնոտեն ու մի «ե-կա» անեն, վոնց վոր քու բարեկամ Յեփրեմն ա ասում, այ են վախտը թամամ կա-զատվինք, ու «դառնու գելը իրար հետ կարածեն»:

Ունանը ելի շատ բաներ պատմեց, բայց ամենից դարձա-նալին, վոր Կիկոսի վրա շատ աղդեց, այն եր, վոր Ունանը նկա-րագրեց մի նոր տեսակի մարդկանց վորոնց «չեկա» ելին ասում, թե ինչպես նրանք ամեն բանի տեղ գիտեն, ամեն մար-դու ծնված որից մինչև մահվան որը կատարած գործերը գրած ձեռներն ունեն, և վոր նրանց ձեռից ինքը արեւելութ սատանան ել չի կարող ազատվել:

— Յանի հիմի...—ըմամ հարցրեց Կիկոսը. — ես տանը վոր մենք զրից ենք անում, նրանք տեղեկութիւն ունեն...

— Հա, բա... Ով գիդա հիմի ևս տան կտերը, կամ դռանը կանգնած մի «չեկա» մեզ ահանջ կախած լսում ա, թե ինչ ենք խոսում.— վստահ պնդեց Ունանը:

— Հիմի քու ասելով են որը չես վոր հանգումը իմ եշի հետ զրից արի, նրանք տեղեկութիւն ունեն, ելի...

— Ունեն, բա, ունեն, քամին ել ա նրանց խաբար տա-
նում...

Յեմ Ունանը հրաշքներ պատմեց «չեկայի» մարդկանց մա-
սին, ել ավելի սարսափեցնելով Կիկոսին, վորի թուքուժուքը
ցամաքել էր, լեզին ջուր դառել:

Ես խոսակցության միջոցին եր, յերբ ներս մտաւ յաչեյկա
Դավիթը ու հայտնեց, վոր սուղչա Գալուստին ու «ե-ես» Յեփ-
քեմին տարել են «կեզրոն» ու իրանց պես կոնտրիկներէի ու մի-
քանի դաշաղ գող-ավազակների հետ «ե-ես» են անելու. ապա
Ունանին աչքով անելով ավելացրեց.

— Կիկոսին ել ուղում եյին տանեն և-ես անեն, համա մեջ
ընկանք համողեցինք, ինչ չե... բանը պրծած եր...

Կիկոսը կաշմակնահարի պես սփրթնած, դարձաւ դեպի
Դավիթը և լեզուն ծամելով, թե՛

— Դավիթ ջան, խի, դադադա չա, վոր Յեփքեմի հետ զրից անես:

— Դադադա չա, բա. ամեն կոնտրիկի հետ զրից անելը
դադադա չա: Նրանք կապ ունեն «խումբերի» հետ, ուղում են,
վոր ել յետ նրանք գան ևս գեղը, տակնուվրա անեն, կովդ գո-
մից դուս քաշեն, մորթեն, ես խալիխ տունն ու տեղը մուրա-
ռեն, կնկանդ ու աղջկանդ ձեռք մեկնեն: Դու եղ բանին համա-
ձայն ես...

— Չե...

— Չե ու չոռ, բա նրանց հետ լինչ բան ունես, — վրաբերեց
Ունանը.— գիդում չեմ, վոր նրանք ես գեղի կծոտող շներն են...

Գեղամիջում մի աղմուկ բարձրացաւ, վորն ընդհատեց Դավ-
թի և Ունանի խոսակցութիւնը, վորոնք դուրս գալով իմացան,
վոր Գարմիր բանակը կրկին քշել և խռովարարներին և ել ավելի
ամբարցրել խորհրդալին իշխանութիւնը:

Այս լուրը, վոր հենց նոր եր ստացվել, ցնծութիւն եր առաջ
բերել գյուղացիների մեջ, վորոնք այնքան վախենում ելին, թե
կարող են նոր կռիւներ առաջ գալ և կրկին քանդել իրենց տուն
ու տեղը, ապուռատը, կրկին փակել ճանապարհները և զրկել աղից,
հացից, նավթից ու կտորեղեններից:

ձիշտ և, հետու գյուղերում դեռ դիրք բռնածները չեյին վերադարձել, են կողմերը դեռ կռիվներ եյին տեղի ունենում, բայց ընդհանրապես կյանքը խաղաղ վիճակի մեջ մտավ, և գյուղացիք սկսեցին սարքուկարդ անել մոտալուտ դարնան վար ու ցանքի համար:

XIII

Մի տարի լին անցել այն որից, ինչ խորհրդային իշխանութունը գլուղ եր մտել և գյուղացիների «հացն ու ջուրը հալալել», ինչպես իրենք եյին ասում:

Աշխատանքի ու վերաշինության մի տարերային շարժում եր սկսվել: Դյուղը վերածնվում, վերանորոգվում, կազդուրվում եր: Քաղաքն իր հերթին ուժեղ կապ եր պահպանում գլուղի հետ, աջակցում նրան իր հասարակական ու կուլտուրական շինարարության ասպարեղներում: Բացվել եր խրճիթ-ընթերցարան, մի բան, վոր միտնգամայն նորութուն եր գլուղի համար: Այստեղ հավաքվում եյին գլուղացիք աշխարհիս նորութուններն իմանալու, լրագիր ու դիրք կարդալու:

Խորհրդայնացման առաջին տարեդարձի որը գլուղում հանդիսաւոր կերպով բացվեց գլուղի կոոպերատիվ խանութը, և հիմք դրվեց գլուղի բաղանիքին. խոսում եյին նաև ամբողջ շրջանի կենտրոնում ելեկտրական կայան հիմնելու մասին: Շրջանի կենտրոնում արդեն բացվել եր շրջանային հիվանդանոցը, վորից շատ դոճ եյին գլուղացիք, վոր իրենց հիվանդներին ալլես մեծ տանջանքներով ու ծախսերով հետու քաղաքները չեն տանելու:

Մի հարց կար միայն, վորը դեռևս մնում եր հին ձևով. դա հողարածանման հարցն եր, վոր դարնան գիմաց առաջ յեկավ: Դյուղացիք պահանջում եյին, վոր հողերը «շնչի» արվեն, յեկեղեցուն պատկանող հողն անցնի գյուղացին, իսկ նախկին աղալարներին, զորքաների ու աչսպես կոչված գլուղի «համիա—իշխան» մարդկանց հողերն ել առնվեն տրվեն խեղճ ու անհող գլուղացիներին: Այս վերջին պահանջն ավելի հրամայական ու խիստ կերպով եր դրվում մանավանդ այն պատճառով, վոր գլուղի նախկին տերերը որենքի ուժով գավթել եյին ամենաբերրի ու ջրովի հողերը, ու են ժամանակ, յերը գլուղը գալարվում եր սովի ճանկերում, յերաշտի բաժին անելով իր արտերը, գլուղի տեր-տերից սկսած մինչև «համիան» ամբարները ցորենով լիքը ծա-

խում ելին սրա-նրա վրա, կամ խեղճ գլուղացուն «փոխ» ելին տալիս մեկին յերկու չետ ստանալու պայմանով:

Գլուղի նորաստեղծ հողալին հանձնաժողովի գլխումին կենտրոնից պատասխանել ելին, թե առաջժ ընդհանուր հողաշինարարութիւն չի կարելի անել, բայց իրավունք և տրվում տեղական ներքին հողարաժանում կատարել:

Գլուղն իրարանցում ընկալւոյ նախկին բեզերից մնացած թափթփուկները, զորքաները, նախկին քյոխվանները, սրանց գործակից գլուղական դատավորները, դեռևս ցարական ժամանակից մնացած խունացած մունդիրները հագին նախկին ստրաժնիկներն ու սրանց պես ելի միքանի հոգի աղմուկ-աղաղակ ելին բարձրացրել այդ «ապորինի» վորոշման դեմ և ձայնները գլուխները պցած՝ գոռում-գոչում ելին, թե իրենք կմեռնեն ու իրենց «ապական հողը» ձեռներից չեն տալ: Բայց շուտով սրանց ձայները կտրեցին: Սրանցից շատերն արդէն ձայնադուրկ ելին, մնացածներին ել միացրին, ձայնադուրկ արին և անցան ներքին հողաշինարարական աշխատանքներին:

Կիկոսն այս ամենի մասին լսում եր միայն իր կնոջից, յերբ իրիկունները հանդից տուն եր գալիս: Թաղապետը պատմում եր ու տնիծում անցալ, թագավորից սկսած մինչև քյոխվա Մարիւնդն ու տերտերը, վորոնք խեղճ ու կրակ գլուղացիների հողերը դալթել, նրանց ճորտ ելին շինել:

Կիկոսի կին Թաղապետը մի տարում ենպես եր հեղափոխվել, վոր ել ճանաչել չեր լինում: Նա հակառակ Կիկոսի կամքի, մտել եր կինբաժին, այնուհետև իր «պառավ հալովը», ինչպես Կիկոսն եր ասում, տանը նստելու տեղ՝ մտել եր լիկկալան, դրագիտութիւն սովորել ու եղ դեռ բավական չի, հիմի չեւ ինչ-վոր լրագիր եր ստանում, ինչպես ինքն եր ասում — «կնանոնց կաղեթը», վորի համար Կիկոսը շատ եր բարկացել, թի կնիկը ծախսերի նոր դուռ ա բաց արել, նամանավանդ, վոր Կիկոսը չի հավատում, թե կնկա կաղեթը մի ըանի նման կլինի:

«Կնիկն ինչ ա, թե իրան դրած կաղեթն ինչ ըլի», ասում եր Կիկոսը, գլուխը թափահարում, բայց շատ ել չեր ուզում խառնվի կնկա գործերին, վորովհետև մի անգամ չաչեչկեն կանչել եր նրան ու սաստել, վոր Թաղապետի արարքների մասին Կիկոսը ձայն-ծաղտուն չհանի:

Մի իրիկուն ել, յերբ Կիկոսը տուն յեկավ, կինը շատ ուրախ, դրեթե թրվուալով գիմացն ելավ ու աչքալույս տվեց:

— Ա՛յ տղա, վոր իմանաս թե ինչ ա պատահել, կասես, վոր ծափ տամ ու պար գաս.— Ղիմեց թաղաղյուն ու քիչ եր փնտմ փաթաթվի մարդի վզովը. մի բան, վոր իսկի չեր պատահել Կիկոսի կյանքում:

— Ի՞նչ ա, ս ինիկ. աղջկանդ համար խնամախոս ա յիկե՛ր, վոր քահնց ծուլ-ծուլ ես ըլժամ, թե՛ կովը ծնել ա...

— Ձե, չե, արեդ ապրի, ջրովի հող են տվել մեզ, ջրովի հող... բաղ ու բոստան պտեմ քցիլ Խաչի տակի հողումը:

— Ի՞նչ Խաչի տակի հող...

— Ա՛յ, Սուժրաթովանց Վանո-բեգի ջրովի տափը մեզ են տվել:

— Սուժրաթովանց հողը...— ծոր տվեց Կիկոսը:

— Հա՛, Սուժրաթովանց, են մի որսավար լեն ու բոլ ջրովի հողը:

— Ո՞վ ա տվել:

— Գեղականը: Յաչեյկեն, հողկումը...

— Բա են խալխի հողը ձեռներից առել մեզ են տվել...

— Հա Էլի, հա. նոր ես քառացե՛ր, լավ չես իմանում ինչ եմ ասում...

Կիկոսը թերահավատությամբ դուռը բացաւ արար շարժեց և դառնալով կնկանը, թե՛

— Քոմագ արա ես իշի բեռը վեր ունենք, իշի բեռը: Հող չե մի պզգեր. խի, Վանո-բեգը մեռել մ, թե նրա ժառանգն աշխարհի չերեւից կտրվել ա, վոր հողը Կիկոսը վարի. եդ ըլելու բան մ, վոր ասում ես... Շաշ խելքիդ ձուն գա, քեդ խարել են, տնագ կն արել:

Թաղաղյունը, վորի ուրախությունն անսպասելի կերպով դաշրույթի չեր փոխվել մարդու տարրինակ վերաբերմունքից, բարկացած հրեց Կիկոսին ու դեպի տուն չեա դառնալով՝ փրնթալին թաց:

— Յես ել կասեմ մարդ ունե՛մ... Քու մերը վոր քո տեղ մի թի չեր ծնել, հու դոմն ելա քերելու պետք կգար...

Կիկոսը վոչինչ չպատասխանեց. նա իշի բեռն իջեցրեց, մեջքը տրեքեց տեղավորեց ու փեշերը թափ տալով տուն մտավ:

Թաղաղյունը կիս խուով, կիս նեղացած հաց դրեց նրա առաջ, բալց ավելի լավ կլիներ, չեթի հացի տեղ թուլն դներ, վորովհետեւ նա Կիկոսի գլխին հացը հարամ արավ, ենքան անիծեց, թուք ու մուր տվեց:

Կիկոսը համբերեց, համբերեց ու մեկ էլ հանկարծ գոռաց կնկա վրա.

— Մի ինձ ասա տենամ, քոն Թեանի աղջիկ, ես տան տե-
րը լես եմ թե չե...

— Քեզ պես տան տերը վոր լերեկ մեռել էր, հսոր զերկու-
որ կըլեր...

— Ա՛ կնիկ, դժվիւ եմ, թե կողքերդ քոր են գալի, վեր կե-
նամ հրես տրորեմ: Ի՛նչ ա, ուզում ես եսքան տարվա պահած
գլուխս թակել տան. լես հիւ եմ, վոր Վանո-բեգի հողը վարեմ.
կոկոշդ դարդակ ա, թե մեջը խելքից-զագից կա...

— Դո՛ւ չես վարիլ, յես կվարեմ. ինձ տենում եմ, ա՛յ, լես
կվարեմ, ու Վանո-բեգի աչքն էլ քոնի հետ կհանեմ ու կվարեմ...

— Հա հիւ, կվարես ու եդ հարամ տափից դուս եկած
հացն էլ կուտես. յա Սոււմրաթովհնք կթողան, վոր դու ընդեղից
հավի կուտ ելա բերես:

— Ի՛նչ կտենաս կանեմ թե չե. թող անումս Թաղապետը
չըլի, թե վոր ես աշունք լես են տափի վրա իմ շինած բաղնիքը
քյալամ ու խիար չի թթու դնեմ...

— Յիս եդ բանին համոզ չեմ ու հրես կգնամ իրան, Վա-
նո-բեգին էլ կասեմ, վոր յես համոզ չեմ:

— Դե թող քու վտար Վանո-բեգի շեմքը կոխի ու տես, թե
գլուխդ քանի տեղից եմ կտրում: Յես սաղ մի շաբաթ հալիչ
գամ, վոր են հողը մեզ տան, դու գնաս ասես՝ «համոզ չեմ»...
Թե եգուց լես քեզ բռնել չտամ, դալեն գցեմ, քու կոնտրիկ գը-
լուխը դալումը փթացնել չտամ, թող շանից ծնված տանն ինձ:

Կիկոսը տեսավ, վոր կինը շատ ե գայրացած, բարվոք հա-
մարեց լուլ, մինչև փոթորիկն անցնի, ինքն էլ մի լավ միտք
տնի եդ բանի մասին ու մի վորոշ յեզրակացության դա: Նա
տեղից վեր կացավ ու ճրագն առավ, թե դուրս դնա: Կինը կառ-
կածիլով, թե Կիկոսը կարող ե հիմարաբար գնալ Սոււմրաթո-
վենց տուն, լետևից ձայն տվեց.

— Ա՛ տղա, եդ թւր ես կորչում...

— Հը՛հ...— քմծիծաղ տվեց Կիկոսը, վորից դեմքն ավելի
այլանդակվեց.— հենց ես գիդում Վանո-բեգի կուշան եմ գնում...
Հրեդ ըտենց կվախացնեմ հա... Բա ինձ խկի մարդատեղ չես
դնում... Բա ասում ես՝ ինձանից վախում չես: Տղամարդ ասածդ
ուրիշ բան ա, նրա հետ բաս մտնել չի ըլիլ... Գնում եմ իշխս
միքիչ խոտից-զատից տամ ուտի, խեղճ հավանին հսոր շատ
եմ բն ու բարձեք արել...

— Այ՛ հշ եր դառել քու բերողը, վոր մարդու կերպարանքով չեկեր ծնովել հմ... —

— Մ'հ, ա կնիկ. ինչ ուզում ես տա, վոր սաղ աշխարհն ել շուռ դա, ելի փափախն իմ գլխին ա, լաչակը քո, ելի ամեն մարդ ասիլ պտի—ես կնիկը Կիկոսինն ա, ես երեսնն Կիկոսինն ա... Բա՛ս... վճնց դիզես դու Կիկոսին... —

Կիկոսն առաջվա պես ելի իրան բանին եր. եշն առաջ տրած հանդն եր զնում, խոտհարքի քարերը մաքրում, վոր ամառը խոտ հնձելիս գերանդին քարին չկպչի: Կամ բահով հող եր փորփորում, վոր լորի ցանելու համար փափուկ տեղ ունենա, չերը մի իրիկուն ել տուն վերադառնալիս, նրա առաջը կտրեց Սուվբաթովանց Վանո-բեգի տղեն ու դաչրացած հարձակվեց վրան:

— Կիկոս ես, ինչ զահրումար ես... Յես քու գլխին փափախ դնողի հոր քյալենն շներին տամ, խի՞ չես կնգանդ կապը քաշում, —ասաց նա: —

Կիկոսը շշկլված կանգ առավ ճամպի միջին ու փնթփնթաց.

— Թո՛ղը՛շ, թո՛ղը՛շ, ա տերամեռ, մի կանգ առ, տենամ ես ադա մարդն ինչ ա ասում է՛:

— Ջոռ ու ցավ, ասածու կրակ տ ասում. եշը դու չես թե դա, ա հայվան. քեզ ասում եմ կնգանդ կապը քաշի, թե չե կըտամ մի աչքն ել չես կհոնեմ... —

— Կնիկը՛ս... —ծոր տվեց Կիկոսը:

— Կնիկդ, հա, կնիկդ, քոռ Թազագյուլը:

— Ի՛նչ ա արել կնիկս:

— Դու չել միթամ բանից բեխաբար ես ելի, եշը դու չես, ինձ ես իշի տեղ դնում... Հրես վոր գլուխդ տապակ անեմ, ես վախտը կիմտնաս կնիկն ու մարդը: Կնիկդ ես ա արել, վոր իբան ախպոր հետ միատեղ գնացել ա իմ Պաչի տակի հողը, իմ պապական ժառանգությունը վարել ու հիմի չել ուզում ա ցանի:

— Վճնց թե վարել ա. ում հողն ա վարել. բա եդ դադի անորեն բան կըլլի. խի, դու մեռած ես, վոր նա իր կնիկ տեղովը քո հողը վարի... Յես բանից բեխաբար եմ: Համ ել.. տղամարդ մարդ եմ, կնգա գործերին չեմ խառնվում. վարողը հու չես չեմ, չես քանի գլուխ ունեմ, վոր Սուվբաթովանց Վանո-բեգի հողին ձեռք տամ, յա քամի դառնամ նրա կողքովն անց կենամ: Թո՛շ, թո՛շ .. —

Ու իշին բզեխով Կիկոսը ճամպեն շարունակեց:

— Կիկոս, հհհ Կիկոս, լավ միտդ պահի ես որը. թե վոր կնգանդ կապը ձեռդ չհամաքես, մի որ թե ոջադդ արին չկապեմ, թող ինձ Վանո-բեդի տղա Խուրշուդ չտահն աւ սև շուն կանչեն չհտեիցս:

Կիկոսը գլուխը կախ, վրտները քարշ տալով, ճամպի քարի ու ցիխի հետ կռիվ տալով հազիվ տուն հասավ, իրեն-իրեն շարունակ փնթփնթալով:

— Համա թե կտաղած եր Խուրշուդ-բեդը հա... լավ վոր գլուխս չթակեց, ես պահած, պաշտած գլուխս... Խալխն ի՞նչ կտաներ, թե Կիկոսը գլուխը պահեց-պահեց ու վիրջը կնգա արարքի համար թակել տվեց...

Ես մտքերի մեջ Կիկոսը տուն հասավ:

— Թագադուլ, ալ աղջի, Թագադուլ... աղջի մի դուրս ա-րի, ճրագը դեսը պահի, իշիս բեռը վեր ունեմ...

Բայց տանից դուրս յեկող չկար:

— Թագադուլ, աղջի, քեզ չեմ ասում, ա քառ քառի աղ-ջիկ...

Ձայն չկար:

Կիկոսը մի կերպ իշի բեռը վերցրեց, տուն մտավ, վոր կըն-կանը մի լավ պատիվ անի, բայց տանը մարդ չկար: Կրակի անթեղը քանդեց, փչեց պեծիրին, ճրագը վռեց ու սկսեց քունջ ու պուճախը ման գալ:

— Ես ասենք թե ինքը տանը չի, բա ես լակոտնի՞ն ուր են կորել...— փնթփնթացաւ: Ասլա դուրս գալով եշը դռնի արավ, մեջքը արորեց, խոտից-բանից առաջը դցեց ու կրկին վերադար-ձալ տուն:

Կիկոսը կըակ արավ, տրեխները հանեց, գուլպաները ոջա-խի քարի վրա փռեց, վոր ցամաքեն, տրեխների ցիխը մաքրեց, քանդված կղերը կապ դցեց, կարկատեց. սուտ-սուտ մլուկ արավ, վոր քունը չտանի. միտք արավ Խուրշուդ-բեդի ասածների վրա, ու հենց եդ մտքի ծոֆն ընկած ել քունը տարավ, քնեց:

Կիկոսը շատ եր քնել թե քիչ, մին ել են խմացավ, վոր Թա-ղադուլը, աղեն ու աղջիկն աղմուկով տուն մտան: Կիկոսն աչ-քերը արորելով վրա նստեց ու հորանջելով դարձավ կնոջը.

— Եդ ճւր եք կորել սաղ տնով-տեղով:

— Դեզ ինչ. — պատասխանեց¹ Թաղադուլը:

— Վճնց թե... Յես ես տան տերն եմ թե չե...

— Տան չե, դու մի իշի տեղ ես, իշի...

— Տեր մեղա... — փնթփնթաց կիկոսը, — դու ինձ համբերու-
թյուն տա: Ասելու յեւ թե չե... լակրտներդ առած կեսզներին
վիճրտեղ ես ման գալիս, նամուսս վրտիդ տակն տռած. բա հե-
րիք չի՞...

— Ժողով կար, սրանք գնացել ելին կոնցոմոլի ժողով, յես
եւ Մոպր եմ դառել:

— Ինչ ես դառել...

— Միթամ վոր ասեմ, բեկինդ կմտնի... Մոպր եմ գառել,
Մոպր. — պատասխանեց Թաղադյուն ու սկսեց անկողինները
փռել:

— Ե՞դ ել ինչ նոր բան ա...

— Հրես վոր Սուժրաթովանց մեզ տված հողի կեսը սաղ
գեղով վարենք ու ցանենք, ինչ ել վոր հնձենք ու ծախենք,
փողն ել դարկեն Եվրոպիա, ենտեղի բալլեիկ ու մեկել հեղափո-
խական դուստրներ^{*)} համար, են վախտը կհասկանաս Մոպրի
դորությունը:

Կիկոսը միտք արավ, միտք, ու բան չհասկանալով՝ յեղրա-
կացրեց.

— Ասա, սատանական կոռծի վրա յեք ելի... Ձեռք պտես
քաշիլ եղ հողիցն ու եղ դալդի սատանական կոռծերից, թե չի...
Սուժրաթովանց Վանո-րեզի տղեն հենց կատաղած էր, վոր քիչ
ֆեաց ճամպին գլուխս տասը տեղից ճղեր: Ասում ա — «կնգանդ
կսպը քաշի, թե չե տուն ու տեղդ կվառեմ, մոխիրը քամուն կը-
տամ»:

— Հոդս նրա գլխին կենա. թող միքիչ ել՝ սաբսաղ-մար-
սաղ դուրս տա, տես թե գլուխը վորտեղ եմ փթացնիլ տալիս:
Նրանց դովրանը ջուրն ընկավ, ջուրը. — պատասխանեց Թաղա-
դյունը հպարտ ու վճռական:

— Ե՛... կնիկ. աստոծդ ել ես ուրացել, մարդուդ ել. քեզ
հետ չես լինչ զրից անեմ. քոռ բախտս թարսվել ա... Կնիկն ել
վոր ժողով գնա, հող խլի, ուրիշի ապրուստը խլի, սրա-նրա
վրա լիզու բանացնի. ել են աշխարհումը դուդ բան կըլի՞... — հա-
ռաչեց Կիկոսն ու քուն մտավ իրեն իրեն փնթփնթալով — բալքի
լալի ես ա՜...

Լուսը բացվելուն պես Կիկոսը մի հաց փեշումը դրեց ու
կնկանն առանց մի բան ասելու դոմը մտավ, եղը չուլեց ու ճամ-

^{*)} Դուստդ — բռնակոր, բանտարկյալ. յերբեմն ժողովուրդը գործ ե տծում
նաե գերի իմաստով:

պա ընկալ զեպի հանգը: Գլուղից նոր եր դուրս չեկել ու ճամպեն ծռել, յերբ նկատեց «սա պահեսցե» ջինդար Սողոմոնին, վորը ձեռնափայտին հենվելով կաղ վոտը քարշ տալով գնում եր:

Կիկոսը զիշերվա գեպքը հիշելով, իրան-իրան փնթփնթում եր, յերբ հասավ ջինդար Սողոմոնին:

— Բարի լուս քեզ, չեղբայր Կիրակոս, սա պահեսցե,—ասաց ջինդարը,—ո՛ւր ես գնում եսպես վաղ, սա պահեսցե, առաջ բարի:

— Աստծու բարին, տիրացու ջան,—պատասխանեց Կիկոսը:—Կնիկը կըլի տան սարքուկարդ անող, գզող ու մանող, թխող ու կարկատող. կնիկն ի՛նչ, գեղամեջն ի՛նչ. գեղականի կոռծին խառնվին ի՛նչ, ժողով անելն ու հողեր խելն ի՛նչ...—Իրեն-իրեն մտքի թելը շարունակելով փնթփնթաց Կիկոսը:

— Ի՛նչ ե պատահել, չեղբայր Կիրակոս, ի՛նչ ես դանդաղվում, սա պահեսցե, կնիկդ ի՛նչ ե արել... Եղդ կանգնացրու, մի վրեն նստեմ, հոգու վարձք ա, վոտս շատ ե նեղացնում ինձ, սա պահեսցե, համ ել պատմի տեսնեմ՝ եղ ո՞վ ա քեզ բեղամաղ արել:

— Թո՛ղը, թո՛ղը, տիրացու ջան, մըրի, մըրի նստի ու սուրբ անգաճդ բաց արա. պատմեմ...

Ջինդար Սողոմոնը նստեց Կիկոսի իշին, իսկ Կիկոսն ել իշի կողքն ընկած, պատմեց ջինդար Սողոմոնին, թե ինչպես իր կին Թազագյուլը տուն ու տեղը յերեսն իվար դցած՝ այժմ շարունակ ինչ-վոր ժողովների յետից ե ընկել, թե ինչպես իր ասիին ու աղջկանն ել խելքից հանել, կոճցոճոճ ե շինել, թե ինչպես ուրացել ե ժամ ու պատարագ, խաչ ու սուրբ, իր հալալ աշխատանքը թողած, Սուճբաթովանց վանո-րեպի հոգն ե դավթել, ու եսպես շատ բաներ:

— Մեղա... մեղա քեզ, տե՛ր... սա պահեսցե,—գոչեց ջինդար Սողոմոնը մերուքը շփելով:—Ո՛վ դու գիվահալած նարեկացի, ո՞վ դու չարքեր կապող Կիպրիանոս... սա պահեսցե, չեղբայր Կիրակոս, աստված փախել ե գլուղից, սատանան բուն ե դրել անհավատների սրտում, պատվական կնիկդ, Թազագյուլը գիվահար ե դարձել, սատանայի ճանտպարհով ե գնում, սա պահեսցե, գեհն-նի գո՛հ ե դառնալու, հոգին այրվելու յե սանդախմետի կրակում...

— Տիրացու ջան, մի ճար, մի հնար արա, տունս քանդվում ա, ոջախս մուռտառվում,—սարսափած գոչեց Կիկոսը.—չես ել եմ սատանական կոռծ գիդում եդ ամեն բանը. Թազագյուլս սատաներոց ա ըլել, տունս դառել ա սատանի բուն...

— Մավուզ, Մավուզ... — գոչեց վոգեորված ջինդարը, — սա պահեսցե, յեղրալը կիրակոս, գիր կանեմ, գիրկապ կանեմ, չարքերը կեղաշխանդեմ, գեղարդը կնկարեմ, Մավուզը դարձի կդա...

Կիկոսը թեև չէր հասկանում, թե ում մասին և խոսում ջինդարը, ինչ Մավուզ և, վորի մասին նա առաջին անգամն և լըսում, բայց հաստատ վճռեց իր մեջ, վոր իրոք կինը գիվահար, ախահար և դարձել, և խնդրեց ջինդարին, վոր գիր անի:

— Յես քու վոտի տակի հոգն եմ, տիրացու ջան, սոսա, թնչ անեմ, վոր Թաղադուլս ելի տուն նստի, ձեռք քաշի գեղամիջից, կինբաժնից ու Սուլթանիվանց հողից:

— Սա պահեսցե, — ասաց ջինդարը, — մի տարուց ավել և մատաղ չես մորթել, աստված վրեժ և լուծում, պատիժը կնդանդ ու յերեխաներիդ գլխին թափելով. մի մատաղ կխոստանաս, վոր վարդավառին, աստվածածնա տոնի որը, Խաչի տակին մորթես:

— Դժբուլ եմ, դժբուլ եմ, տիրացու ջան, նոր ծնած հորթս խաչին զուրբան...

— Սա պահեսցե, — շարունակեց ջինդարը, — Հիսուսն ել ախես նստած եր ինձ պես ավանակի վրա, յերբ մտավ Յերուսաղեմ ու հանդիպեց քեզ պես մի հավատացալի, վորին Զաքեոս եյին ասում: Սա պահեսցե, ո՛վ դու կիրակոս — Զաքեոս, մատաղդ թող հաստատ լինի: Հիմի քեզ խիստ պատվեր տամ. Թաղադուլի հետ չկուլես, հետը հանդիստ կխոսես, վորպեսդի սատանան ել ավելի չկատաղի, մինչև չես գիր կանեմ, կվերջացնեմ. իրիկունը Թաղադուլի մազերից մեկը կպոկես ծածուկ, վոր չիմանա. քնած ժամանակ պոկի. կրեբես յերկու հավ, մեկը սև, մյուսը սիպտակ, սև հավը կմորթենք, նրա արյունը կխառնենք զափոռանքի ու Թաղադուլի մազի հետ, սպիտակ հավի հրեշտակային անմեղ փետուրներից մեկը կպոկենք, գրիչ կշինենք և գիր կանեմ, սա պահեսցե, դու չե՛լ կտանես, ծածուկ կկարես վրան, և վողորմությամբն աստծո, ամեն ինչ կվերջանա...

Հասել եյին ջինդարի այգուն: Զինդարն իջավ իշից, մտավ իր այգին, իսկ Կիկոսը ճամպին շարունակեց, մտքում որհնելով բախտավոր ժամը, վոր հանդիպեց ջինդար Սողոմոնին:

Մինչև իրիկուն Կիկոսը հոգու անհուն բերկրությամբ ծրագիր եր կազմում, թե ինչպես պետք և մազը պոկի, վոր հաջի և բռնելու, վոր ջինդարին դուր գա, և աղոթքը կարուկ լինի: Նա այնքան եր տարվել հրաշագործ ջինդարի անելիք «գրի» զորությունով, վոր հաճախ գործը կիսաս թողած ձեռները վեր-վեր

եր բարձրացնում, քթի տակ պարի չեղանակով զննացնում և մինչև անգամ փորձ անում պարելու, կամ հանկարծ վազում եր իշի մոտ, նրա պուլսը գրկում, համբուրում, պտտում իր ապագա յերջանկության մասին...

Պապարը կամաց-կամաց իջնում եր դուռի վրա, չեր կոսը տուն հասավ. բայց դեռ իշի բեռը չեր քանդել, չերը թաղադուլը կատաղած վրան հարձակվեց.

— Ա՛ տղա, քեզ ասում չեմ ձեռ քաշի եղ կոնսերվ շնորհքը... Խնչ ես առավոտս են սատանաների պապին, են ջինդար Սողոմոնին առք-փառք իշիդ վրա բաղձացրել, հը... Խնչ եք չերկար-բարակ զրից արել, մի պատմի...

Կիկոսը շվարած կանգնել եր իշի կողքին, մոռվը կախ, ու չեր կարողանում հասկանալ, թե ո՛վ և տեսել, ո՛վ և կնգանը լուր տվել. չի՞ վոր ճամպին վոչվոք չի պատահել, վոչ մի մարդ չի տեսել: «Հալբաթ ես աշխարհում ծածուկ բան չի մնում, ելի» միտք եր անում Կիկոսը, չերը թաղադուլն ավելի բարկացած ու կրակ կտրած գոչեց.

— Ուզում ես կաշիդ մաշկել տամ, դիտվե հանեմ... «Ե-ես» Յեփրեմի նաղլը մտիցդ ընկել ա, թե՞ կարոտը քաշում ես: Հողեմ գլուխդ, չաչեկեն ու լավ-լավ տեղերն ու մարդիկ թողած, կոնսերվկոնսերի հետ ես մասլահաթ անո՞ւմ... լավ բաներ կսովորես նրբանցից... «Սա սահեսցի, յեղբայր Կիրակոս, խաչ գնա, մատաղ մորթի, խունկ ու մոմ վառի, սա պահեսցի» չասեց ջինդարը.— տնադ արավ թաղադուլը:

Կիկոսը, վոր ջինդար Սողոմոնի պատվերի համաձայն վորոշել եր կնոջ հետ չկուլել, իշի բեռը կամաց-կամաց քանդելով քթի տակ փնթփնթաց.

— Յես կոխվ անելու. գլուխ չունեմ, Խնչ ա, միջիդ սատանեն նեղացել ա, վոր մի խեղճ ու կրակ պառտվ ու կաղ մարդու իշիս վրա նստացրել եմ... ես տանը յես իմ իշի վրա յել իրավունք չունեմ...

— Ի՛հ, բոլոր չափեմ, քու Կիկոս բոլը, բալքի սրտիս մի հովուխոն ըլի,— «չանչ» արավ թաղադուլն ու տուն մտավ:

Կիկոսն իր մտքում հաստատ վորոշեց, վոր իրոք կինը դեվահար ե, թե չե, ի՞նչ եր նրան իմաց տվողը, վոր ջինդարը, սատանաներին գիրկապ անող եղ պատվական մարդը Կիկոսի իշին նստել ա: «Են ա սատանեն իրան հակառակ մարդուն իշիս վրա տեսել ա, ու թաղադուլին կատաղացրել»—վճռեց Կիկոսն, ավե-

լացնելով—«հրեա հենց սատանին խռկեմ, վոր իսկի դու չիլ չի-
մանաս, թե եղ վոնց ելալ»։ Ապա ելը գոմն անելով, մոտեցալ
հովիւրի թառին, միքանի հատ բռնոտեց, մոտեցրեց գոմի դռա-
նը, դուռը միքիչ ծերպ տրալ, վոր տատղալուսով սեն ու սիպ-
տակը ջոկի։ Ուշած հովիւրը ջոկեց, վոտները կապեց, դեցեց ա-
խոռի մեջ ու մտքումն ուրախացած հանգիստ տուն մտալ։

Կիկոսի բախտը բանել եր։ Թաղադուլը գլուխը լվացել-
մաղերը սանրում եր։ Կիկոսն ուշի-ուշով հետեւում եր, թե վոր-
տեղ և պցում Թաղադուլը սանրի հետ պոկված մաղերի փունջը,
ու յերբ կրակն անթեղեցին ու քուն մտան, Կիկոսն ոջախի կող-
քին մեկնվելով մոխրի միջից հանեց մի փունջ մազ ու գող կատ-
վի պես, վոտների ծայրին հենվելով, զգուշութեամբ դուրս յեկալ
տանից։ Նա մտալ գոմը, հովիւրը դրեց թեի տակ, չուխի փեշով
ծածկեց ու քայլերն ուղղեց դեպի ջինդար Սողոմոնի տուն։

Ջինդար սողոմոնն «աղոթքի վրա չեր», չերը ներս մտալ
Կիկոսը։ Սե համն իսկուհն մորթվեց, վորի արյունը մի խեցու⁸)
մեջ հալաքեց ջինդարը, հետը խառնելով մի ինչ-վոր հեղուկ,
սպա սպիտակ հավի փետուրներից մեկը պոկելով ծայրը սրեց,
Թաղադուլի մաղերի փունջն ել դեցեց հեղուկի մեջ, խառնեց ու
մի ծալմոված թղթի կտոր ծնկանը դնելով՝ հրամայեց Կիկոսին,
վոր առաջը չոքի ու վառած մոմը ձեռին բռնած լուչս անի։

Կիկոսն ես «սուրբ արարողութունից» հուզվել, շփոթվել,
կաս-կարմիր եր դառել։ Նա չոքած տեղը քրտնել ու դուրում եր
աչքը չհեռացնելով ջինդարի բերանից, վոր ինչ-վոր անհասկա-
նալի բաներ եր մթմթում ու ծնկանը դրած թղթի վրա տա-
րորինակ դեմքեր ու պողպատե մարդկանց գլուխներ նկարում։

Ծիսակատարութունը վերջացալ։ Ջինդարը գրված թուղ-
թը չեռանկյունի ծալեց, կարեց մի փալասի մեջ ու տվեց Կիկո-
սին։

— Սա պահեսցե, յեղբայր Կիրակոս. ահա քեզ թել ու ա-
սեղ, ես գիրը կտանես ու գիշերս կկարես Թաղադուլի շորից,
աջնպես ծածուկ, վոր չիմանա, թե չե գիրն իր գորութունը կը-
կորցնի։ Սա պահեսցե, տես, մարդու բան չտես, թե չե... սա
պահեսցե, սատանաներն ավելի կկատաղեն, և դու ինքդ ել գիւմ-
հար կդառնաս։ Ահա, բռնի, հետդ տար սե հավի վոտներն ու
գլուխը, դա խաչի բաժինն ե. եզուց առավոտ հանդը գնալիս

խաչի քարի տաղին կդնես, վոր աղոթքս տեղ հասնի, խաչը բարեխոս լինի Մարիամ աստվածածնի առաջ... մատաղը չմոռանաս: Համբուրիր սուրբ ավետարանը, վոր միակ պահապանն է բոլոր հավատացալնեի:

Ջինդարը Կիկոսին դեմ արավ սե կաղմով մի փոքրիկ գիրք վորի վրա մի խաչ կար նկարած: Կիկոսը յերեսին խաչ հանեց, կոացավ, համբուրեց գիրքը, և վոր զարմանալի չեր, արտասովեց: Արտասովեց ան Կիկոսը, վորի աչքերը մինչ այդ չգիտեցին ինչ բան է արտասուքը: Կիկոսը գիրքը համբուրելուց հետո Ջինդարի ձեռներն ու փեշերն ել համբուրեց, հավի գլուխն ու վտանները դրեց գրպանը և թեթևացած սրտով դուրս յեկավ Ջինդարի տանից, կարծես կրծքից մի ջաղացաքար եր ընկել, վորը ծանրացած, ճնշում եր մինչ այդ: Իսկ սե հավը կրակի վրա դրած պղնձի մեջ քլթքլթալով յեփում եր... Ջինդարի համար:

Կիկոսը նախքան տուն մտնելն անցավ դոմը, գրպանից հանեց «գիրքը», շոշափեց ու դառնալով իշին, վորն ուրախացած քնքռատում եր, թե անըր խոտ է տալու, գլուխը շոյելով ուրախ տրամադրությամբ բացականչեց.

— Ծարը գտիլ եմ, եշ ջան, հրես ձեռիս ա, կաց մի քու գլխիցը միքիչ կախ տամ, վոր քու միջի սատանեքն ել կորչեն, թե չե մին-մին սարսաղվում ես, դուռդ ճամպեն թողած քարերն ու դռնն ընկնում...

Առավոտը Թաղադուլը ջուրը դնալիս զգաց, թե ինչպես թիկունքը հարում է մի ինչ-վոր կոշտ բան: Տուն դառնալով նա հանեց իր բաճկոնը և... ո՞ր զարմանք, մի յեռանկյունի «գիր» կարած եր մեջքին. չհասկանալով, թե բանն ինչու՞ն է, նա վազեց դեպի դոմը, վոր Կիկոսին հայտնի, բայց Կիկոսը չկար: Թաղադուլը պոկեց «գիրքը», վազեց կոմբլիջի քարտուղարի մոտ, վորը փպտալով հայտնեց, թե ինքն արդեն գիտե այդ մասին:

Մարդ ուղարկեցին Կիկոսի յետևից, վորին կես ճամպից յետ վերագործարին, իսկ Ջինդար Սողոմոնի տունը խուզարկելով տալն ու վրա արին ու ինչ վոր գրքեր կային, հավաքեցին, բերին գործկոմ: Գրքերը փաթաթեցին, վոր ուղարկեն կենտրոն, իսկ Կիկոսին ու Ջինդար Սողոմոնին դոմը գցեցին բանտարկեցին, վոր հինգ օր մնան, մինչև կիրակին դա, ու հասարակության առաջ պատմեն ամեն ինչ:

— Կնդա խաթեն վոր ասել են, թամամ ես ա, ան, տիրացու Սողոմոն.— հառաչելով ասում եր Կիկոսը.— բա հիմի բանը վիճեց պախ ըլիլ...

— Սա պահեսցե, չեղբայր Կիրակոս, չարը հետեում ե մեզ-
Վոսկյան ու Սյուքսայան նահատակներն էլ շատ տանջվել են
չարի ձեռից. սա պահեսցե... Բայց, չեղբայր Կիրակոս, մի ե նրանց
ասել, թե յես եմ գրել եղ «գիրը». նրանք թնչ գիտեն, թե յես
չեղբու հով եմ ասացել քեզանից. դու մարդու բան ասել ես...
սա պահեսցե...

— Իմ հոր արդար գերեզմանը վկա, թե յես մի իսանի յեւ
ա բան ասած ըլեմ. քու կշտիցը գնացել եմ իշխա կուշտը ու մե-
նակ նրան եմ շանց տվել եղ «գիրը». թե եշս մարդու բան ա ասել,
յես ել ընհենց: Համա... դու գիտես վոչ, թե եղ յաչեյկեքն ինչ
դալդի զաղերեհն. նրանք ամեն բան տեսնում ու լսում են. յես
թնչ գրեամ, թե հիմի ես գոմի աղբածակիցը մինը անդաճը
խլած մեզ լսում չի... լաֆն են ա աազ անենք, տեսանք ինչով
ա վերջանում. թե վոր ես մի հետն ել գլուխս թակելուց աղատեմ,
թեկուզ տասը տարի յեւ դալա քաշեմ, վեջս չի. մինակ թե
դլուխս, եսքան տարվա պահած գլուխս թակել չտամ...

— Սա պահեսցե, չեղբայր Կիրակոս, խորհրդային իշխանու-
թյան ժամանակ մարդ չեն թակում, սա պահեսցե... չեն թա-
կում, բայց... սպանում են, գլուխախորով անում... քեզ կազատեն
իսկ ինձ... սա պահեսցե...

— Նհ, եհ...—հառաչեց Կիկոսն ու գլուխը դնելով ախոռի
փայտին, կես քնի մեջ փնթփնթաց. — Բալքի լաֆն ես ա...

Հինգ որը հինգ տարու չափ դանդաղ անցավ:

Կիրակի յեր: Վոզջ գլուղը հավաքվել եր Մինասի կալը:
Կենտրոնից մարդ եր յեկել: Գլուղացիք հետաքրքրվում եյին և
զարմանում, թե ինչու յե կառավարութունը և կոմբլիջն այդ-
բան մեծ նշանակութուն տալի եղ չնչին, հասարակ, աննշան,
«վոչինչ կռոժին»:

Յուցադրական դատ եր: Կինը, Թադագլուղը վկա չեր կան-
գնած իր ամուսնու—Կիկոսի դեմ: Պառալները մաղ եյին փետում
ալս սարսափելի, չտեսնված բանի համար, վոր կնիկն ուղում և
իրեն մաղդուն պատժեն:

Պոսեց կենտրոնից յեկածը, խոսեցին կոմբլիջի անդամներից
միքանիսը, կոմիսրիտները կրակված ճառեր եյին ասում սրբերի
ու սատանաների մասին, իսկ վոր զարմանալի թվաց ամենքին,
դա աչն եր, վոր ամբողջ պատմութունը մանրամասնորեն գրված
եր լրագրում:

Յուցադրական դատը փերջացավ նրանով, վոր ջինդար

Սողոմոնին յերեք, իսկ Կիկոսին մեկ տարով պայմանական բան-տարկութեան դատաւարութեցին: Դատաւճիռը հայտնելիս Կիկոսը լուռ լսում էր, բայց բան չէր հասկանում: Նրա գլուխը թմրել էր բազմաթիվ ճառերից ու աղմուկից: Յերբ կենտրոնից չեկած ընկերը դատաւճիռը հայտարարեց, զգալով, վոր Կիկոսը վճաի միտքը չի հասկանում, հարց տվեց.

— Վճիռը հասկացա՞ք, քաղաքացի Կիրակոս:

— Հը՞...—քնից սթափվածի պես հարց տվեց Կիկոսն ու գլուխը թափահարեց:

— Վճիռը, վճիռը, դատարանի վորոշումը ձեր գործի մասին հասկացա՞ք...—կրկնեց կենտրոնի ընկերը:

— Հը՛-ը՛... հասկացա վոչ, բախշի, ինչ պատիժ տալիս եք տվեք, մենակ թակեք վոչ: Մին ե՛լ... ինձ մի լավ պացահայտ ասեցեք (բացատրեցեք), թե ձեր որենքն ի՞նչ բան ա զաղաղտ անում (արգելում), ինձ, վոր յես ել զալաթ չանեմ, սխալմունքի մեջ ընկնեմ ու զալա քաշեմ, ինքն ել մեր լիզվով ասեցեք, զրափառը հսկանքմ չեմ:

«Յաչեցկա Դավիթը» խոսք վերցնելով՝ դարձավ Կիկոսին, թե՛

— Առաջինը, վոր կասեմ քեզ, Կիկոս, եդ են ա, վոր դու կոնտրիկնների հետ շատ ես զրից անում: Մի անգամ «ե-ես» Յեփրեմի հետ քեզ բռնեցինք ու բախշեցինք, հու դիտես, թե ինչ ելավ «ե-եսը»: Հիմի չել կնիկդ Կինբաթնի ու ՄՈՊԻ-ի մեջ գործ ա կատարում, գրիլ-կարդալ ա սովորել, լիսավորվել, կաղեթ ա կարդում, դու հակառակ ես, ու կնկանդ դիվահար ու աչահար հաշվելով՝ պնացել ես ջինգար Սողոմոնին «գիւր» անել տվել ու կնկանդ վրա ծածուկ կարել, ես ել երկու: Հիմի վճռեցին, վոր մի տարի զալա քաշես, բայց վորովհետև հաշիվ արին ու տեսան, վոր ես բաները դու առանց հասկանալու յես անում, չյունքի սովետական իշխանութեան ղաղկոնները պիտում չես, զրա համար ել քեզ ապատում են, վոր քու բանին կենաս, բայց յորբ վոր մին ել եդ տեսակ բանի մեջ բռնվես, են վախառ քեզ ուրիշ պատիժ ել կտան, ես մի տարին ել վրեն կավելացնեն, թե չե հու քեզ լավ կպահես, են ա աղաւթ քու ցավին կկենաս, քու տանն ու քու գործին: Հիմի հասկացա՞ր. .

— Հա, քե մատաղ, լավ բեյինս մտավ, ել յես ըլեմ յես, մի մարդու հետ ելա զրից անեմ... Թե վոր մին-մին իշխա հետ զրից եմ անում, են ել կկտրեմ, թե վոր ասեք՝ եշս ելա կոնտրիկ: Թե վոր Կիկոսին ել խոսալիս տեսաք, թող ես մին, են ել երկու ըլի...

Դատը վերջացած եւր։ Մարդիկ աղմկելով ցրվում եյին դեպի իրենց տները, վորոնցից շատերը մոտենում եյին Կիկոսի քեֆը հարցնելու կամ իմանալու դեպքի բոլոր մանրամասնութունները, բայց Կիկոսը—հաստատ իր խոսքին,—վոչվոքի հետ չեր խոսում ու չեր ել ուզում լսել։

Թաղադէուլը խտտեց սպիտակ հավը, վորը դատարան եր բերված վորպես իրական ապացույց, իսկ սև հավի վոտներն ու գլուխը, վոր գտել եյին Կիկոսի գրպանում և դրել սեղանի վրա, վերջրեց ու շարտեց ջինգար Սողոմոնի դեմքին—դռնելով.

— Հոդս քու սատանա գլխին կենա, փափուկ միսը դու չես կերել ու ես վոսկոռնին խաչի համար ղարկել... տար ես ել լափի, վոր գրածդ դիրը ել կտրուկ ըլի ..

Ծաղրված ու անպատված ջինգարը գլուխը կախ, կաղ վոտը քարշ տալով գնաց դեպի իր տուն, իսկ Թաղադէուլը մոտենալով շմած Կիկոսին, հրեց դեպի տուն։

— Կճրի, տո՛ւն կորի, ա նամուսդ տափը մտած, սաղ դեղում խաղք ու խայտառակ արիւր մեզ։

Կիկոսը համր ու դանդաղ քայլերով, գլուխը կախ ու մեջքը կորացած՝ Թաղադէուլի առաջն ընկավ, ու չերբ տուն հասավ, թեքվեց դեպի գոմը։

— Ո՛ւր ես կորչում, ո՛ սեասիրտ, տանդ դուռն ել ես կորցրել...

— Ա՛ղջի, դե բո՛լ ա, ինչքան թուք ու մուր տվիր, թող մի տենամ ճշտ վոնց ա, մի շաբաթ ա երեսը տեսել չեմ...—ասաց Կիկոսն ու մտավ գոմը, իշկից կարոտն առնելու...

XIV

Ամառվա սկիզբն եր։ Դաշտերում տեղ-տեղ խոտ եյին հընձում, վոր մի կերպ գոնե՝ յեղած խոտն ապատեն արևի ալավներից, վորոնք անխնա ալրում եյին, խորովում, կանաչ խոտը վոտի վրա հորացնում։ Գարունը ցամաքային եր անցել, իսկ ամառն ել խիստ շոգերով եր սկսվել, սպասվում եր մեծ յերաշտ, վորն սպառնում եր վոչնչացնել գյուղի արտերը։ Չափազանց շոգից գերանդին խոտ ել չեր կտրում. գյուղացիք աշխատում եյին խոտը հնձել առավոտվա ցողի հետ, կամ լուսնյակի լուսով։

Արտերը, վորոնք բարձրացել եյին մոտ յերկու թղաչափ, դեռևս հասկ չգցած դեղնին եյին տալիս։ Հողը ճաքճքել եր, չորացել և մարդկանց վոտներն եր ալրում։ Ամբողջ հուլյսը մի առատ Կիկոսը—?

անձրեւն եր, վորին սպասելուց գլուղացիք հոստահատվել ու վիզ-
ները ծուռ շարունակ դեպի չիբկինք ելին նույն, վորի վրա
շարաթներով ամպի կտոր ել չեր չերեռում: Իսկ ջրովի արտ ունե-
ցողները հերթ ելին նշանակել, վոր կարողանան գոնե մի անգամ
ծարաված ու խաշված արտին ջրի կաթիլ հասցնեն: Ջրի համար
տեղի ունեցող կոիֆները հաճախակի չիբկուլթ ելին դարձել
Իւարից ջուր ելին խլում կամ ջրի կեսը գողանում պարտեղների
ու բանջարանոցների համար: Սնոտիապաշտ պառաֆներն սկսել
եյին մի չսված արշավանք յայեկայի դեմ: Մինչև անգամ գլու-
ղում չերևաց վաղուց մոռացված «նուրի-նուրին» *), վորի դեմ
կռվել սկսեց կոմիերիտմիությունը, խելով «նուրին» և պատառո-
տելով նրա շորերը: Սակայն մեկ-մեկ, սարսափելի շոգին, ելի
լսվում եր գլուղի այս կամ այն խուլ անկյունում «նուրին»
ման ածողների ձայնը.

«Նուրի-նուրին եկել ա,
Աջրա հուրին եկել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր գոտիկ կապել ա:
Ձու բերեք, Թաթին դնենք,
Յուղ բերեք, վարսը քսենք,
Մեր Նուրինի փայլ տվեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք»:

«Նուրին», իհարկե, տնձրե չեր բերում, իսկ շրջանային
բժիշկը և գլուղատնտեսը հաճախ դասախոսություններ ելին կաղ-
մակերպում բնական չիբկութների մասին և ժողովների մեջ
հրահրում այն միտքը, թե անհրաժեշտ ե առու անցկացնել մո-
տակա դետից, վոր հանդն ազատվի հետագայում նման յերաշտ-
ներից: Գլուղում մինչև անգամ կաղմկեց «արխի ֆոնդ» և մի
հանձնաժողով, վոր դիմումներ անի կառավարությանը, աջակցե-
լու համար վոռոգման գործին:

*) Հին ժամանակ գլուղերում սովորություն ե յեղել, վոր յերաշտի ժա-
մանակ մի շերեփի գլուխ փաթաթել են թաշկինակով, կողքից կապել փայտե
ձողիկներ (ձեռներ), հազգրել կարմիր շապիկ, կապել կարմիր գոտի և դռնե-
ղուռ ման ածել, ձու, յուղ և այլ մթերքներ հավաքել մատաղ մորթելու հա-
մար, վոր անձրե գա: Բաժին տվողը սովորաբար մի ամսնով ջուր եր ածում
«նուրինի» գլխին, վորով ուզում եր սսել, թե գլխիդ թող անձրե գա, ջուր
թափվի: «Նուրին» — անձրեարեք ե: Սրա հակառակ, կա և «ձուլին», վորն
«արեարեք» ե:

Մ. Դ.

Կիկոսն, իհարկե, ես տեսակ բաներին չէր խառնւում։ Նա տռնասարակ լուռ եր, չէր խոսում, մեկ-մեկ միայն փնթփնթում եր շողի ու յերաշտի վրա, բայց վախենում եր դռնէ ծածուկ աղոթք անելուց, վոր անձրե գաւ։ Վայ թե տեսնիլին, թե Կիկոսն այսինչ տեղն աղոթք ե արել ու պատժելին. թեև ջինդար Սողոմոնը նրան ասել եր, թե ամեն մարդ ազատ, իրեն համար կարող ե աղոթք տնել, և վոչվոք նրան եդ բանի համար չի պատժել, բայց ել ջինդար Սողոմոնի ասածներին հավատալ կլիներ...

Մի իրիկուն ել, յերբ Կիկոսը հանդիպ տուն դարձաւ, Թաղադէտը նրան հայտնեց, թե ինքն ու իր յեղբայր Ունանը չերկու որ ե ինչ հերթով ջրում են Սումբաթովանց Վանո-բեդից վերցրած հողի արտը, թե «ՄՈՊՐ»-ի բաժինն արդեն ջրել, վերջացրել են, իսկ մնացածի կեսը պետք ե ցերեկով ջրվի, կեսը գիշերով, և ավելացրեց, թե Ունանը գիշերով արդեն ջրելու չե, իսկ առավոտը վաղ Կիկոսը պետք ե դնա, վոր մնացածը ցերեկով ջրի, վերջացնի, ջուրն ուրիշին տալու համար։

Կիկոսը միտք արաւ, միտք ու կնոջը, թե՝

— Են ա մնացածն ել եզուց դո՛ւ ջրի, ելի...

— Եզուց շրջանում ժողով կա ՄՈՊՐ-ի ու ՓՈԿ-ի մասին, յես անպատճառ պետք ա գնամ մեր գեղի կողմից.— կտրուկ հայտնեց Թաղադէտը։

— Դե, թող Ունանը ջրի, ջանը հու դժու չի գալ.— առարկեց Կիկոսը։

— Ունանն եզուց խոտ ա հնձելու, նրա խոտը չորանում, փչանում ա... Քու ջանը հո դժու չի գալ, եդ մի բանն ել դու արա, ելի, են արտի հացիցը դու ուտիլ չի պտէս...

— Ձե, ուտիլ չի պտեմ. են արտի հացը հարամ ա...

— Վճնց թե հարամ ա, ս սեասիրտ. ես երկու տան ումոդն են մի հատիկ արտն ա, դու ասում ես հարամ աս...— զայրացաւ Թաղադէտը։

— Են խալիսի տափը խել եք, վարել, ցանել, թե ինչ ա, կեսը դարկեք գրանիցա*), կեսն ել ով գիդա, թե ինչ անեք, բաս նրանք ինչ պտեն ուտիլ, իսկի վախում է՞ք են վերի կապիտից**)... Են ա, հրեդ ըտհնց բաներ եք անում ե, ինչ չերկիրնք գլխներդ խռով ա կացել, մի պուտ անձրե ելա կաթում չի... Եդ բանի

*) Ուզում ե ասել՝ արտասահման, ակնալ կելով «ՄՈՊՐ»-ին։

**) Կապիտ—կապույտ—ակնարկում ե յերկրին։

միջին արին կա, լես խառնվողը չեմ. դուք գիտաք: Յես
Խուրշուդ-բեգին խոսք եմ տվել, վոր իմ վոտն են տափը կոխի
վոչ—պնդեց Կիկոսը և համառ դիրք բռնելով ներքևի պռոշը
կախեց:

— Ա՛ տղա, հալա հին խելքին էս, ա քու բերողի արքա-
նը*) չորացել էր, քեզ ինձ համար մարդ չեր ծնել. ուզում էս,
եդ փեխնով լիքը կարկաժդ դալումը փթացնել տամ... Սուժբա-
թովանց դարդը քեզ են տվել, հոդս նրանց ոձ խուզող ու ասեղ
մաշկող գլխին կենա. թե՛ մտիցդ ընկել ա, վոր մի խան ցորենի
պարտքը չորս տարի տալով, տալով կարում չինք թե պրծնենք...
Դե, ես ա քեզ ասում եմ. եզուց առավոտ, ծեղին հետ, թե զնա-
ցել չես են արտը ջրել, թե քու ձեռն ու վոտը կապել չտամ,
ոխտն որ ոխտը գիշեր սոված, ծարավ գոմում, դուռն երեսիդ
փակ պահեմ, թող իմ անումը Թաղապետը չըլի, Ալաբաշ**) ըլի...—
բորբոքված ասաց Թաղապետը ու քալիւրն ուղղեց դեպի դուռը:
Կիկոսը կարկուտի տակ ընկածի պես շշմել եր. բայց ուշ-
քի գալով՝ դիմեց կնոջը.

— Եդ հար ես գնում, աղջի:

— Գնում եմ աչքիդ լիսը հանողի կուշտը. հրես գնում եմ
յաչեյկին ասեմ, թե դու կոնստիի ես, վոր գան կաշիդ գլխովդ
հանեն...—սպառնաց Թաղապետը:

— Դե լավ, լավ,—սարսափած վեր թռավ տեղից Կիկոսը.—ես
տանը մարդ ու կնիկ խոսք ու զրից ել չեն կարալ անե՞ս... բան
եր, ասեցի, հու արի վոչ. թող մի խելքս գլուխս հալաքեմ, բալ-
քի քու ասածն ա լավը, յաչեյկեն ինչ բան ունի՝ մարդ ու կնկա
կոռծին խառնվի... Յես վախում եմ զուր տեղը մշակո թին ա-
նեմ, անհախ, անփող, չյուսքի վանո բեզն ասել ա—«Թող վա-
րեն ու ցանեն, տենանք հիվ պտի հնձիլ»...

Թաղապետը նոր բան խմանալով՝ յետ դարձավ ու կրկին
հարձակվեց Կիկոսի վրա.

— Ի՛նչ, ի՛նչ... հիմ ա ասել, վճիտեղ ա ասել, չե՞րք ա ա-
սել...

— Յեսիմ հիմ ա ասել —չքմեղանալով պատասխանեց Կիկո-
սը.—Դու հո գիտաս, վոր յես ել մարդու հետ զրից չեմ անում...
սարին ու քարին ա ասել, ջրին ու փետին... զրից եր, ասեցի,

*) Արգանդ:

**) Ալաբաշ—շան անուն է:

ելի, թէնչ ևս բարակ ծերիցը բռնած դրա հաստը գնում...

— Լավ ա տաւել, ինչ վոր ասել ա... Նրա ասիչը*) խի՞ յա բլբլում, վոր ասում ել ա... դե, թո՛ղ նա քամի դառնա են արտի կողքովն անց կենա, տես թե նրա մոխիրը քամուն ևմ տալի՞, թե չե...

Մարդ ու կնկա զալրույթը կարծես իջել եր: Թագադրուը շարունակ անիծում եր թագավորից սկսած մինչև բեգերը, իսկ Կիկոսը շորերը հանելով փաթաթեց, բարձի տեղ դրեց գլխատակին, վոր քնի, կամաց փնթփնթալով:

— Յարար վոր կնիկն եր ըլել աշխարհիս դատ ու դատաստան կտրողը, մեր հալն թէնչ կըլեր...

XV

Առավոտը վաղ, Կիկոսն եղն առաջն արած գնում եր Խաչի տակի արտը ջրելու, թեև մտքումն ենքան ել համաձայն չեր եդ բանին: Յերբ հասավ խաչին, ճամպան ծռեց ու հեովից անցավ, հակառակ իր սովորության, վորովհետև նա վաղ ժամանակները միշտ ներս եր մտնում քանդված մատուռը, համբուրում խաչքաերը և աղոթում: Նա վախեցավ Ունանից, վորը կարող եր նկատել և խալտառակել նրան:

Տեղ հասավ, եղը կապեց ծառիցը, Ունանին ճամպեց տուն, ջրի հոսանքը փոխեց, ապա յետ դառնալով մեջքը ծառին դեմ արավ, հաց ու պանիրը խուրջինից հանեց ու սկսեց նախաճաշել, միտք անելով աշխարհիս անցուդարձի մասին: Ապա դարձավ մտքը կանգնած իշին, վորը հոնքերը կիտած ու ականջները կախ, կարծես ննջալիս լիներ:

— Է՛հ, դիտի հա՛, եղ ջան... ես ծառիցը քանի-քանի հրեղեն ձի յեն կապել Սոււմբաթովանք, ես իմ նստած տեղն ինչքան քեֆեր հն արել Սոււմբաթովանց բեգերը... Հիմի... հիմի Սոււմբաթովանց հրեղեն ձիու տեղ Կիկոսի եղն ա կապած, Վանդ-բեգի հոր տեղն ել Թոփալանց Կիկոսն ա նստած, վոնց վոր ես մյուս-քի տերը: Աստո՛ծ... մեղա ասածու, կա՛ վոչ, մաշել ա. թագավորին սպանել են, բեգերին ու աղալարներին հենց որն են գցել, վոր շունը ձեռներիցը հաց չի ուտի... Ա՛յ, եղ ջան, հիմի կհավատամ, վոր աշխարհս շուռ ու պարան ա ըլել. քյասիրի լիզուն չերկարի:

*) Ասիչ—ասող—ակնարկում ե լեզվին:

Կիկոսը զրուցցն ընդհատեց, վեր կացավ, ջուրը կրկին փոխեց, ապա դես-դեն մի լավ աչք ածեց, վուր համոզվի, թե մարդ հո չկա, վուր իրեն լսի, ու մոտենալով իշին, աչքերը տրորեց ու շարունակեց իր զրույցը.

— Ե՛շ ջան, բա վոր հիմի ելի ամեն բան փոխվի, թագավորի տեղ մի ուրիշ թագավոր թախտին նստի, ել յետ առաջվա պես պրիստավը, քրիսովն ու աղալարին դան, մեր բանը վճնց կըլի, հը... գլուխս թակիլ չե՞ն, թե չես վոնց եմ ջուռյաթ արել^{*)} Սուլբաթովանց հողը մտե՛լ... Թագազյուլին հու կտոր-կտոր կանեն. ես դիփ նրա սարքած բաներն ա... Հը, եշ ջան, խելքդ լինչ ա կարում ես բանիցը. յես լինչ ջուլար կտամ...

Իսկ եշը միայն պոչն եր շարժում, վոր վրա թափվող ճանճերից աղատվի, վորովհետև արևն արդեն շիկացած չերկաթի պես դաղում եր, իսկ ճանճերը հավաքվելով ստվերի տակ, անխնա կծոտում ելին խեղճ հայվանին:

— Հիմի արի, քեզ մի ուրիշ բան ել ասեմ, եշ ջան: Ես խաչը վոր կա, կարկուտի խաչն ա. թե վոր տարեկան միքսնի մատաղ չմորթվի սրա տակին, գեղի հանգերը կարկուտը կսրբի, կտանի: Ես մի տարուց ավել ա, սրա տակին մատաղ չի մորթվել: Բա վոր սա յիլ կատաղի ու սաղ արտերը կարկտահար անի, տեղը չի՞ եղ անհավատ անորեններե՛ն... Իսկի գիդա՛ս, թե Սուլբաթովանք տարին քանի մատաղ են արել ես խաչի տակի՞ն... հինգը, վեցը: Նրանք խաչի սիրտն են շահել, խաչն ել բարեխոս ա ըլել նրանց արտերի համար. լեն ու բոլ ջուր ա տըվել, վոր ջրեն, կարկուտիցն ել աղատել ա. թե չե ե՞ս ինչ ա, ես ջուլ մ, կասես մկան ցեթ^{**)} ըլի, ենքան բարակ ա. հիմի հախը չի՞, վոր գնամ մի աղոթք անեմ, մատաղ խոստանամ, բալքի ջրերը վարարեն, կարկուտ ել դա վճչ. .

Կիկոսը միքանի քալ արավ դեպի խաչը, բայց մեկ ել մըտածելով, թե կարող ե տեսնող լինի, յետ դարձավ ծառի տակը: Դեսից-դենից քիչ խոտ հավաքեց, վառեց իշիցը մոտիկ, վոր ծուխ անի, ճանճերին քիչ ու ինքը չերկար ու մեկ ձգվեց ստվերի տակ: Ծառ եր քնել, թի գիշ, մին ել հանկարծ վեր թռավ տեղից սարսափահար ու մոտենալով իշին, պաամեց տեսած չերազը.

— Ե՛շ ջան, երազումս տեսա, թե վոնց ես մեր կողքի խա-

^{*)} Համարձակվել:

^{**)} Մեղ:

չը, մի մեծ ու սխալաւ միտուքով մարդ, չեկալ գլխավերևս կանգնեց ու պինդ ձենով վրէժ բղավեց. «Կողքովս անց կենալիս խի՞ ինձ բարի լուս չանցիր. դե, հրես տես քեզ ինչ եմ անում»... Ու դամշին քաշեց, թե գլխիս վրա բերի, վեր թռա... Հմի ի՞նչ ես ասում, եշ ջան, գնամ վոչ սրբի վոտներն ընկնեմ ու քարերը լիզեմ, հը... հու տէ՛նող չկա...

Կիկոսը տարակուսեց, ապա իրեն-իրեն մըթմըթալով, շարժվեց դեպի արևը. — «Կաց հալա մի ջուրը փոխեմ, յետով միտք կանեմ»։ Սակայն վորքան մեծ չեղալ գարմանքը, չերբ արխին մոտենալով նկատեց, վոր ջուր չի դալիս։

— Զմւրս ես ով կտրեց. — շվարած կանգ առալ Կիկոսը չիրկաթե թին ձեռին. գնամ վոչ մի տենամ ես ինչ հարամզադա յա կտրել, գլուխը տապակ անեմ... Ա՛րբ, եշ ջան. արի քեզ ել տանեմ ջուր տամ, ծարաված կըլես...

Ու Կիկոսն իշի կապը քաշած առաջ ընկալ դեպի ջրի աղը։ Դեռ հեռովից եր, վոր Կիկոսը նկատեց Պուրշուդ-բեգին, վորը ջուրը կտրել, արեւ եր քարերի մեջ ու ինքը նստել մոտը, ձիու կապը ձեռին բռնած։ Կիկոսը մի բոպե կանգ առալ. նա մտածում եր, առաջ շարժվի, թե վոչ, յերբ Պուրշուդ-բեգը ձայն տվեց.

— Ա՛րբ, ա՛րբ, մոտիկ արի։

Կիկոսն անվստահ քայլերով առաջ շարժվեց ու թուքը կուլ տալով դիմեց Պուրշուդ-բեգին.

— Բարի որ քեզ, Պուրշուդ-բեգ։

Պուրշուդ-բեգը չպատասխանեց։

— Զուրը դու յես կտրե՞լ, — հարցրեց Կիկոսը։

— Քուռ եմ, տենում չես, վոր չես եմ կտրե՞լ... — դալրացած պատասխանեց Պուրշուդ-բեգը։

— Բա եդ ի՞նչ ես ջրում։

— Արտ։

— Պուրշուդ-բեգ, բա ես դայդի արտ կըլի՞, ես քարերն ու դները...

— Քար ու դե՞ռ... — կատաղած հարձակվեց Պուրշուդ-բեգը. — տո շուն-շան տղա, դու քանի գլխանի չես, վոր Լկիւ ես իմ պապական հողը վարել, ցանել, հիմի չեւ ջրում ես ու իմ արտին ել քար ու դեռ ես ասում... հրես քար ու դեռ շանց կտամ քեզ։

Պուրշուդ-բեգը մի քար վերցրեց ու շարտեց դեպի Կիկոսը, վորը փախալ ու քարից խուսափեց, եշ թողնելով արխի մոպ կանգնած։

— Խուրշուղ-բեգ, — հեռվից ձայն տվեց Կիկոսը. — յես հու կըս-
վի՞ չեմ եկել. դու յի դիրքաս, թե ով ա քու տալիը խլողը, վա-
մողն ու ցանողը, յես ինչ մեղք ունեմ, ինձ ասել են՝ ջրի, յես ել
ջրում եմ. հիմի յեկ դու ասում ես՝ ջրի մի, ել ջրի չեմ ել քար
ու փետ շարտեղի ինչ ա... Բո, բո... Ե՞րբ ես տանում. Ե՞րբ,
դուեց Կիկոսը, տեսնելով, թե ինչպես Խուրշուղ-բեգն իշի կապը
քաշած, տարավ ձիու մոտ:

— Յես քեզ ել շանց կտամ. դե, տղա յես, մոտ արի, տես
գլուխդ քանի տեղից եմ տապակ անում. — հարձակողական դիրք
բռնեց Խուրշուղ-բեգը:

— Աստոծ, չերկիրք, հող ու ջուր, սուրբ ու մասունք, վոր
ես բանումը յես կամ վոչ, մեղք չունեմ. գնա կնկանս հետ կռիվ
արա, եշս ինձ տուր, ել յես ես արտը չեմ գալ. սրանից եկած
հացիցը կտրիլ չեմ. Ե՞րբ ինչ ա արել... Ըհ՛, հրես դեն եմ գցում
ես լապատկեն, ել ջրի չեմ, մենակ թե եշս ինձ տուր. — աղաչա-
կան ձայնով դիմեց Կիկոսն ու ձեռի չերկաթե թին շարտեց:

— Մարդ ու կնիկ ինձ համար դիփ մեկ ա, — գոռաց Խուր-
շուղ-բեգը. — յես եկել եմ ըստեղ, վոր ով պատահի, տեղնուտեղը
սպանեմ. — Այս ասելով Խուրշուղ-բեգը Կիկոսի ելը կապեց մի թը-
փից, ձին նստեց ու քշեց Կիկոսի վրա:

Կիկոսը հազիվ բարձրացավ ծառը: Խուրշուղ բեգը կատա-
ղած ձին քշեց ուղղակի արտի մեջ, մի քանի անգամ դեռ-դեն վա-
ղեցրեց, ջարդեց, տրորեց նոր ջրած արտը, անցավ նաև «ՄՈՊՐ»-ի
բաժինը, ձիու վտտի տակը տվեց ցանքսերն ու յիտ դռնալով
Կիկոսի ելը ձիու առաջն արավ ու հա՛յդե, դեպի գյուղ:

Կիկոսը ծառի վրա նստած, թոխմախով գլխին տվածի պես
շշմել եր ես հանկարծակի անցուղարձից և չեր հասկանում, թե
Խուրշուղ-բեգն ինչու տարավ նրա ելը:

Արևը թեքվում եր սարի լեռեր: Կիկոսը թեև համոզված
եր, վոր վոչվոք չկա ջրի մոտ, վոր Խուրշուղ-բեգն արդեն վա-
ղուց գլուղումն ե, բայց և այնպես չեր համարձակվում ծառից
իջնի ու ջուրն անի արտի մեջ: Նա ծառին թառած իրան-իրան
փնթփնթում եր:

— Շատերն ել ասում են, թե երազը սուտ ա: Ա՛յ, թե
սուտ ա... Համա գլուխս ինչ լավ ազատեցի թակիլոց... Դարը
թամամ կարկաժս ծակիլ պաեր... Վոր ասում եմ՝ ես բա՛ի մեջ
արի կա... Յարաք եշս տարավ, թե ի՞նչ անի... Ասենք եշս տա-
րավ, համա մեծ դոչալուժին արի, վոր գլուխս թակկուց ազա-

տեցի...—մխիթարեց իրեն Կիկոսը: Ապա փափախը վերցնելով՝ քառակուսի գլուխը շոյեց ու սկսեց հետը ղրուցել:

— Գլուխ, ա՛յ գլուխ, ա՛յ իմ գլուխ... ա՛յ իմ պահած ու պաշտած գլուխ, յարար իմ պատիվը հասկանում ես, թե վոնց եմ քեզ լավ պահում... Եսքան թագավոր թախտից ընկավ, աստծու տուն ու տեղը խլեցին, գեղի մեծամեծներին ու բեգերին տուն ու հողեր խլեցին, քյասիքներին վրա փայ արին, եսքան կոխվ, մարդասպանութիւն ելավ, իսկի քեզ դիպչող ելավ, մինը քեզ ձեռ տո՛ւնց... Գլուխ... տենում ես քեզ վոնց եմ պահում... Եսքան տա-րի չա, մինը քեզ թակած կմ, եսքան տարի յա, մինը քեզ ու-շունց տված, բեղամաղ արած կմ իսկի... Ձմեռն ես փափա-ն եմ դնում վրեդ, վոր տաք կենաս, մրսես վոչ, ամառն ել մա-նն անծիրում եմ, վոր հով-հով ապրես. քեզ ել... մի որ ըլել լավ, ուսերիցս քաշ պահեմ. ուր վոր ասել ես, գնացել եմ. չե՛. Ապրում տեղեր եմ ընկել, քարերի ու փետերի վրա չեմ քնել, ձմեռուց, ախ համար ամեն անգամ մի փափուկ բան եմ գտել, ձեռուց, ախ ջանաս: Պատահել ա, չես սաղ տարին ջրի երես ստելով՝ ամեն որ չես քու երեսը լվացել եմ, թամբ՝ Տեսա՞ր, թե խուրչուղ-բեզը ձիւվորված, թակի՞, համա քեզ ծառը հանեցի, վոր ձ վոր քարը շարտեց, վոնց փախա՞, ապել եր, ի՞նչ կըլեր քու ճարը... ա, շուռ ա յեկել: Առաջ ին վատացել, պաշտել, հիմի են ելել: Քու խելքը չի կշատ լավ եմ գիտում: Անն աստծոն ու սատա մածունը սե ա, ասա պահել, պահպանել եւ չեն՝ թակում. հիմի ա մացի, պատիվս պահ Կիկոսն եսպես լի կերպով մթնեց, լով իրեն հարց տվ:

— Ես ա մթն վեր դամ, խուրչու հած-պաշտած գլուխ կի մեջ գցեցիր ի

— Չոռ ու ցանկ, Թաղապետուլը գլուխդ տափը դնի, պրծնի քեզանից Թաղապետուլը ..

Կիկոսը հանկարծակիի չեկավ։ Թաղապետուլի ձայնն երկիրուսը չեր կարողանում հասկանալ ու բացատրել, թե Թաղապետուլը վորտեղից է բուսել իրեն յետևի կողմը, ծառի քամակին։

— Ա՛ղջի Թաղապետուլ, եդ դու յեմ... — ստուգելու համար հարց տվեց Կիկոսը։

— Բա աչքդ հանողն ամ... — զայրացած պատասխանեց Թաղապետուլը։ — Ա՛ տղա, ի՛նչ ես սե բայդուշի պես թառ ըլել եդ ծառի վրա...

— Ասում չես, թե մահից ազատվել եմ, կնիկ, Խուրշուդ-բե-ես րսի՛չ եր մնում սպանի. լավ եր, վոր չես ի եստեդ, թե չե դու. արա, ե՛լ իր, հիմի մեկիդդ*) տանը դրած, վրեն սուգ անելիս կլին... հացիցը կՔֆֆերիմ. Կիկոս, դոչադ ես, գլուխդ լավ ես ազատել, — ես լապատնանը, վորը Թաղապետուլի կողքին կանգնած եր. — դրա կան ձայնով դից, ծառի վրա նստած թարխիֆ ես անում**)... Վեր

— Մարդ ու՛ր արի, ա՛յ աննամուս...

սուդ-բեդը. — յես եկե՛ս կպատմեմ, ու դուք ել կտենաք, թե անսպանեմ. — Այս ասելով ասաց Կիկոսն ու ծառիցն իջավ։ — Իսկի փից, ձին նստեց ու քշեց՝ հնց խեղճ Կիկոս եք դտել, վոր անիծ-

Կիկոսը հազիվ բարձրաց ելավ բանը...

դած ձին քշեց ուղղակի արտի մե՛լուսը ու յերբ հասավ են տեղեցրեց, ջարդեց, տրորեց նոր ջրած ալ քշեց նրա վրա, խկ ինքը բաժինը, ձիու վտտի տակը տվեց ցանի, վորից հետո Խուրշուդ-Կիկոսի եղը ձիու առաջն արավ ու հա՛յ ել են ղգաց, թե ինչպես

Կիկոսը ծառի վրա նստած, թոխմալ վորից Կիկոսն ուշաթափ շշմել եր ես հանկարծակի անցուդարձից լուրի բառերը.

Խուրշուդ-բեդն ինչո՛ւ տարավ նրա եղը։ Գ պահի, հողեմ եդ ան-

Արևը թեքվում եր սարի լեռներ։ Կիկ եր, վոր վոչվոք չկա ջրի մոտ, վոր Խուրշուդուց գլուղումն ե, բաց ե ալնպես չեր հաս իջնի ու ջուրն անի արտի մեջ։ Նա ծառին բարձի համար, ինչ փնթփնթում եր։

— Շատերն ել ասում են, թե երազը տվել, ենքան տար-սողտ ա... Համա գլուխս ինչ լավ ազատեցի թամամ կարեկածս ծակիլ պաեր... Վոր ասում արին կամ... Յարաբ ե՛լ տարավ, թե ի՞նչ անի րավ, համա մեծ ղոչալուժին արի, վոր գլուխ

Կիկոսը վոչվոքի հետ չեր խոսում ալդ մասին, թեև վողջ գլուղը գիտեր: Նա կնկանից խոսվել եր. գիշերներն ել տանը չեր քնում: Քանի ամառն եր, Կիկոսը քնում եր գոմի կտերը, իսկ չերը ձմեռնացավ, նա բարվոք համարեց մտնել գոմը և իր իշի կողքին թեք ընկնել: Շարունակ հոգոց եր քաշում, յերբեմն դիմելով իր միակ գրուցընկեր իշին:


— Ե՛հ, եշ ջան, ես աշխարհումն ել իմ ապրիլը հարամ ա. մարդամիջից ընկա, գլուխս թակել տվի... Բա մարդ ել եսքադ տարի գլուխը պահի, հազար ու մի փորձանքից ազատի, բերի հասցնի են որին, վոր ել մարդ չկն թակում, ու հենց եդ վախտը թակել տա... Բա սա որենք ա... Թակողն ել ով ըլի, մվ, իրան կնիկը... Հե՛յ գիտի հա, Կիկոս, խանչալիդ քարը վեր ընկավ, աստղդ ծոփը ընկավ...

... Ու ապրում ե Կիկոսն իր միակ ցավը սրտում: Ապրում ե առաջվա պես իր իշից անբաժան, ու չերկար մտածելուց, ախ ու վախ քաշելուց յերբեմն մխիթարում ե իրեն, ասելով՝


— Բալքի լափն ես ա՞...



5m.



326



ՀԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0026973

3260